ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 5

Փոխհարաբերությունները պետբյուջեի հետ 10

Արտաքին հատված 13

Դրամավարկային քաղաքականություն 16

Ֆինանսական շուկա 25

ՀՀ բանկային համակարգի զարգացման
հիմնական միտումները 30

Վճարահաշվարկային հարաբերություններ 34

Մակրոտնտեսական ցուցանիշները
2002 թ. հունվար - հունիսին 39

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 47

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մարգսյան
«Փի-ստար» մոդելի միջոցով սղաճի վարքագծի
վերլուծությունը ՀՀ-ում 51

Ա. Մկրտչյան
Բանկերի ներգրաված միջոցները և վարկային
ներդրումները՝ ըստ հանրապետության մարզերի 59

Կ. Միքայելյան
Հայաստանի վճարային հաշվեկշիռը
2001 թվականին 89

Մակրոտնտեսական իրավիճակը

2002 թվականի երկրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունն ավելի առաջանցիկ էր, քան առաջին եռամսյակում. առաջին եռամսյակում գրանցված 7.4% տնտեսական աճը կիսամյակի արդյունքներով վերաճեց 10.1[1]%-ի: Չնայած գրանցված բարձր տնտեսական աճին՝ այդուհանդերձ փաստացի մակարդակը ծրագրային ցուցանիշը զիջեց 3.1 տոկոսային կետով:


Կիսամյակի արդյունքներով՝ տնտեսական աճին էապես նպաստել է արդյունաբերության ճյուղը: Իսկ ծրագրվածի համեմատ տնտեսական աճի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված էր ծրագրվածի համեմատ ամբողջական պահանջարկի ցածր մակարդակով:

Ամբողջական պահանջարկի և առաջարկի նման զարգացումների արդյունքում, այնուամենայնիվ, կիսամյակի միջին սղաճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համընկել է ծրագրով նախատեսված ցուցանիշին՝ 1.7%, իսկ ժամանակահատվածի վերջի սղաճը կազմել է 4.6%՝ ծրագրված 2.6%-ի փոխարեն: Ծրագրվածի համեմատ սղաճի փաստացի մակարդակի գերազանցումը հիմնականում գյուղատնտեսական ապրանքների սեզոնային գների աճի, ինչպես նաև անվանական փոխարժեքի կարճաժամկետ արժեզրկման արդյունք էր:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ըստ դրամավարկային ծրագրի՝ առաջին կիսամյակում ակնկալվում էր ամբողջական պահանջարկի 14%-ով աճ[2], պայմանավորված այն հանգամանքով, որ Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված տոնակատարություններ ազդեցությունը պետք է փոխանցվեր 2002 թվական՝ ընդլայնված արտադրական ներուժի և եկամուտների աճի միջոցով: Ընդ որում, 2002 թվականին ակնկալվող զգալի ֆինանսական ներհոսքը նույնպես պետք է խթաներ տնտեսության ակտիվությունը:

Այնուհանդերձ, ամբողջական պահանջարկի աճը տարվա առաջին կեսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 9.4%: Ծրագրվածի համեմատ ցածր ցուցանիշի ձևավորման վրա էական ազդեցություն է ունեցել տարվա առաջին եռամսյակում ՕԻԳ-երի և Լինսի հիմնադրամից ակնկալվող միջոցների թերի ստացումը, որը ինչ-որ չափով նաև մասնավոր սպառման ցածր մակարդակի ձևավորման պատճառ հանդիսացավ[3]:



[1] *Կիսամյակային փաստացի ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-հունիսին» պարբերականն է:*

[2] *Տեքստում ներառված ամբողջական պահանջարկի բաղադրատարրերի վերաբերյալ կիսամյակային տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

[3] *Առաջին եռամսյակում մասնավոր սպառման ծրագրի համեմատ ցածր մակարդակի ձևավորման պատճառները նշվել են ՀՀ ԿԲ առաջին եռամսյակի «Բանբեր» պարբերականում:*

ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՈՒՄԸ 2002 թվականի առաջին կիսամյակում ցածր էր ծրագրված մակարդակից (5.8%՝ ծրագրված 9.4%-ի փոխարեն)՝ հիմնականում պայմանավորված, ինչպես արդեն նշվել է, առաջին եռամսյակի համար ծրագրված ցուցանիշից էական շեղումով: Երկրորդ եռամսյակում արդեն նկատվել է մասնավոր սպառման զգալի աշխուժացում (փաստացի աճը, նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ, գերազանցել է սպասված մակարդակը 1.5%-ով): Մասնավոր սպառման աճը հիմնականում բացատրվում է երկրորդ եռամսյակում եկամուտների առավել հավասարաչափ բաշխում ապահովող ճյուղերում (մասնավորապես՝ կապիտալ շինարարությունում) թողարկման ծավալների աճով և առաջին եռամսյակի համեմատ, սեզոնային համեմատական ակտիվությամբ: Փաստորեն, երկրորդ եռամսյակի սպառման բարձր աճը ինչ-որ չափով չեզոքացրել է առաջին եռամսյակի սպառման բացասական ազդեցությունը կիսամյակի ընթացքում ձևավորված գների մակարդակի վրա:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ)

%

Ցուցանիշներ	2002 թ. 1-ին եռամսյակի նկատմամբ փաստացի*	2002 թ. 1-ին եռամսյակի նկատմամբ ծրագրային	2001 թ. 1-ին կիսամյակի նկատմամբ փաստացի*	2001 թ. 1-ին կիսամյակի նկատմամբ ծրագրային
Իրական ՀՆԱ	9.0	5.2	10.1	13.2
Ներքին պահանջարկ	11.1	4.0	6.1	11.7
Սպառում	8.8	2.1	4.8	8.7
Պետական	35.1	2.3	-10.5	-1.4
Մասնավոր	7.5	2.1	5.8	9.4
Կապիտալ ներդրումներ	28.3	15.9	15.6	33.5
Պետական	83.6	38.7	40.8	165.4
Մասնավոր	17.3	7.0	10.5	9.1
Ներմուծում	0.5	3.8	12.3	5.9
Արտահանում	-1.2	12.3	28.9	7.9

** Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների*

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ցուցանիշը, ըստ կիսամյակի արդյունքների, աճել է 15.6%-ով՝ ծրագրված 33.5%-ի փոխարեն: Համախառն ներդրումների փաստացի ցուցանիշի՝ ծրագրով նախատեսվածից այդ չափով շեղումը հիմնականում բացատրվում է պետական հատվածի կապիտալ ծախսերի թերի կատարմամբ թե՛ առաջին և թե՛ երկրորդ եռամսյակներում (ծրագրված 39.3 մլրդ դրամի փոխարեն փաստացին կազմել է 23.2 մլրդ դրամ): Վերջինս իր հերթին բացատրվում է դրամավարկային ծրագրով նախատեսված՝ Լինսի հիմնադրամի կողմից տրամադրվող և ՕԻԳ-երի այլ միջոցների թերի ստացմամբ: Նշված ժամանակահատվածում մասնավոր հատվածի կողմից կատարվող ներդրումների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, կազմել է 10.5%՝ ծրագրված 9.1 %-ի փոխարեն:

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ փաստացի ծավալները առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10.5 %-ով՝ ծրագրված 1.4% նվազման փոխարեն: Պատճառը առաջին եռամսյակում պետական ծախսերի՝ դրամավարկային ծրագրով նախատեսվածի համեմատ փաստացի թերի կատարումն էր[4]:

Մյուս կողմից, պետական սպառման նվազման ծրագրավորումը և փաստացի ձևավորումը տարվա առաջին կեսին բացատրվում է այն հանգամանքով, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում բյուջեի կողմից ստացվել է 14.5 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով կառուցվածքային բարեփոխումների վարկ, որն ուղղվել է սպառման գծով ծախսերի կատարմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ առաջին կիսամյակում, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ, գրանցվել է զուտ արտահանման 6.4%-ով իրական աճ՝ ծրագրված 3.8%-ով նվազման փոխարեն: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ չնայած ապրանքների և ծառայությունների ներմուծման փաստացի իրական աճը գերազանցել է ծրագրված ցուցանիշը (ծրագրված 5.9% աճի փոխարեն փաստացին կազմել է 12.3%), միևնույն ժամանակ ծրագրվածից ավել է եղել նաև ապրանքների և ծառայությունների արտահանման իրական աճը՝ 28.9%՝ 7.9%-ի փոխարեն:

Արտահանման և ներմուծման նման իրական աճերը հիմնականում պայմանավորված էին թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների հումքի ներմուծման և դրանցից պատրաստված արտադրանքի արտահանման աճով: Փաստորեն, կիսամյակի ընթացքում ներմուծման բարձր մակարդակի համեմատ սպառման ցածր մակարդակը պայմանավորված էր վերոնշյալ գործոնով:

[4] Առաջին եռամսյակում նախատեսվել էր կառուցվածքային բարեփոխումների վարկի 14.5 մլն ԱՄՆ դոլար գումարի ստացում և դրա հաշվին՝ նախորդ տարիների ներքին ծախսերի գծով առաջացած պարտքերի մարում: Սակայն փաստացի ստացված վարկի գումարի մեծ մասը (8.1 մլրդ դրամից մոտ 5 մլրդ դրամը) ներքին ծախսեր կատարելու փոխարեն ձևակերպվել է քվազի-ֆիսկալ հատվածին վարկ, իսկ վերջինս այդ գումարն ուղղել է արտաքին պարտավորությունների մարմանը:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ[5]

Համախառն ներքին արդյունքի 10.1%-ով իրական աճը 2002 թվականի առաջին կիսամյակում հիմնականում տեղի է ունեցել արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտների հաշվին, որոնք իրական աճին նպաստել են համապատասխանաբար 3.2, 2.3 և 2.8 տոկոսային կետով: 1.7 տոկոսային կետով աճն ապահովվել է ապրանքների և ներմուծման զուտ հարկերի (հանած լրահատկացումները) հաշվին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. Ճյուղում դեռևս տարեսկզբին արձանագրված աճի միտումները դրսևորվել են նաև երկրորդ եռամսյակում. կիսամյակի արդյունքներով՝ իրական աճը կազմել է 12.1% (առանց էներգահամակարգի՝ 22.5%)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.7% իրական աճի փոխարեն:

Նման միտում, այն է՝ արդյունաբերության ճյուղի աճի տեմպի գերազանցումը ՀՆԱ իրական աճի տեմպը, նկատվել է նաև 2000 թվականին, ինչը ՀՆԱ աճի կառուցվածքում լուրջ տեղաշարժ է, և ակնկալվում է, որ կպահպանվի առաջիկա տարիներին:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրության ցուցանիշները հունվար-հունիսին (%)

Արդյունաբերության ճյուղ	տեսակարար կշիռ*		իրական աճ (+) / նվազում (-)**	
	2001	2002	2001	2002
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	31.1	27.4	-9.4	-13.3
Հանքագործական արդյունաբերություն	7.2	7.6	36.5	2.0
Մշակող արդյունաբերություն, որից՝	61.7	65.2	6.6	24.7
սննդի արդյունաբերություն	35.9	36.5	12.7	3.7
մետաղագործական արդյունաբերություն	7.1	10.0	43.9	23.8
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	4.5	5.7	-26.4	142.9
քիմիական արդյունաբերություն	3.1	1.4	6.9	-57.7
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.6	1.2	30.5	-24.7
Ամբողջ արդյունաբերություն	**100**	**100**	**2.7**	**12.1**

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ:*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Կիսամյակի ընթացքում գյուղատնտեսության ոլորտի զարգացումները էապես ազդել են թե՛ ամբողջական առաջարկի, թե՛ գների վրա:

Չնայած առաջին եռամսյակը բավականին հաջող ամփոփվեց ճյուղի համար (թողարկված արտադրանքի իրական աճը կազմել էր 5.3%), այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով պայմանավորված, գարնանացանի աշխատանքները առաջին հինգ ամիսների արդյունքում կազմել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված աշխատանքների 66.3%-ը, և կիսամյակի կտրվածքով ընդհանուր իրական աճը կազմել է ընդամենը 0.5%: Գյուղատնտեսական արտադրանքի թողարկման ծավալների ցածր մակարդակը հանգեցրել է նաև գյուղատնտեսական ապրանքների սեզոնային բարձր գների ձևավորմանը, որն իր հերթին արտահայտվել է սղաճի ցուցանիշում:

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ իրական ծավալների աճը կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 25.4%: Շինարարությունը հիմնականում իրականացվել է բնակարանային տնտեսություններում և տրանսպորտի ու կապի ոլորտում, որոնց մասնաբաժինները ընդհանուր շինարարության մեջ համապատասխանաբար կազմել են՝ 31.5% և 19.5%: Հաշվի առնելով այս ոլորտում առկա ծրագրերը՝ աճի բարձր տեմպերը կպահպանվեն ամբողջ տարվա ընթացքում, չնայած նախորդ տարին ևս աչքի է ընկել բարձր աճի ցուցանիշով:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 2002 թ. առաջին եռամսյակում արձանագրվել էր բեռնափոխադրումների ծավալի նշանակալի՝ 41.1%-ով աճ, այդ տեմպերը պահպանվել են նաև երկրորդ եռամսյակի ընթացքում, և կիսամյակի արդյունքներով՝ բեռնափոխադրումների ֆիզիկական ծավալների աճը կազմել է 38.7%:

Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը կիսամյակի ընթացքում ավելացել է 12.9%-ով, այդ թվում՝ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների աճը կազմել է 14.2%: Հատկանշական է, որ անցած տարվա նույն ժամանակահատվածում ևս արձանագրվել էր մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների համանման աճ (14%):

---

[5] «Համախառն առաջարկ» բաժնի 2002 թ. վերաբերող ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-հունիսին» պարբերականն է: Իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին կիսամյակի համար սահմանվել էին սղաճի միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ ծրագրային ցուցանիշների, համապատասխանաբար՝ 1.7 % և 2.6% մակարդակներ:

Փաստացի արդյունքներով՝ ինչպես արդեն նշվել է, տարվա առաջին կեսի միջին սղաճը համընկել է ծրագրված մակարդակին, իսկ ժամանակահատվածի վերջի դրությամբ փաստացի սղաճը կազմել է 4.6%՝ նախորդ տարվա 3.8%-ի փոխարեն: Ընդ որում, եթե 2002 թ. առաջին եռամսյակում ծրագրված 3.1% սղաճի պարագայում փաստացի սղաճը կազմել է 0.9%, ապա երկրորդ եռամսյակի ընթացքում (հունիսը՝ մարտի նկատմամբ) ծրագրված 0.5% դեֆլյացիայի փոխարեն արձանագրվել է 3.7% սղաճ:

Տարվա առաջին կեսին սղաճի առաջարկի գործոնները դրսևորել են հետևյալ վարքագծերը. զուտ անուղղակի հարկերի կշիռը ՀՆԱ-ում գերազանցել է ծրագրված մակարդակը 8.4%-ով և կազմել 9.4%: Միևնույն ժամանակ, միջին փոխարժեքի արժեզրկումը (նախորդ տարվա համեմատ) կազմել է 2.9%՝ ծրագրված 0.2%-ի փոխարեն: Արդյունքում՝ նշված գործոնների ազդեցությունը գների վրա նախատեսվածից ավելի է եղել:


ՍԳԻ կառուցվածքի երեք հիմնական ապրանքախմբերի՝ պարենային, ոչ պարենային և վճարովի ծառայությունների գծով նույնպես գրանցվել է սղաճ:

2002 թ. *(2001 թ. դեկտ. = 100)*	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	1-ին կիսամյակ
ՍԳԻ	102.2	101.5	100.9	103.4	105.2	104.6	104.6
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.3	102.3	101.3	104.8	107.1	106.2	106.2
Ոչ պարենային ապրանքներ	99.7	99.5	99.4	100.1	100.5	100.6	100.6
Վճարովի ծառայություններ	100	100	100.4	100.6	100.9	101.5	101.5

Կիսամյակի սղաճի ցուցանիշի վրա մեծ ազդեցություն է ունեցել պարենային ապրանքների գների աճը՝ 8.2%, որը նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ ամենաբարձրն է եղել: Պարենային ապրանքների գների՝ առաջին եռամսյակում նկատված աճը շարունակվել է նաև ապրիլ - մայիս ամիսներին, որի ընթացքում արձանագրվել է 6.5% ընդհանուր սղաճ: Եվ միայն հունիսին նկատվել է այս ապրանքախմբի գների 1.0%-ով նվազում՝ հիմնականում բանջարեղենի և կարտոֆիլի (11.4%), ձկնամթերքի (10.7%) և ձվի (6.9%) գների նկատելի նվազմամբ պայմանավորված:

Ոչ պարենային ապրանքների շուկայում 2002 թ. հունիսին արձանագրված 0.6% սղաճը (նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) 0.4 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված էր նույն ժամանակահատվածում բենզինի գների 5.9% աճով:

Ծառայությունների ոլորտում 2002 թ. հունիսին, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, սղաճը կազմել է 1.5%: Վերջինիս վրա ազդեցություն է ունեցել կապի ծառայությունների սակագների 12.8%-ով աճը, ինչպես նաև մշակույթի և հանգստի կազմակերպման ծառայությունների գների՝ համապատասխանաբար 19% և 10% աճը:




Ինչպես ցույց են տալիս բնականոն սղաճի հաշվարկները, տարվա առաջին կեսին գրանցված (ժամանակահատվածի վերջի դրությամբ) 4.6% սղաճի պատճառը սեզոնային գյուղատնտեսական ապրանքների, ինչպես նաև պետության կողմից կարգավորվող գների աճն էր: Հաշվետու ժամանակահատվածում

սեզոնային գյուղատնտեսական ապրանքների և պետության կողմից կարգավորվող գների աճերը պայմանավորել են նշված սղաճի՝ համապատասխանաբար 4.57% և 0.18% տոկոսային կետերը, իսկ բնականոն սղաճը՝ -0.14% տոկոսային կետը:

2002 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ծյուղերի գների փոփոխության արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը 1.1 տոկոսային կետով գերազանցել է միջին սղաճի ցուցանիշը և կազմել 2.8%: Դրան նպաստել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի 3.1%-ով, ինչպես նաև բեռնափոխադրումների սակագների և գյուղմթերքների իրացման գների ինդեքսների աճը՝ համապատասխանաբար 3.5% և 5.0%-ով:

ՀՀ մարզերում կատարված դիտարկումների համաձայն՝ 2002 թվականին ամենաբարձր սղաճը արձանագրվել է Մարտունիում՝ 7.9%, իսկ ամենացածրը՝ Թալինում՝ 2.5%: Երևանում սղաճը կազմել է 4.2%:

Գների փոփոխություններն ըստ տնտեսության առանձին ճյուղերի 2000 - 2002 թթ. առաջին կիսամյակներում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)




ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱ

Չնայած 2002 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արձանագրված տնտեսական ակտիվության աճին՝ աշխատուժի շուկայում էական տեղաշարժեր չեն նկատվել: Պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակը (գործազուրկների թվաքանակը հարաբերած տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին) պահպանվել է 9.6%-ի շրջանակներում, սակայն 0.9 տոկոսային կետով նվազել է նախորդ տարվա հունիսի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում զբաղվածների միջին անվանական աշխատավարձը, նախորդ տարվա հունվար-հունիս ամիսների համեմատ, աճել է 10.4%-ով և կազմել 25111 դրամ: Միևնույն ժամանակ, 2002 թվականի հունվար-հունիս ամիսներին աշխատանքի տեղավորման միջին տևողությունը կազմել է 14.8 ամիս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել 0.7 ամսով:

Կապված աշխատուժի շուկայի սեզոնային դրսևորումների հետ, որոշակի տեղաշարժեր են նկատվել նաև գործատուների կողմից պաշտոնապես ներկայացվող աշխատուժի պահանջարկի կառուցվածքում: Այսպես՝ ամենամեծ տեսակարար կշիռը աշխատուժի ընդհանուր կառուցվածքում բաժին է ընկնում բանվորական մասնագիտությունների պահանջարկին՝ 79.0%, իսկ ամենացածրը՝ տնտեսագետ և իրավաբան կադրերի պահանջարկին, համապատասխանաբար՝ 1.0% և 0.5%:

2002 թվականի առաջին կիսամյակի հարկաբյուջետային քաղաքականությունն առանձնացել է հարկերի հավաքագրման գործընթացում արձանագրված դրական արդյունքներով, որի պայմաններում ապահովվել է կիսամյակի համար նախատեսված հարկերի ցուցանիշը: Հարկերը կազմել են տարեկան ծրագրվածի 45.8%-ը[1]՝ պահպանելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված համամասնությունը: Սակայն հարկերի հավաքագրումը չի ուղեկցվել պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների նախատեսված ծավալների ստացմամբ, և արդյունքում՝ բյուջեի ծախսերի և պակասուրդի ցուցանիշները շեղվել են ծրագրվածից: Վերը նշվածով պայմանավորված՝ առաջին կիսամյակում ձևավորվել է հարկաբյուջետային ազդակների –2.1% զսպողական ցուցանիշ՝ ծրագրված չեզոք ազդեցության փոխարեն[2]: Ընդ որում, եկամուտների ազդեցությունն ընդլայնողական էր՝ 0.4%՝ ծրագրված 2.5%-ի փոխարեն, իսկ ծախսային քաղաքականությանը՝ զսպողական (-2.5%)՝ ծրագրված մակարդակին համապատասխան: Չնայած հարկաբյուջետային ազդակների զսպողական ցուցանիշների ձևավորմանը, պետք է ասել, որ կիսամյակի ընթացքում հարկերի ծրագրված մակարդակի ապահովումը ուղեկցվել է հարկման բազայի ընդլայնմամբ (ստվերային հատվածի կրճատմամբ), որը, բնականաբար, չէր կարող խթանիչ ազդեցություն չունենալ սղաճի ձևավորման վրա:


2002 թ. առաջին կիսամյակի հարկաբյուջետային ազդակների ծրագրային և փաստացի ցուցանիշները



Հատկանշական է, որ առաջին կիսամյակում և, մասնավորապես՝ երկրորդ եռամսյակում, գերակատարվել է պետբյուջեի՝ «ընդհանուր եկամուտներ ու դրամաշնորհներ» հոդվածի ծրագրային ցուցանիշը՝ պահպանելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված միտումները: Այսպես, երկրորդ եռամսյակի ընթացքում նշված ցուցանիշի փաստացի մակարդակը կազմել է ծրագրվածի 109.1%-ը: Ընդ որում, հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ծրագիրը կատարվել է 101.4%-ով (ծրագրային 48494 մլն դրամի փոխարեն հավաքագրվել է 49192 մլն դրամի եկամուտ), իսկ ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը կազմել են եռամսյակային ծրագրի 242.4%-ը: Վերջինս պայմանավորված էր ԿԲ կողմից լրացուցիչ՝ 2.0 մլրդ դրամ շահույթի փոխանցումով, որը նախատեսված չէր եռամսյակի ծրագրով:


[1] Հաշվետվությունում օգտագործված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ ներկայացված՝ պետբյուջեի 2002 թ. առաջին և երկրորդ եռամսյակների նախնական փաստացի և կառավարության թիվ 172 որոշմամբ հաստատված 2002թ. եռամսյակային համամասնությունները:

[2] Ազդակների հաշվարկման մեթոդները ներկայացված են ՀՀ 2000 թ. ՂԲԾ-ի հավելված 3-ում: Ազդակների հաշվարկներում օգտագործված են 2002 թ. ՂԲԾ-ի պետական հատվածի համախմբված բյուջեի ծրագրային և ճշգրտված ցուցանիշները: Նշենք նաև, որ ազդակների ցուցանիշները հաշվարկված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:



Ընդհանուր առմամբ, երկրորդ եռամսյակում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 28.3 %-ով, այդ թվում՝ հարկերն ու տուրքերը՝ 15.7 %-ով: Առաջին կիսամյակում նշված ցուցանիշների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, համապատասխանաբար կազմել է 14.6% և 14%: Ընդ որում, հարկային եկամուտների կառուցվածքում 11.5%-ով ավելացել են անուղղակի հարկերը. մաքսատուրքը՝ 14.8%-ով, իսկ ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը՝ համապատասխանաբար 0.5%-ով և 17.2%-ով: Վերջինս, մեծամասամբ, ԱԱՀ մասին օրենքի փոփոխության և հարկային վարչարարության բարելավման արդյունք է: Ուղղակի հարկերն աճել են 21.5%-ով, և ընդհանուր հարկային եկամուտներում նկատվում է դրանց տեսակարար կշռի ավելացման դրական միտում:

Հարկերի հավաքագրման՝ վերը նշված դրական տեղաշարժերին զուգահեռ, դեռևս շարունակվում է եկամուտների հավաքագրման՝ նախորդ տարիներին բնորոշ սեզոնայնության դրսևորումը: Այսպես, երկրորդ եռամսյակում միջին ամսական հարկային եկամուտների 45%-ը բաժին է ընկել ամսվա վերջին երկու օրվան, իսկ նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել է 41%:





Կիսամյակի արդյունքներով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8%-ով[3], և գերակատարվել է կիսամյակի համար ծրագրված ցուցանիշը: Ընդ որում, գերակատարումը արձանագրվել է հիմնականում լրահատկացումների և տրանսֆերտների գծով, որը

[3] *Սույն հաշվետվությունում օգտագործված՝ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշը ընդգրկում է «նախորդ տարիների պարտքերի մարում» տողով արտացոլված գումարը (մոտ 5.7 մլրդ դրամ), որը բաշխվել է ըստ ծախսերի կատարման համապատասխան ուղղությունների:*

դրսևորվել է ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ եռամսյակի ընթացքում: Արդյունքում, կիսամյակի ընթացիկ ծախսերը կազմել են տարեկան ծրագրի 46.1%-ը: Կապիտալ ծախսերը կազմել են տարեկան ծրագրվածի 26%-ը՝ նախատեսված 49%-ի փոխարեն: Վերջինս հիմնականում պայմանավորվել է արտաքին աղբյուրներից ֆինանսական միջոցների թերի ստացմամբ: Անդրադառնալով երկրորդ եռամսյակին՝ նշենք, որ բյուջեի ծախսերը կազմել են ծրագրված մակարդակի 95 %-ը (ծրագրված 66270 մլն դրամի փոխարեն փաստացի կատարվել է 63260 մլն դրամի ծախս), այդ թվում՝ ընթացիկ ծախսերի կատարողականը կազմել է 104%, կապիտալ ծախսերինը՝ 79%, իսկ զուտ վարկավորմանը՝ 59%:

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում կանխիկի և անկանխիկի հարաբերակցությունը ուղղակի ազդեցություն է ունեցել փողի բազայում կանխիկի վարքագծի վրա:





Առաջին կիսամյակում բյուջեի պակասուրդը կազմել է 5.2 մլրդ դրամ: Ընդ որում, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է 13.0 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրների հաշվին՝ -7.8 մլրդ դրամ:

Անդրադառնալով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացմանը, նշենք, որ հարկերի հավաքագրման՝ վերը նշված անհամաչափության հետևանքով Գանձապետարանի միասնական հաշվի միջոցները դրսևորել են խիստ տատանողական վարքագիծ, ուստի նշված անհամաչափության հարթեցման խնդիրը աստիճանաբար ավելի արդիական է դառնում:


2002 դրամավարկային քաղաքականության ծրագրով 2002 թվականի 1-ին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նախատեսվում էր արտահանման 15.6% և ներմուծման 2.1%-ով աճ, ինչի արդյունքում կանխատեսվում էր առևտրային հաշվեկշռի պակասուրդի 9.8%-ով կրճատում: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների լավացման հաշվին սպասվում էր ընթացիկ հաշվի պակասուրդի 14.2%-ով կրճատում, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում պետք է կազմեր 7.0%:

Իրականում, կիսամյակի ընթացքում ապրանքների արտահանումը (կրեդիտ), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 35.5%-ով (59.1 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 233.4 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը պայմանավորված էր դրանում մեծ տեսակարար կշիռ կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 65.0 մլն ԱՄՆ դոլար և 5.0 մլն ԱՄՆ դոլար աճով: Ընդ որում, արտահանման ծրագրված և փաստացի ցուցանիշների զգալի տարբերության պատճառը առաջին հոդվածում ներառված ապրանքների արտահանման ծավալների զգալի գերազանցումն էր կանխատեսվածից: Մյուս հոդվածների գծով նկատելի էր «Սարքեր և ապարատներ» ու «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճ՝ համապատասխանաբար 4.1 մլն ԱՄՆ դոլար և 2.8 մլն ԱՄՆ դոլար: Միևնույն ժամանակ, որոշ խոշոր ապրանքախմբերի արտահանման ծավալները կրճատվել են, օրինակ՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Պլաստմասսա և դրանցից պատրաստված իրեր» ապանքախմբերինը:

Ներմուծումը (դեբետ) կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 0.6%-ով (2.0 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 348.1 մլն ԱՄՆ դոլար՝ նույնպես «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի, ինչպես նաև «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների՝ համապատասխանաբար 32.8 մլն ԱՄՆ դոլար, 4.2 մլն ԱՄՆ դոլար, 7.2 մլն ԱՄՆ դոլար աճի հաշվին: Ծրագրվածից նկատելի շեղվել են հատկապես «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (շեղումը կազմել է մոտ 30.4 մլն ԱՄՆ դոլար) և «Հանքահումքային մթերքներ» (շեղումը կազմել է 26.3 մլն ԱՄՆ դոլար) հոդվածների փաստացի ցուցանիշները: Իսկ «Պատրաստի սննդի արտադրանք» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են:

Հարկ է նշել, որ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրատված իրեր» ապրանքախմբի՝ արտահանման աճը կազմել է 0.3%, իսկ ներմուծումը կրճատվել է 6.3%-ով:


Ներմուծման նկատմամբ արտահանման զգալի բարձր աճի տեմպի պայմաններում առևտրային հաշվեկշռի պակասուրդը կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, կրճատվել է ավելի քան 36.2%-ով (65.2 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 114.7 մլն ԱՄՆ դոլար:



Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների՝ ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումներ առաջին կիսամյակում չեն արձանագրվել, ինչի արդյունքում վերջինիս պակասուրդը կազմել է 48.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 49.8%-ով (47.8 մլն ԱՄՆ դոլարով): Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 4.5%:


Պահպանելով դեռևս առաջին եռամսյակում նկատված միտումները՝ կիսամյակի ընթացքում կրճատվել են կապիտալ և ֆինանսական հաշվով գրանցված ֆինանսական զուտ հոսքերը ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի կրճատման, այնպես էլ առևտրային բանկերի արտարժութային ակտիվների աճի հետևանքով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ օտարերկրյա ուղղակի ներդրումները կրճատվել են 16.7 մլն դոլարով, իսկ առևտրային բանկերի ԶԱԱ-ը աճել են 27.1 մլն դոլարով: Դրա արդյունքում ներքին շուկայում արտարժույթի առաջարկը կրճատվել է՝ հանգեցնելով արտարժույթի շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմանը:

ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար հաշվարկային միջին եռամսյակային փոխարժեքը



Ամբողջ երկրորդ եռամսյակի ընթացքում, բացառությամբ վերջին տասնօրյակի, դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արժեզրկվել կայուն տեմպերով: Փոխարժեքի արժեզրկումը պայմանավորված էր երկրորդ եռամսյակի ընթացքում դրամավարկային քաղաքականության փոքր-ինչ ընդլայնողական բնույթով՝ կապված առաջին եռամսյակում սղաճի՝ ծրագրվածի համեմատ ավելի ցածր մակարդակով: Մյուս կողմից, բանկային համակարգում առաջացած կարճաժամկետ ֆինանսական խնդիրների հետևանքով նկատվել է արտարժույթի նկատմամբ պահանջարկի կարճաժամկետ աճ: Փողի բազայի կառավարման նպատակով Կենտրոնական բանկը երկրորդ եռամսյակում արտարժութային շուկայում իրականացրել է վաճառքի գործառնություններ՝ զսպելու համար տնտեսությունում իրացվելիության աճը, որը պայմանավորված էր պետական բյուջեի՝ Լինսի հիմնադրամից ստացված միջոցների ծախսմամբ: Կենտրոնական բանկը ապրիլին վաճառել է 1.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ եռամսյակի վերջին տասնօրյակին՝ 3.0 մլն ԱՄՆ դոլար, որից հետո փոխարժեքը սկսել է արժեքավորվել: Արդյունքում՝ կիսամյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 573.54՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արժեզրկվելով 4.0%-ով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը (աճը նշանակում է արժեքավորում)



Կենտրոնական բանկի ՁԱՀ-ը կիսամյակի ընթացքում նվազել են 1.6 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 149.5 մլն ԱՄՆ դոլար[1]: Կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվների 22.4 մլն ԱՄՆ դոլարը կիսամյակի ընթացքում ուղղվել է արտաքին պետական պարտքի սպասարկմանը, միջբանկային արտարժույթի շուկայում Կենտրոնական բանկի կողմից իրականացվել է 15.7 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի վաճառք: Մյուս կողմից, Լինսի հիմնադրամի և այլ դրամաշնորհների ստացման արդյունքում, համախառն պահուստները համալրվել են 22.8 մլն ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2002 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեզրկվել է 8.1%-ով՝ ծրագրով նախատեսված 6.2%-ի փոխարեն: Պատճառը Հայաստանի սղաճի[2] համեմատ (1.8%), գործընկեր երկրների միջին կշռված սղաճի բարձր մակարդակն էր (12.5%) և դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի 2.6%-ով արժեքավորումը: Դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի արժեքավորման տեմպի կրճատումը հիմնականում պայմանավորված էր եվրոյի նկատմամբ դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: 2002 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, դրամը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 4.1%-ով:

[1] Հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով:
[2] Հաշվարկված է 2002 թվականի առաջին կիսամյակի միջինը՝ 2001 թվականի առաջին կիսամյակի միջինի նկատմամբ:

Դրամավարկային քաղաքականության երկրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

Սովորաբար երկրորդ եռամսյակը, որպես առաջին եռամսյակի տնտեսական պասիվությունից գործարար ակտիվությանն անցման ժամանակաշրջան, բնութագրվում է նաև փողի նկատմամբ պահանջարկի զգալի աճի դրսևորումներով, որին համապատասխան էլ ծրագրվել են երկրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ցուցանիշները: Նախատեսվում էր փողի և դրամային զանգվածների՝ համապատասխանաբար 4.8% և 3.3% աճ, որը ապահովելու նպատակով ԿԲ-ն փողի բազայի կառավարումն իրականացնելու էր 4.3%-ով ավելացնելու ուղղությամբ:

Փողի ագրեգատների աճն այս եռամսյակում ևս տեղի էր ունենալու բացառապես արտաքին ֆինանսական ներհոսքի՝ առաջին եռամսյակից տեղափոխված «Պարենային անվտանգության ծրագրի» դրամաշնորհի՝ 2.5 մլրդ դրամի և Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ընդհանուր գումարից շուրջ 9.0 մլրդ դրամի հաշվին: Իրացվելիության այս ավտոնոմ ներարկման մոտ 3.0 մլրդ դրամը չեզոքացվելու էր արտաքին պետական պարտքի սպասարկման հետևանքով, ավելի քան 3.2 մլրդ դրամն ապահովելու էր փողի բազայի ծրագրված եռամսյակային աճը[1], իսկ տարբերությունը պետք է ստերիլացվեր ներքաշող դրամավարկային գործիքների միջոցով: Այդ մասին բանկերին հայտարարվել է ապրիլի 17-ին և հունիսի 6-ին կայացած հանդիպումների ժամանակ: Երկրորդ հանդիպման ժամանակ առավելապես շեշտադրվել է արտարժույթի վաճառքի գործիքին նախապատվություն տալու խնդիրը, քանի որ ակնկալվող հիմնական հոսքերն արտարժույթով էին լինելու:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ի տարբերություն առաջին եռամսյակի, երկրորդում ներքին պահանջարկի աճը խթանող զգալի ֆինանսական ներհոսք է ապահովվել տնտեսություն՝ մասնավորապես 6.7 մլրդ դրամի չափով Լինսի հիմնադրամի դրամաշնորհի և մարտի վերջին Գանձապետարանի միասնական հաշվում կուտակված մոտ 6.0 մլրդ դրամի ծախսման հաշվին, որը հիմնական մասով նպաստել է տնտեսական աճի բարձր ցուցանիշի ձևավորմանը, իսկ որոշ չափով՝ անդրադարձել նաև գների ընդհանուր մակարդակի բարձրացման վրա: Այնուհանդերձ, երկրորդ եռամսյակում ևս արձանագրվել են դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակներից որոշակի շեղումներ, որոնց պատճառները կդիտարկվեն ստորև՝ համապատասխան ենթաբաժիններում:

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2002 թ. ֆինանսական ծրագրի)

Ցուցանիշներ	II եռամսյակ	
	Ծրագրային	*Փաստացի*
Փողի զանգվածի (M2X, ժամ. վերջ) աճի տեմպը, %	4.8	4.1
Փողի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	1.8	2.16
Դրամային զանգվածի (M2, ժամ. վերջ) աճի տեմպը, %	3.3	4
Դրամի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	3.87	4.06
Փողի բազայի (ժամ. վերջ) աճի տեմպը, %	4.3	2.8
Փողի բազայի (ժամ.միջին) աճի տեմպը, %	1.1	-0.7
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	2.3	2.05
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	1.07	1.09

[1] *Ծրագրված եռամսյակային աճը հաշվարկվել էր առաջին եռամսյակի վերջին միասնական հաշվի մնացորդն ընդունելով 1.5 մլրդ, իսկ փողի բազան՝ 76.7 մլրդ դրամ, և հաշվի առնվել, որ, առաջին եռամսյակում գրանցված ցածր սղաճի պարագայում, փողի բազան երկրորդ եռամսյակում կառավարվելու էր տատանման միջակայքի վերին սահմանի՝ 79.9 մլրդ դրամի շրջանում:*

Երկրորդ եռամսյակում, ճիշտ է, փողի զանգվածն աճել է ավելի քան 4.1%-ով, այնուամենայնիվ դեռևս ցածր է ծրագրված մակարդակից, այն դեպքում, երբ դրամային զանգվածն այդ ընթացքում մշտապես մոտ է եղել ծրագրային ցուցանիշին. հունիսի վերջին կազմել է 82.0 մլրդ դրամ՝ ծրագրված 83.2 մլրդ դրամի պարագայում: Սա վկայում է, որ փողի զանգվածի շեղումն ամբողջությամբ պայմանավորված էր արտարժութային ավանդների շարժերով, որոնք, համաձայն դրամավարկային քաղաքականության ծրագրի, եռամսյակի ընթացքում պետք է ավելանային 6.2%-ով, մինչդեռ արձանագրվել է ընդամենը 4.2% աճ: Նշենք, որ բանկային համակարգում արտարժութային ավանդների աճի տեմպերի դանդաղման վրա էապես ազդել են նախորդ եռամսյակից որոշ բանկերում առաջացած կարճաժամկետ ֆինանսական խնդիրները:


Դրանցով պայմանավորված՝ շարունակվել է նաև բանկերում արտարժութային ավանդների ժամկետային կառուցվածքում համամասնությունների փոփոխության՝ տարեսկզբից դիտված միտումը. նվազել են ժամկետային ավանդները՝ մոտ 1.0 %-ով, իսկ ցպահանջը՝ աճել ավելի քան 10.3%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարիներին արտարժութային ավանդների աճն հիմնականում ապահովվել է ժամկետային միջոցների աճի հաշվին: Ընդ որում, թե՛ ցպահանջ և թե՛ ժամկետային արտարժութային ավանդների շարժերը տեղի են ունեցել առավելապես մասնավոր հատվածի հետ փոխհարաբերություններում. այսպես, ցպահանջ ավանդների 3.4 մլրդ դրամով աճն ամբողջությամբ ապահովվել է մասնավոր ձեռնարկություններից և տնային տնտեսություններից ներգրավված միջոցների հաշվին, փոխարենը՝ նույն այդ հատվածի ժամկետային ավանդների մարումների հետևանքով (1.0 մլրդ դրամ) նվազել են ընդհանուր ժամկետային ավանդները:

Նմանատիպ վարքագիծ են ցուցաբերել նաև դրամային ավանդները. եռամսյակի ընթացքում աճը կազմել է մոտ 11.7% կամ 2.3 մլրդ դրամ, որն ամբողջությամբ հետևանք է ցպահանջ ավանդների աճի՝ ժամկետային ավանդների 311 մլն դրամով նվազման պարագայում: Այստեղ ևս գերակշռել են մասնավոր հատվածի հետ իրականացված գործարքները:


Եռամսյակի ընթացքում 1.7 մլրդ դրամով ավելացել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները, որից 1.2 մլրդ դրամը՝ արտարժութային ավանդների հաշվին:

Բանկային համակարգից դուրս կանխիկն աճել է 806 մլն դրամով, որը ևս ցածր ցուցանիշ է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, այդուհանդերձ, ակնկալվող մակարդակից շեղումը մեծ չէ:

Փողի զանգվածի վերոնշյալ շարժերի արդյունքում գրեթե պահպանվել են կառուցվածքային համամասնությունները՝ միայն ի հաշիվ շրջանառությունում գտնվող կանխիկի տեսակարար կշռի նվազման՝ 39%-ից 38%, փոքր - ինչ ավելացել է դրամային ավանդների տեսակարար կշիռը՝ 12.8%-ից հասնելով 14%-ի:




Ի տարբերություն առաջին եռամսյակի, երբ ծրագրվածի համեմատ ՀՆԱ աճի տեմպերի մեծ շեղում էր արձանագրվել, և ձևավորվել էին փողի ու դրամի շրջապտույտի արագության՝ սպասվածից ցածր մակարդակներ, երկրորդ եռամսյակում դրանք արդեն գերազանցել են ծրագրային ցուցանիշները (1.8 և 3.87)՝ համապատասխանաբար կազմելով 2.16 և 4.06: Այս դեպքում արդեն տեղի է ունեցել հակառակ երևույթը՝ ավելի դանդաղել են փողի ագրեգատների աճի տեմպերը: Արդյունքում՝ խախտվել է նաև ծրագրով նախատեսված եռամսյակային նվազող սցենարը, քանի որ երկրորդ եռամսյակի ընթացքում փողի և դրամի շրջապտույտի արագություններն աճել են համապատասխանաբար 9.9% և 11.2%-ով:



ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Փողի առաջարկի տեսանկյունից, երկրորդ եռամսյակում խոշոր աճ է արձանագրվել բանկային համակարգի ԶԱԱ-ի գծով՝ 10.2 մլրդ դրամ, իսկ ԶՆԱ-ը նվազել են 4.2 մլրդ դրամով: Ընդ որում, փոփոխությունների հիմնական մասը բաժին է ընկել առևտրային բանկերի ակտիվներին:

Բանկերի ԶԱԱ-ի խոշոր աճը հիմնականում տեղի է ունեցել արտարժութային ակտիվների աճի հետևանքով, որը գերակայող մասով բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող թղթակցային հաշիվների միջոցների և ոչ ռեզիդենտ ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալների ավելացմանը: Բանկերի արտարժութային միջոցները մոտ 1.5 մլրդ դրամով համալրվել են նաև կանխիկ դրամարկղի հաշվին, ինչը կարելի է բացատրել այդ ժամանակահատվածում բանկերի կողմից առավելապես արտարժույթի առքի գործառնությունների իրականացմամբ: ԿԲ ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում աճել են 2.2 մլրդ դրամով, որը պայմանավորող էական շարժերը կմեկնաբանվեն «Փողի բազա» ենթաբաժնում:



Բանկային համակարգի ԶՆԱ կառուցվածքում 2.5 մլրդ դրամով նվազել են Կառավարության զուտ պարտավորությունները, որը պայմանավորվել է բացառապես ԿԲ հանդեպ պարտավորությունների նվազմամբ (շարժերի մանրամասն նկարագիրը տե՛ս «Փողի բազա» ենթաբաժնում): Առևտրային բանկերի նկատմամբ Կառավարության զուտ պարտավորություններն աճել են 1.1 մլրդ դրամով, որն այս եռամսյակում ևս հիմնականում պայմանավորված է եղել բանկերի կողմից առաջնային շուկայում պետարժեթղթերի ձեռքբերման հաշվին իրենց արժեթղթերի պորտֆելների համալրմամբ:

ԶՆԱ կառուցվածքում հաջորդ խոշոր շարժը տեղի է ունեցել զուտ այլ ակտիվների մասով՝ 3.6 մլրդ դրամի նվազում, որը, եթե հաշվի առնենք ԿԲ զուտ այլ ակտիվների 2.4 մլրդ դրամի աճը, առևտրային բանկերի համար կկազմի 6.0 մլրդ դրամ: Դա հիմնականում հետևանք էր դեբիտորական և կրեդիտորական հաշիվների շարժերի և միջբանկային պահանջների ու պարտավորությունների հաշվապահական


շեղման, որոնք կայուն միտում պարունակող շարժեր չեն և հաջորդ ժամանակահատվածում կարող են փոխվել հակառակ ուղղությամբ: Ջուտ այլ ակտիվների կրճատմանը նպաստել է նաև բանկերի հիմնական միջոցների մոտ 1.0 մլրդ դրամով նվազումը: Միաժամանակ, եռամսյակի ընթացքում բանկերի կապիտալը համալրվել է ավելի քան 4.7 մլրդ դրամով, որի ազդեցությունը զուտ այլ ակտիվների վրա չեզոքացվել է այդ ընթացքում բանկերի կրած գրեթե նույն ծավալի վնասներով:

Բանկային համակարգի հանդեպ տնտեսության պարտավորությունների ցուցանիշը, ճիշտ է, դանդաղ տեմպերով, բայց պահպանել է նախորդ եռամսյակի կեսերից դրսևորված աճի վարքագիծը՝ նախատեսված 5.5%-ի փոխարեն 2.2% կամ 1.9 մլրդ դրամ: Աճը հավասարաչափ է բաշխվել դրամով և արտարժույթով տրամադրված միջոցների միջև և մեծամասամբ ուղղվել է մասնավոր հատվածի ֆինանսավորմանը: Ոչ ռեզիդենտներին տրամադրված արտարժութային վարկերն աճել են ավելի քան 2.5 մլրդ դրամով:

Վարկավորումը ըստ ճյուղերի, ընդհակառակը, նվազել է՝ պայմանավորված արդյունաբերության (ներառյալ էներգետիկան), գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում տրամադրված նոր վարկերի համեմատ մեծ ծավալի մարումներով, ինչպես նաև վարկերի դուրսգրումներով: Ընդ որում, արդյունաբերության ճյուղում դիտվել է բանկերի կողմից վարկավորման 3.3%-ով աճ (առանց էներգետիկայի), որն ամբողջությամբ բաժին է ընկել արտարժութային վարկերին՝ մոտ 900 մլն դրամ: Ի տարբերություն դրա, առևտրի ոլորտում երկրորդ եռամսյակում գերակայել են դրամով վարկավորման ծավալները, այն դեպքում, երբ արտարժութային վարկերի զուտ ծավալը նվազել է ավելի քան 1.4 մլրդ դրամով: Բանկերի միջոցների հաշվին շինարարության ֆինանսավորման ծավալների նվազումը բացատրվում է նրանով, որ ճյուղը հիմնականում ֆինանսավորվել է Լինսի հիմնադրամի դրամաշնորհի միջոցների հաշվին:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Ինչպես առաջին եռամսյակում, երկրորդում ևս փողի և դրամային բազմարկիչները ցուցաբերել են Դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված աճի վարքագիծը: Սակայն ձևավորվել է փողի բազմարկչի՝ ծրագրայինից ցածր մակարդակ, ինչը մեկ անգամ ևս վկայում է փողի զանգվածի դանդաղ աճի տեմպերի մասին, այն դեպքում, երբ փողի բազան կառավարվել է միջին հաշվով միջնագծի շրջանում: Երկրորդ եռամսյակում փողի բազմարկչի միջին եռամսյակային մեծությունը կազմել է 2.09՝ ծրագրային 2.3-ի, իսկ դրամային բազմարկիչը՝ 1.09՝ ծրագրված 1.07-ի փոխարեն: Երկու բազմարկիչներն էլ առաջին եռամսյակի միջին ցուցանիշի նկատմամբ աճել են մոտ 0.03 կետով, որոնց ազդեցության հիմնական գործոններից կարելի է նշել նախորդ եռամսյակի համեմատ ավելցուկ պաշարների նվազումը և ավանդների աճը (և՛ դրամային, և՛ արտարժութային ավանդներն հավասարաչափ ավելացել են):



ՓՈՂԻ ԲԱԶԱ

Ինչպես նշվել է, հաշվի առնելով տնտեսության սեզոնային աշխուժացման և փողի պահանջարկի աճի սպասումները, երկրորդ եռամսյակում ԿԲ-ն նախատեսում էր փողի բազայի ընդլայնմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Ընդ որում, նպատակ ունենալով վերացնել առաջին եռամսյակում սղաճի՝ ծրագրային ցուցանիշից առաջացած շեղումը (2.2 տոկոսային կետով ցածր) և ստացվելիք մեծածավալ արտարժութային միջոցների պայմաններում պահպանել ֆինանսական շուկայում ձևավորված կայուն միտումները՝ ԿԲ-ն ծրագրել էր փողի բազան կառավարել առավելապես տատանման միջակայքի վերին սահմանում:


Սակայն արդեն ապրիլից ձևավորվել էր բոլորովին այլ պատկեր, որը ենթադրում էր հետագա սցենարի որոշակի ճշգրտումներ: Նախ, ապրիլին արձանագրվել էր նախորդ տարիների նույն ժամանակահատվածի՝ հիմնականում դեֆլյացիաների համեմատ զգալի բարձր սղաճ (2.5%)՝ պայմանավորված գյուղատնտեսության դեֆլյացիոն սեզոնի հետաձգմամբ և ապրանքների ցածր առաջարկով, ինչի հետևանքով անցած 4 ամսվա կտրվածքով սղաճը գերազանցում էր կիսամյակի ծրագրային ցուցանիշը, և հետագա սպասումները այդ շեղման խորացման ուղղությամբ էին: Վերջիններս հիմնավորվեցին նաև մայիսի բարձր սղաճով՝ 1.7%, որի ազդեցության հիմնական գործոնը ևս գյուղատնտեսությունն էր:

Միևնույն ժամանակ, փողի բազայի կառավարման առումով եռամսյակի ընթացքում լուրջ խնդիրներ էին առաջացրել Կառավարության կողմից արտաքին ֆինանսական հոսքերի ստացման և ծախսման, արտաքին պարտքի սպասարկման ժամկետների անորոշություններն ու հետաձգումները, ինչպես նաև ամիսների ընթացքում հարկերի հավաքագրման խիստ անհավասարաչափ բաշխվածությունը, որոնց պայմաններում ԿԲ գործիքների կիրառման սցենարի ծրագրումն ու իրագործումը դառնում էր խիստ անարդյունավետ:

Ստեղծված իրավիճակում, նշված բոլոր խնդիրների ու հետագա անելիքների վերաբերյալ ԿԲ-ն հունիսի սկզբին հանդես է եկել հայտարարությամբ և բանկերին հանգամանալից մեկնաբանել ձևավորված դրամավարկային միջավայրը, առկա խնդիրները և հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվելիք քաղաքականության հնարավոր ուղղությունները: Այս համատեքստում բանկերին տեղեկացվել է նաև, որ ԿԲ-ն նախատեսում է Լինսի հիմնադրամի դրամաշնորհի մասնաբաժինների՝ փողի բազայի ծրագրված աճը գերազանցող մասը ստերիլացնել արտարժույթի վաճառքի միջոցով: Միայն այն դեպքում, երբ կիսամյակի արդյունքներով ևս արձանագրվի սղաճի՝ ծրագրային ցուցանիշից զգալի գերազանցում, ԿԲ-ն հնարավոր ճշգրտում է համարում տատանումների միջակայքի ներքին սահմանին մոտ փողի բազայի կառավարումը:


Բանկերին զգուշացվել է նաև, որ ԿԲ-ն մտադիր չէ բյուջեի հարկային քաղաքականության հետևանքով իրացվելիության հնարավոր կտրուկ տատանումների հարթումն իրականացնել բանկերի կարճաժամկետ ֆինանսավորման միջոցով, որը նշանակում է ԿԲ կողմից բյուջեի վարկավորում: Բանկերը նման պարագայում պետք է ԿԲ կողմից կարճաժամկետ իրացվելիության ներարկման ակնկալիքներ չունենան և առավել արդյունավետ կառավարեն իրենց իրացվելիությունը՝ հաշվի առնելով ամեն ամսվա վերջին օրերին արդեն իսկ հստակորեն ձևավորված օրինաչափությունները:

Եռամսյակի փաստացի արդյունքներով՝ փողի բազան ավելացել է շուրջ 2.1 մլրդ դրամով և հունիսի վերջին կազմել 74.4 մլրդ դրամ՝ 2.4 մլրդ դրամով ցածր տատանման միջակայքի ստորին սահմանից: Սակայն, եթե բացառենք այդ շեղումը պայմանավորող հիմնական գործոնը՝ Գանձապետարանի միասնական հաշվի խոշոր մնացորդը, և այն եռամսյակների վերջին ընդունենք 1.5 մլրդ դրամ, ապա փողի բազայի աճը կկազմի 4.4%, իսկ եռամսյակի վերջի մակարդակը՝ 80.2 մլրդ դրամ՝ արդեն փոքր-ինչ բարձր միջակայքի վերին սահմանից:



Այդուհանդերձ, եռամսյակի ընթացքում փողի բազան, միջին օրական հաշվարկով, կառավարվել է միջակայքի միջնագծից ներքև: Դա հիմնականում հետևանք էր իրականացված հարկաբյուջետային քաղաքականության առավել վառ դրսևորված սեզոնայնության՝ հարկերի մեծածավալ հավաքագրում վերջին օրը և հաջորդ ամսում դրանց դանդաղ ծախսում, որը միջին հաշվով 1.5 մլրդ դրամով զսպել է փողի առաջարկը: ԿԲ-ն, ինչպես և հայտարարել էր, չի փորձել հարթել փողի բազայի այդ կտրուկ տատանումները:

ՀՀ ԿԲ ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում ավելացել են ավելի քան 2.2 մլրդ դրամով և հունիսի 30-ի դրությամբ կազմել 84.0 մլրդ դրամ՝ ծրագրված 78.5 մլրդ դրամ նվազագույն ցուցանիշի փոխարեն: Աճի ուղղությամբ հոսքերը ներառել են Լինսի հիմնադրամի և «Պարենային անվտանգության ծրագրի» դրամաշնորհները՝ 9.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով և արտաքին պահուստների կառավարումից ստացված 1.0 մլրդ դրամի եկամուտները: Դրան զուգահեռ, իրականացվել են 2.5 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում (զուտ), շուկայում 2.8 մլրդ դրամի արտարժույթի վաճառք և մոտ 2.7 մլրդ դրամին համարժեք այլ փոխարկումներ: Ընդ որում, համաձայն արված հայտարարության՝ ԿԲ-ն կիրառել է միայն արտարժույթի վաճառքի ներքաշող գործիքը՝ ստերիլացնելով Լինսի հիմնադրամից ստացված դրամաշնորհային միջոցների մոտ կեսը:




ՀՀ ԿԲ ԶՆԱ-ը նվազել են 187 մլն դրամով՝ ծրագրված 3.0 մլրդ դրամ աճի փոխարեն, և եռամսյակի վերջին կազմել –9.6 մլրդ դրամ: ԶՆԱ կառուցվածքում տարեսկզբից յուրահատուկ վարքագիծ է ցուցաբերել ՀՀ ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, որը շարունակվել է նաև երկրորդ եռամսյակում: Դա պայմանավորված էր պետբյուջեի կատարման ընթացքով, մասնավորապես՝ ամիսների ընթացքում հարկերի հավաքագրման առավել անհամաչափ բաշխվածությամբ, որի հետևանքով յուրաքանչյուր ամսվա վերջին օրերին Գանձապետարանի միասնական հաշվում կուտակվել է խոշոր մնացորդ՝ կտրուկ նվազեցնելով ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը և այն դարձնելով բացասական մեծություն: Վերջինիս վրա ազդել են նաև ԿԲ արժեթղթերի պորտֆելից ավելի քան 1.6 մլրդ դրամի մարումները, որոնք, ԿԲ կողմից իրականացվող բացառապես ստերիլացման քաղաքականության պայմաններում, չեն չեզոքացվել նոր գնումներով: Արդյունքում՝ տարեսկզբի 8.3 մլրդ դրամից Կառավարության զուտ պարտավորությունները նվազել են՝ առաջին եռամսյակում 9.1 մլրդ, իսկ երկրորդում՝ 3.6 մլրդ դրամով և հունիսի վերջին կազմել –4.4 մլրդ դրամ՝ զգալի ցածր կիսամյակի ծրագրային ցուցանիշից:


ԶՆԱ կառուցվածքային մյուս երկու տարրերը՝ բանկերի զուտ պարտավորություններն ու զուտ այլ ակտիվները, համապատասխանաբար աճել են 1.0 մլրդ և 2.4 մլրդ դրամով: Վերջինս հիմնականում պայմանավորվել է բյուջե՝ նախորդ տարվա ԿԲ շահույթի մնացորդի փոխանցմամբ, իսկ բանկերի հետ փոխհարաբերություններն առավելապես ունեցել են բանկերի կողմից իրացվելիության կարճաժամկետ խնդիրների կարգավորման բնույթ: Ի տարբերություն առաջին եռամսյակի, երբ իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի պայմաններում դա դրսևորվել է ԿԲ-ում միջոցների ավանդադրման տեսքով, երկրորդ եռամսյակում ավելցուկ իրացվելիությունը նվազել է, և բանկերը հունիսի առաջին կեսին արդեն ԿԲ են դիմել լոմբարդային վարկեր ձեռք բերելու խնդրով՝ մոտ 4.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Եռամսյակի սկզբին մարվել է նախորդ ամսում ներգրավված 800 մլն դրամի ավանդը, ինչպես նաև ընթացքում բանկերին «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) միջոցներից տրամադրվել է 225 մլն դրամ, որի արդյունքում բանկերի զուտ պարտավորությունները 6.5 մլրդ-ից աճել են 7.5 մլրդ դրամի:


Փողի բազայի կառուցվածքում եռամսյակի ընթացքում գրեթե հավասարաչափ՝ 1.1 մլրդ դրամով աճել են ԿԲ-ից դուրս կանխիկն ու թղթակցային հաշվի միջոցները, սակայն, եթե առաջինն ըստ ամիսների աստիճանաբար աճել է, ապա երկրորդն ունեցել է խիստ տատանողական վարքագիծ, որը հիմնականում պայմանավորվել է ավելցուկ պաշարների մակարդակի փոփոխություններով:

Եռամսյակի ընթացքում ավելցուկային իրացվելիության մակարդակը միջին հաշվով կազմել է 1.3 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 2.1 մլրդ դրամի փոխարեն: Ընդ որում, մարտի միջին ամսական 2.3 մլրդ դրամից այն աստիճանաբար նվազելով՝ հունիսին հասել է մինչև 988 մլն դրամի: Չնայած նվազմանը և

ամիսների ընթացքում պահպանած տատանողականությանը՝ կապված բյուջեի կատարման ընթացքի խնդիրների հետ, այնուամենայնիվ բանկերը եռամսյակի ընթացքում տնօրինել են իրացվելիության բավարար մակարդակ, բացառությամբ հունիսի առաջին երկշաբաթվա, երբ բյուջեի կուտակած միջոցների դանդաղ ծախսման հետևանքով բանկերին անհրաժեշտ եղավ լոմբարդային վարկեր ստանալու համար դիմել ԿԲ՝ պարտադիր պահուստավորման նորման չխախտելու համար: Արդյունքն եղավ այն, որ այդ ընթացքում ֆինանսական շուկայում որոշ չափով աճեց նաև պարտատոմսերի եկամտաբերությունը:








ՀՀ ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատող մեթոդները՝ դրամավարկային պայմանների ինդեքսը[2] և դրամավարկային կանոնները[3] կիրառվել են նաև երկրորդ եռամսյակի համար: Ստացված արդյունքներով՝ դրամավարկային պայմանների ինդեքսը

[2] Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:
[3] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է «ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում»՝ առանձին հավելվածով:

նվազել է, ինչը վկայում է իրականացված դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթի մասին, չնայած, ինչպես վերը նշվել է, երկրորդ եռամսյակում դրամավարկային քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվել է տատանման միջակայքի ստորին մասում փողի բազայի կառավարմանը: ԴՊԻ-ի նման վարքագիծը պայմանավորվել է նախորդ եռամսյակի անվանական տոկոսադրույքների և արդյունավետ փոխարժեքի փոփոխությունների համեմատ սղաճի մակարդակի փոփոխության գերազանցմամբ:

Իրականացված դրամավարկային քաղաքականության նույն ուղղվածությունն է ցույց տալիս նաև փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների համադրումը: Փողի բազան, միջին օրական հաշվարկով, տարեսկզբից համաչափ նվազել է, սակայն, եթե առաջին եռամսյակում դեռևս բարձր է եղել կանոնով հաշվարկված մակարդակից և արտահայտել իրականացված դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը, ապա երկրորդում ցածր է եղել հաշվարկված մեծությունից՝ վկայելով արդեն նախատեսվածի համեմատ զսպողական ուղղվածության մասին:

Փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների վարքագիծը




ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ


Չևավորված օրինաչափությունների պարագայում, որպես կանոն, ՀՀ բանկային համակարգի իրավիճակին և բանկային իրացվելիության տատանումներին առաջին հերթին արձագանքում է ֆինանսական շուկայի պետպարտատոմսերի հատվածը, քանի որ ներկայումս դա է համարվում ներդրումային առավել ակտիվ շուկան: Այդ իսկ պատճառով, նախորդ եռամսյակի համեմատ ավելցուկ իրացվելիության նվազումը հիմնականում անդրադարձել է պարտատոմսերի եկամտաբերության վրա, այն դեպքում, երբ շուկայի մյուս հատվածները պահպանել են հարաբերական կայունություն:

Իրացվելիության ավելցուկի նվազումը զուգորդվել է նաև առավելապես երկարաժամկետ պարտատոմսերի թողարկմամբ՝ 9-12-ամսյա և միջին ժամկետ արժեկտրոնային, ինչը հատկապես հունիսին եկամտաբերությունը հասցրել է բավականին բարձր՝ համապատասխանաբար 15.0% և 18.7% մակարդակի՝ մարտի նույն ժամկետայնության 13.0% և 14.7%-ի փոխարեն:

Պետական պարտատոմսերի եկամտաբերության վարքագիծը




Ֆինանսական շուկայի վարկային և ավանդային հատվածներում կայուն միտումները հիմնականում շարունակվել են. արտարժութային միջոցների տոկոսադրույքները գրեթե չեն փոփոխվել՝ պահպանելով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը) 18%-ի շրջանակներում: Փոքր-ինչ նվազել են դրամով ներգրավված ավանդների և աճել՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները, որի հետևանքով դրամային սպրեդն եռամսյակի ընթացքում 13.1%-ից աճել է 18.2%-ի:




Երկրորդ եռամսյակում ևս, ելնելով դրամավարկային քաղաքականության ուղղվածությունից և ֆինանսական շուկայում ձևավորված համեմատաբար կայուն միտումներից, ԿԲ խորհուրդն անփոփոխ է թողել դրամային գործառնությունների տոկոսադրույքները, որը համահունչ էր նաև հետագայում տոկոսադրույքների կայունության վերաբերյալ ԿԲ սպասումներին: Եռամսյակի ընթացքում պահպանվել են ռեպո համաձայնագրերի 13.5%, երկրորդային շուկայում արժեթղթերի առքուվաճառքի 14.5%, լոմբարդային վարկերի 28% և ներգրավվող ավանդների 6% դրույքաչափերը:

2002 թվականի երկրորդ եռամսյակում ֆինանսական շուկայում տոկոսադրույքները, կախված գործիքի տեսակից, դրսևորել են տարբեր վարքագծեր: Մասնավորապես, նվազել են առևտրային բանկերի կողմից ներգրավված ինչպես դրամային (կազմելով 12%), այնպես էլ արտարժույթով ավանդների (8.9%) տոկոսադրույքները:




Նախորդ եռամսյակի համեմատ առևտրային բանկերի կողմից ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքները մնացել են կայուն՝ 27 %-ի շրջանակներում:



Ի տարբերություն ներբանկային շուկայում ձևավորված տոկոսադրույքների՝ ՊՊ առաջնային և երկրորդային շուկաներում տոկոսադրույքների աճի միտում է նկատվել: Երկրորդ եռամսյակի ընթացքում երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները, նախորդ եռամսյակի համեմատությամբ, կրճատվել են ավելի քան 2.7 մլրդ դրամով՝ կազմելով 7.9 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 490 մլն դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը աճել է 0.14 տոկոսով՝ կազմելով 14.02%:


Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալներն ավելացել են 8 մլրդ դրամով՝ կազմելով մոտ 22 մլրդ դրամ: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.6 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ գրեթե անփոփոխ է մնացել՝ կազմելով 11.82%:



Ինչպես եկամտաբերությունների աճի մասին վկայում էր նախորդ եռամսյակի վերջի դրությամբ կորի թեքվածությունը, հաշվետու եռամսյակում ՊՊ երկրորդային շուկայում, ժամանակահատվածի սկզբի համեմատ, գրանցվել է 3-4 տոկոսային կետով եկամտաբերությունների աճ: Սակայն, ելնելով երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ եկամտաբերության սփոթ կորի դրսևորումներից, կարելի է ասել, որ, այլ հավասար պայմաններում, եկամտաբերությունների աճի միտումը, թեև ավելի դանդաղ տեմպերով, կշարունակվի նաև հաջորդ եռամսյակում:


Երկրորդ եռամսյակի ընթացքում նկատվել է պետական արժեթղթերում ռեզիդենտ ոչ բանկ կազմակերպությունների ներդրումների ծավալների աճ: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռն աճել է 1.31 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 4847.3 մլն դրամ: Ինչ վերաբերում է ոչ ռեզիդենտներին, ապա նրանց պատկանող ՊՊ տեսակարար կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով:

Արդյունքում՝ հունիսի 30-ի դրությամբ, ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 91.73%-ը՝ 32743.09 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 8.27%-ը կամ 2950.75 մլն դրամ:




Նախորդ եռամսյակի համեմատությամբ, ՊՊ առաջնային շուկան բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի կրճատմամբ (թողարկման ծավալի 170.82%-ը) և տոկոսադրույքների աճով: Մասնավորապես՝ ապրիլին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 13.74%, մայիսին՝ 14.33%, հունիսին՝ 15.07%:

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի 10 թողարկում՝ 6.6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 700.0 մլն դրամը՝ 92-182 օր շրջանառության ժամկետով, 1.2 մլրդ դրամը՝ 183-273 օր շրջանառության ժամկետով, 4.7 մլրդ դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 3 թողարկում՝ 3.9 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:




Արդյունքում՝ հունիսի 30-ի դրությամբ, շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը նախորդ ժամանակահատվածի համեմատ աճել է 73.834 մլն դրամով՝ կազմելով 35693.834 մլն դրամ:


Փողի բազայի կառավարման խնդիրներով պայմանավորված՝ 2002 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամային շուկայում գործառնություններ չեն իրականացվել:



Ինչպես առաջին եռամսյակում, երկրորդ եռամսյակում ևս ԿԲ-ն ձեռնպահ է մնացել ռեպո գործառնություններ իրականացնելուց՝ անփոփոխ թողնելով տոկոսադրույքները: Ողջ երկրորդ եռամսյակի ընթացքում ռեպո համաձայնագրերի համար պահպանվել է 13.5% տոկոսադրույքը:




Ի տարբերություն նախորդ եռամսյակի, այս եռամսյակի ընթացքում բավական բարձր էր լոմբարդային վարկերի նկատմամբ պահանջարկը: Մասնավորապես՝ երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվել 4430 մլն դրամ վարկի պահանջարկ: Ընդ որում, բանկային համակարգում կարճաժամկետ իրացվելիության խնդիրները կարգավորելու նպատակով, միայն հունիս ամսին ԿԲ է ներկայացվել 4 մլրդ 161 մլն դրամ վարկի պահանջարկ՝ սահմանված 28% եկամտաբերությամբ:




Վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված՝ եռամսյակի ընթացքում բավականին ցածր է եղել ավանդների նկատմամբ պահանջարկը. միայն մեկ բանկ է ներկայացրել 45 մլն դրամ ավանդի պահանջարկ՝ սահմանված տարեկան 6% եկամտաբերությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար հաշվարկային փոխարժեքը 2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում դրսևորել է արժեզրկման միտում, որը, սակայն, հունիս ամսվա երկրորդ կեսին կտրուկ փոփոխվել է՝ դրսևորելով արժեքավորում. եռամսյակի սկիզբի 576.96 դրամ/1 ԱՄՆ դոլար փոխարժեքի փոխարեն հունիսի վերջին կազմել է 577.14 դրամ/1 ԱՄՆ դոլար: Արժեզրկումը, արդյունքում, կազմել է 0.031%, սակայն եռամսյակի ընթացքում էական են եղել տատանումները. նվազագույն փոխարժեքը գրանցվել է 576.96, իսկ առավելագույնը՝ 582.84 դրամ, վարիացիան կազմել է 3.26, միջին շեղումը՝ 1.81 դրամ: Միջբանկային շուկայում եռամսյակի վերջին, եռամսյակի սկզբի համեմատ, գրանցվել է 0.57% արժեքավորում՝ 577.88 դրամից դարձել է 574.61 դրամ (նվազագույն փոխարժեքը՝ 574.61 դրամ, առավելագույնը՝ 583.53 դրամ, վարիացիան՝ 2.89, միջին շեղումը՝ 1.7 դրամ):



Երկրորդ եռամսյակում, պայմանավորված Լինսի հիմնադրամի արտարժութային միջոցների ստացմամբ, ինչպես նաև փողի բազայի ծրագրային ցուցանիշը պահպանելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը միջբանկային շուկայում վաճառել է 4.9 մլն ԱՄՆ դոլար՝ 579.30 դրամ միջին կշռված փոխարժեքով:



Միջբանկային շուկայում եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առքուվաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 315 մլն ԱՄՆ դոլար՝ 158.3 մլն ԱՄՆ դոլար՝ առք և 156.7 մլն ԱՄՆ դոլար՝ վաճառք: Առքի ծավալները, ըստ ամիսների, կազմել են՝ 54.34 մլն, 55.84 մլն և 48.01 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 54.34 մլն, 53.09 մլն և 49.26 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 579.63 դրամ, 581.56 դրամ և 579.41 դրամ միջին կշռված ամսական փոխարժեքներով:

ՀՀ բանկային համակարգի գործունեության վերլուծություն

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2002 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բանկային համակարգի առողջացման և հուսալիության ապահովման քաղաքականությունը: Եռամսյակի հիմնական ցուցանիշները վկայում են բանկային համակարգի կայունության և ազգաբնակչության վստահության վերականգնման միտումների մասին:

2002 թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 28 բանկ՝ 236 մասնաճյուղով: Բանկային գործունեության լիցենզիայի՝ ՀՀ կենտրոնական բանկի նախնական հավանություն է ստացել և ՀՀ կենտրոնական բանկում որպես իրավաբանական անձ է գրանցվել ևս մեկ բանկ:

ՀՀ տարածքում գործող 28 բանկերից ութը գտնվել են հատուկ վերահսկողական դաշտում, այդ թվում նաև «Արդշինբանկ» ԲԲԸ-ը: Վերահսկողական հատուկ դաշտում գործող բանկերը շարունակել են իրենց գործունեությունը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված առողջացման ծրագրերի շրջանակներում: Երկրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են այդ բանկերի ակտիվների հետվերադարձի և ավանդային միջոցների մարման աշխատանքները:

Հարկ է նշել, որ «Արդշինբանկ» ԲԲԸ-ն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր գործառնությունները՝ առանց սահմանափակումների: Ուստի բանկային համակարգի վերլուծությունը իրականացվել է 30.06.2002թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 բանկերի և «Արդշինբանկ» ԲԲԸ-ի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2002 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 6.1%-ով և 30.06.02թ. դրությամբ կազմել է 36.3 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված էր թվով 8 բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամների 2.6 մլրդ դրամով համալրմամբ և եկամուտների պահուստների 0.6 մլրդ դրամով նվազմամբ:

Կանոնադրական հիմնադրամի համալրման 41%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, ինչի արդյունքում ոչ ռեզիդենտների մասնակցությունը բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամում նվազելով 1.2 տոկոսային կետով՝ կազմել է 54.5%: Փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը 30.06.2002 թ. դրությամբ կազմել է 33 մլրդ դրամ:

Նշված բանկերի կանոնադրական հիմնադրամի համալրման հիմնական պատճառը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների նվազագույն սահմանաչափերի ապահովումն էր:

2002 թվականի հունիսի վերջի դրությամբ եկամուտների պահուստների 0.6 մլրդ դրամի նվազումը բացատրվում է նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի նվազումով (1.2 մլրդ դրամով) և ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի աճով (660.3 մլն դրամով):

Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի նվազումը հիմնականում պայմանավորված էր թվով 4 բանկերի կողմից 656.0 մլն դրամի շահաբաժինների վճարումով և մեկ բանկի կողմից 2001 թ. գործունեության արդյունքում ստացված 594.0 մլն դրամ վնասը նախորդ ժամանակաշրջանի շահույթ / վնաս հաշիվ փոխանցմամբ: Իսկ հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի աճը պայմանավորված է երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի գործունեության արդյունքում ստացված 82.8 մլն դրամ շահույթով և մեկ բանկի կողմից նախորդ տարվա վնասը ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ/ վնաս հաշվից հաշվանցման արդյունքում:

Ընդհանուր առմամբ, երկրորդ եռամսյակի ընթացքում շահույթով աշխատել են 13 բանկեր, որոնց շահույթը կազմել է 1.8 մլրդ դրամ: Վնասով աշխատող 8 բանկերի վնասը եռամսյակի ընթացքում կազմել է 1.2 մլրդ դրամ, որի 75%-ը բաժին է ընկել մեկ բանկի գործունեության արդյունքներին: Նշված բանկերի վնասը կապված է եղել նաև վատորակ ակտիվների դուրսգրումների հետ:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները նախորդ եռամսյակի համեմատ փոփոխություն են կրել. ընդհանուր կապիտալի համարժեքությունը նվազել է 4.4 տոկոսային կետով՝

կազմելով 27.3 տոկոս, հիմնական կապիտալի համարժեքությունը նվազել է 4.1 տոկոսային կետով և կազմել է 26.1 տոկոս, որը պայմանավորված էր ռիսկով կշռված ակտիվների, մասնավորապես՝ վարկային ներդրումների աճով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 1.5%-ով և 30.06.2002թ. դրությամբ կազմել 173.1 մլրդ դրամ:


Տնտեսությունից ներգրաված միջոցները նախորդ եռամսյակի համեմատ աճել են 6%-ով՝ պայմանավորված ցպահանջ պարտավորությունների 11.6%-ով, ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 4.7%-ով և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների 0.5%-ով աճով, որոնց ծավալները 30.06.2002թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 68.4, 41.2 և 31.7 մլրդ դրամ:

30.06.2002 թ. դրությամբ տնտեսությունից ներգրաված միջոցների կառուցվածքում դրամային միջոցները կազմել են 21.8%, իսկ արտարժութային միջոցները՝ 78.2%:

Բանկերից ներգրաված միջոցները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել են 24%-ով, ընդ որում՝ բանկերից ներգրաված ավանդները և ստացված վարկերը համապատասխանաբար նվազել են 56% և 32%-ով, իսկ թղթակցային հաշիվների մնացորդներն աճել են 74.8%-ով, որոնց ծավալները 30.06.2002թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար՝ 2.4, 15.6 և 6.4 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 13 բանկերում, որը կազմել է նշված բանկերի պարտավորությունների 7.05%-ը կամ՝ 9.0 մլրդ դրամ: Իսկ 8 բանկերի ընդհանուր պարտավորությունների նվազումը կազմել է նրանց պարտավորությունների 15%-ը կամ՝ 6.7 մլրդ դրամ, որից 5.3 մլրդ դրամը բաժին է ընկել 2 բանկերի կողմից նախկինում ոչ ռեզիդենտ բանկերից ներգրաված միջբանկային ավանդների մարմանը:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ցպահանջ պարտավորություններ, 2. Վարկեր (ավանդներ) բանկերից, 3. Ֆիզ. անձանց ավանդներ, 4. Իրավ. անձանց ավանդներ, 5. Այլ պարտավորություններ, 6. Վճարվելիք տոկոսներ

Ընդհանուր առմամբ, պարտավորությունների կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են գործարար ակտիվության և բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության վերականգնման միտումների մասին, և բանկերը, ցպահանջ պարտավորությունների աճի պայմաններում, հրաժարվել են միջբանկային շուկայի միջոցներից:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ


2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն աճել են 2.1%-ով՝ պայմանավորված դրամական միջոցների 10%, պետական արժեթղթերի՝ 8% և տնտեսության վարկավորման 4% աճով: Դրանց ծավալները 30.06.2002թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 63.4, 24.4 և 73 մլրդ դրամ:

Բանկերում ներդրված ժամկետային ակտիվները, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ, նվազել են 12%-ով, ընդ որում՝ բանկերում ներդրված ավանդները և տրամադրված վարկերը

համապատասխանաբար նվազել են 8% և 86%-ով, դրանց ծավալները 30.06.2002թ. դրությամբ կազմել են, համապատասխանաբար՝ 15.3 մլրդ դրամ և 144 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր ակտիվների աճ է արձանագրվել 14 բանկերում, որը կազմել է նշված բանկերի ակտիվների 7.4%-ը կամ՝ 10.4 մլրդ դրամ: Իսկ 7 բանկերի ընդհանուր պարտավորությունների նվազումը կազմել է նրանց պարտավորությունների 8.5%-ը կամ՝ 6 մլրդ դրամ:


Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթ. հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ
3. Պետական արժեթղթեր
4. Բանկերում տեղաբաշխված ավանդներ (վարկեր)
5. Ավանդներ ԿԲ-ում
6.Վարկեր տնտեսությանը
7. Պահուստաֆոնդ
8. Այլ ակտիվներ
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ
13. Պարտավորություններ հակադարձ ռեպո պայմանագրերի գծով
14. Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով

Վարկային ներդրումները (ներառյալ միջբանկային վարկերը) ավելացել են 4%-ով՝ 30.06.2002թ. դրությամբ կազմելով 88.4 մլրդ դրամ: Նախորդ եռամսյակի համեմատ տնտեսությանը տրված վարկերի ծավալներում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. գյուղատնտեսությանը տրված վարկերն ավելացել են 5%-ով, տրանսպորտի և կապի վարկերը՝ 4%-ով, սպառողական վարկերը՝ 15%-ով, իսկ արդյունաբերությանը տրված վարկերը նվազել են 1%-ով:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Ֆինանսական հատված, 7. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր

Ըստ ռիսկի խմբերի վարկային ներդրումների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 3.5 տոկոսային կետով նվազել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել վարկային ներդրումների 11.8%-ը: Արդյունքում՝ 30.06.02 թ. դրությամբ վար-

կային պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը կազմել են 88.2%, «հսկվող» վարկերը՝ 5%, «ոչ ստանդարտ» վարկերը՝ 4.3%, «կասկածելի» վարկերը՝ 2.5%:

30.06.2002թ. դրությամբ վարկերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմել է վարկային ներդրումների 3.5%-ը՝ նախորդ եռամսյակի 3.4%-ի փոխարեն:

Վարկային ներդրումների աճի արդյունքում 2002թ. երկրորդ եռամսյակում 3.5 տոկոսային կետով աճել է եկամտաբեր ակտիվների ծավալը և կազմել 110 մլրդ դրամ:

Բանկային համակարգի իրացվելիությունը եռամսյակի ընթացքում պահպանվել է բավականին բարձր մակարդակի վրա: Այդ մասին են վկայում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվների ցուցանիշները. 30.06.2002թ. դրությամբ $Ն2^1$-ը կազմել է 40%, իսկ $Ն2^2$-ը՝ 105%՝ պահանջվող 25%-ի և 80%-ի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, վարկային պորտֆելի որակի բարելավումը և բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշռի աճը վկայում են բանկերի կողմից ռիսկերի կառավարման ավելի կշռադատված քաղաքականության իրականացման մասին: Բանկային համակարգի զարգացման ներկա փուլում բանկերը ձգտում են բարձր ռիսկային գործոնների ծավալների սահմանափակմամբ ամրապնդել իրենց կայունությունը և որպես արդյունք՝ բարելավել դիրքերը մրցակիցների նկատմամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Առաջին կիսամյակում բանկային համակարգը ստացել է 21.8 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 22.7 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ 6 ամիսների գործունեության ընթացքում բանկերի վնասը, հարկումից և հաշվարկված շահաբաժինների նվազեցումից հետո, կազմել է 1.1 մլրդ դրամ:

Չնայած նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ տոկոսային եկամուտների կշիռը համախառն եկամուտներում նվազել է 19.1 տոկոսային կետով, 2002թ. առաջին կիսամյակի համար դրանք շարունակում են մնալ բանկերի եկամուտների հիմնական աղբյուրը՝ կազմելով համախառն եկամուտների 45.6%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ տոկոսային եկամուտների տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված էր տոկոսադրույքների նվազմամբ:

Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձման արդյունքում ստացված եկամուտները կազմել են համախառն եկամտի 33.2%-ը: Առաջին եռամսյակի համեմատ, այս ցուցանիշը նվազել է 4.5 տոկոսայի կետով:


Ոչ տոկոսային եկամուտների կշիռը կազմել է 21.1%: Նախորդ եռամսյակի նկատմամբ այս ցուցանիշն աճել է 2.7, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 4 տոկոսային կետով: Ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում, ոչ տոկոսային եկամուտների կազմում գերակշռել են ստացված կոմիսիոն վճարները՝ 64.4%:

Այսպիսով, երկրորդ եռամսյակի ընթացքում շահույթով աշխատել է 13 բանկ, իսկ վնասով՝ 8 բանկ, ինչի արդյունքում բանկային համակարգի շահույթը կազմել է 0.6 մլրդ դրամ: Վնասով աշխատող բանկերի գործունեության արդյունքները հիմնականում պայմանավորված են ակտիվների որակի ճշգրտումներով:

2002 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում, առաջին եռամսյակի համեմատ, ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացվող վճարումներն ավելացել են, մասնավորապես՝ իրականացված դրամական փոխանցումների շրջանառության միջին օրական ծավալը կազմել է մոտ 34109 մլն դրամ (առաջին եռամսյակի համեմատ աճել է 533 մլն դրամով), իսկ քանակը՝ 16714 (առաջին եռամսյակի համեմատ աճել է 261-ով): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված ընդհանուր վճարումների և՛ ծավալը, և՛ քանակը, համապատասխանաբար՝ 4690 մլն դրամով և 9429-ով (օրական կտրվածքով՝ ծավալն աճել է 8 մլն դրամով, քանակը՝ 104-ով):

2002 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների կառուցվածքում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են եռամսյակի ընթացքում կատարված ընդհանուր վճարումների ծավալի 55%-ը (2002 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 7 տոկոսային կետով) և քանակի 78%-ը (2002 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2 տոկոսային կետով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՑԱՆՑ

CBANet միջբանկային համակարգչային ցանցին միացվել են ՀՀ տարածքում գործող բանկերի 3 մասնաճյուղ և CBANet ցանցի բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 229, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը, առևտրային բանկերը (28 գլխամասային բաժանմունքները և 143 մասնաճյուղ), Գանձապետարանը (Կենտրոնական գանձապետարանը և 44 տեղական գանձապետական բաժանմունք), «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, ՀՀ կենտրոնական բանկի 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը, ՀՀ պետական մաքսային կոմիտեն (իր 3 մաքսատներով), Միջպետական բանկը (ք.Մոսկվա), ՀՀ-ում գործող Միջպետական բանկի ներկայացուցչությունը և Հայաստանի բանկերի միությունը:

Արձանագրվել է CBANet միջբանկային համակարգչային ցանցի խափանումների 70 դեպք, որը կազմել է խափանումների հետևանքով չաշխատած բաժանորդների աշխատանքային ժամի 4.6%-ը: Խափանումների պատճառը եղել են կապուղիների հետ կապված հիմնախնդիրները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են CBANet միջբանկային համակարգչային ցանցում նոր տեխնոլոգիաների ներդրման (IP տեխնոլոգիաներ), ինչպես նաև CBANet միջբանկային համակարգչային ցանցի նոր նախագծի ստեղծման աշխատանքները: Կատարվել են նաև Կենտրոնական բանկի պահուստային կենտրոնում տեխնիկածրագրային միջոցների տեղակայման և փորձարկման աշխատանքներ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 196, այդ թվում՝ ընդգրկվել են նաև Կենտրոնական բանկը, ՀՀ գանձապետարանը՝ իր 44 բաժանմունքներով, 28 առևտրային բանկեր՝ իրենց 117 մասնաճյուղերով, ՀՀ կենտրոնական բանկի 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, և Միջպետական բանկը (ք.Մոսկվա): Հաշվետու ժամանակահատվածում վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով՝ համակարգի մասնակիցների կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 79.7%-ը և քանակի 97.5%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում, 2002 թ. առաջին եռամսյակի համեմատ, էլեկտրոնային վճարումների կառուցվածքում (ծավալում՝ 1.52, քանակում՝ 0.87 տոկոսային կետերով) մեծացել է խմբային վճարումների հանձնարարականներով փոխանցումների տեսակարար կշիռը՝ վճարման անհատական հանձնարարականներով փոխանցումների նվազման հաշվին:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2002թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 269-ով՝ կազմելով մոտ 2836, իսկ ծավալն ավելացել է 627 մլն դրամով՝ կազմելով 3314 մլն դրամ: Միաժամանակ, մոտ 122 հազար դրամով աճել է մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, որը կազմել է մոտ 1169 հազար դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են իրականացված վճարումների ծավալի 0.72%-ը, քանակի 0.05%-ը (86 փոխանցում՝ 1540 մլն դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների ծավալի 0.45%-ը և քանակի 0.02%-ը (39 փոխանցում՝ 967 մլն դրամ ծավալով):

Հաղորդագրության տեսակը	1999	2000	2001	I եռ. 01	II եռ. 01	I եռ. 02	II եռ. 02
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	236 657	562 399	478 783	121 684	112 381	107 922	133 373
Քանակ	129 508	323 511	216 563	52 966	48 753	54 296	58 261
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	64 231	112 008	118 767	32 844	30 421	28 589	31 792
Քանակ	198 764	409 858	364 041	87 953	90 447	78 859	87 287
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	11	14	3	11	1	0,01
Քանակ	0	120	27	6	12	3	1
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	251	4 047	682	843	911	1 193
Քանակ	0	6 153	112 721	18 710	26 026	26 163	29 756
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	140	412	134	126	222	200
Քանակ	0	65	526	150	192	145	67
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	2 927	13 194	3 687	3 013	564	33
Քանակ	0	637	749	95	171	130	88
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	24 257	150 299	29 473	37 745	33 742	45 506
Քանակ	0	4 288	19 430	3 836	4 911	4 659	6 041
Ընդամենը							
Գումար (մլն ՀՀ դրամ)	300 888	701 993	765 515	188 507	184 539	171 950	212 097
Քանակ	328 272	744 632	714 057	163 716	170 512	164 255	181 501

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2002 թ. երկրորդ եռամսյակում սկսվել են էլեկտրոնային վճարումների համակարգի տեխնիկածրագրային միջոցների վերափոխումը և աշխատանքային առավել արդյունավետ սխեմաների մշակումը:

ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել 28 առևտրային բանկեր, ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները միջինը կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 5%-ը (նախորդ ժամանակահատվածի համեմատ նվազել է 6 տոկոսային կետով) և քանակի 0.5%-ը (նախորդ ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.4 տոկոսային կետով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական ծավալը, 2002թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել է 159 մլն դրամով և կազմել 520 մլն դրամ, իսկ քանակը պահպանվել է նույն մակարդակի վրա՝ կազմելով 60: Վճարումների ծավալի նվազումը պայմանավորված էր մեկ թղթային փոխանցման միջին ծավալի մոտ 2375 հազ դրամով նվազմամբ, որը կազմել է 8624 մլն դրամ:

ԶՈՒՏ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով զուտ վճարումներ են նախաձեռնել 2 առևտրային բանկեր: Զուտ եղանակով կատարված վճարումները կազմել են նշված համակարգով վճարումներ նախաձեռնած բանկերի ընդհանուր վճարումների ծավալային կառուցվածքի 0.97%-ը և քանակային կառուցվածքի՝ 1.53%: Հիմք ընդունելով վերը նշված ցուցանիշները և հետազոտելով նախորդ եռամսյակներում դրսևորված միտումները՝ նկատելի է, որ էլեկտրոնային վճարումների համակարգի զարգացմանը զուգընթաց, ՀՀ տարածքում գործող բանկերը պակաս նախապատվություն են տալիս զուտ վճարումների համակարգով իրականացվող վճարումներին:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում շահագործման է հանձնվել Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության, մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի շրջանառությունը ապահովող ենթահամակարգը, ինչպես նաև իրականացվել է համակարգից մի շարք հաշվետվությունների ձևավորման խնդիրը: Ներկայումս մշակվում է պետական արժեթղթերով երկրորդային շուկայում գործառնությունների իրականացումն ապահովող ենթահամակարգը:

2002 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 13 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Հաշվետու ժամանակահատվածում համակարգի կողմից ձևավորվել է 435 հանձնարարական՝ 20592 մլն ՀՀ դրամ ծավալով:

Պետական պարտատոմսերի շրջանառության կարգավորման նպատակով շարունակվել է պարտատոմսերի շրջանառության իրավական դաշտը կանոնակարգող փաստաթղթերի մշակումը:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերի գործունեությունը բնութագրող ցուցանիշներ

Ժամանակահատված	Համախառն				Զուտ վճարումների համակարգ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2001 - I եռ.	188507	163716	58991	3883	853	4062	15029	493	263380	172154
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.6	95.1	22.4	2.3	0.3	2.4	5.7	0.3	100	100
2001 – II եռ.	184539	170512	57633	3354	451	2229	18696	551	261319	176646
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.6	96.5	22.1	1.9	0.2	1.3	7.2	0.3	100	100
2001 – III եռ.	185591	190140	44912	3752	897	1606	17960	452	249360	195950
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74.4	97.0	18.0	1.9	0.4	0.8	7.2	0.2	100	100

2001 – IV եռ.	206878	189689	68980	4649	643	1321	12438	261	288939	195920
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.6	96.8	23.9	2.4	0.2	0.7	4.3	0.1	100	100
2002 – I եռ.	171950	164255	43425	3948	235	800	16290	358	231900	169361
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74.1	97.0	18.7	2.3	0.1	0.5	7.0	0.2	100	100
2002 – II եռ.	212097	181501	33255	3856	65	283	20592	435	266009	186075
տեսակարար կշիռը վճարումներում (%)	79.7	97.5	12.5	2.1	0.0	0.2	7.7	0.2	100	100

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգ

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում լրացավ Հայաստանի Հանրապետությունում քարտերով վճարումների միասնական՝ «Արմենիան Քարդ» համակարգի գործունեության մեկ տարին: Համակարգին ներկայումս անդամակցում են ՀՀ տարածքում գործող 11 առևտրային բանկեր և ՀՀ կենտրոնական բանկը: «Արմենիան Քարդ» համակարգը գործում է Երևանում, Էջմիածնում, Ստեփանակերտում, ինչպես նաև Չարենցավանում, Գյումրիում, Արմավիրում և Արտաշատում:

2002 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ քարտային համակարգին անդամակցող 11 առևտրային բանկերի նախաձեռնությամբ «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի կողմից թողարկվել են 8374 «ԱրՔա» քարտեր:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ «ԱրՔա» քարտեր սպասարկող սարքավորումների տեղաբաշխվածությունը և 2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի կողմից սպասարկված «ԱրՔա» քարտերի ծավալը և քանակը նկարագրող տվյալներ:

Քարտերի սպասարկման կետերի քանակը՝ ըստ ներկայացված դասակարգման (31.06.2002 դրությամբ)

	Քանակ
Ավտոմատ գանձման սարքեր	7
Կանխիկացման կետ	46
Առևտրի/սպասարկման կետ	107
Ընդամենը	**160**

Քարտեր սպասարկող սարքավորումներով կատարված գործարքներ (2002 թ. II եռամսյակի ընթացքում)

	Գումար (հազար դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	540120	23898
POS – տերմինալների միջոցով	716905	24835
Ընդամենը	1257025	48733

2002 թ. երկրորդ եռամսյակից աշխատանքներ են կատարվում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվող գործառնությունների իրավական դաշտի կարգավորման, ինչպես նաև քարտային վճարային համակարգում անվտանգության բարձրացման ուղղությամբ:

S.W.I.F.T. ՀԱՄԱԿԱՐԳ

S.W.I.F.T. համակարգի նոր քաղաքականության պահանջներից ելնելով (2004թ.-ից IP տեխնոլոգիաներին անցման և հուսալիության բարձրացման հետ կապված)՝ 2002թ. երկրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են IP տեխնոլոգիաների ներդրմանն առնչվող խնդիրների ուսումնասիրման ու նախապատրաստման աշխատանքները: Ինչպես նաև շարունակվել է Կենտրոնական բանկում տեխնիկածրագրային միջոցների վերափոխման և աշխատանքային առավել արդյունավետ սխեմաների մշակումը: Կատարվել են Կենտրոնական բանկի պահուստային կենտրոնում S.W.I.F.T. համակարգի և TELEX կայանի տեխնիկածրագրային միջոցների տեղակայման և փորձարկման աշխատանքներ:

2002 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ S.W.I.F.T. համակարգին անդամակցում են ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ տարածքում գործող 18 առևտրային բանկեր:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել են ՀՀ տարածքում վճարահաշվարկային բնագավառը կարգավորող նորմատիվային դաշտի կանոնակարգման աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել է «Վճարահաշվարկային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նախագիծը ներկայումս քննարկման փուլում է: Շարունակվել են աշխատանքները՝ ԱՄՀ և Համաշխարհային բանկի կողմից համատեղ իրականացվող FSAP ծրագրի շրջանակներում՝ ՀՀ տարածքում մանր վճարումների որորտի զարգացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ՀՀ նախագահի թիվ ՆԿ-1075 կարգադրության համաձայն ստեղծված «Դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի» աշխատանքները՝ ՀՀ տարածքում դրամանենգության, պլաստիկ քարտերի, չեկերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարությունների և կեղծիքների կանխարգելման միջոցառումների ցանկի հաստատման և վերջիններիս իրականացման ուղղությամբ:

2002թ. երկրորդ եռամսյակի ընթացքում մշակվել և հաստատվել է համապատասխան մեթոդական ուղեցույց՝ ՀՀ տարածքում տեղադրված ավտոմատ գանձման սարքերի (բանկոմատների) շահագործման անվտանգությունը ապահովելու նպատակով: Ինչպես նաև ուսումնասիրվում է ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերի համապատասխանությունը Միջազգային հաշվարկների բանկի կողմից մշակված «Համակարգային նշանակություն ունեցող վճարային համակարգերի առանցքային սկզբունքների» պահանջներին:

ԲԱՆԿԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

2002 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում մշակվել է «Վարկային ռեգիստր» համակարգի առաջին տարբերակը և իրականացվում են տեստավորման աշխատանքները, որի ավարտից հետո այն կհանձնվի փորձնական շահագործման: Համակարգը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել վարկառուի վարկարժանության մասին, մասնավորապես.

- տեղեկատվության հավաքագրում վարկերի և վարկառուների մասին՝ ՀՀ բանկային համակարգում,
- բանկի հարցումով՝ վարկառուի մասին համապատասխան տեղեկատվության դուրսբերում,
- ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկավորված գումարի, վարկի ժամկետայնության և այլ տեղեկատվության օպերատիվ դուրսբերում:

2002 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում շահագործման է հանձնվել ՀՀ միջբանկային շուկայում արտարժույթի առք ու վաճառքի տեղեկատվական համակարգը, որը ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերին հնարավորություն է տալիս ստանալ որոշակի տեղեկատվություն ֆինանսական գործառնությունների վերաբերյալ:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2002 թ. հունվար-հունիսին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար – մայիս*	*Հունվար – հունիս*	*2002 թ. հունվար-հունիսի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	228307.7	312849.7	435737.4	110.1
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	101.2	101.9	102.8	--
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)*[1]	178.1	244.1	339.8	109.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	98780.6	122569.8	149698.4	112.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1977.2	2416.1	2855.2	97.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	41983.0	61106.5	75996.3	100.5
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	145044.5	186409.6	238803.9	114.2
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	16168.6	26807.0	41994.4	125.4
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	204017.7	263109.5	336349.0	108.0[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	209915.3	268166.7	341182.5	106.8[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	24148	24467	25029	110.2[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1418.7	1418.6	1418.5	--
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	137.1	136.7	136.3	--
Գործազրկության մակարդակը (%)	9.7	9.6	9.6	--

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար – մայիս*	*Հունվար – հունիս*[1]	*2002 թ. հունվար-հունիսը 2001 թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB. մլն ԱՄՆ դոլար)*	155.9	192.6	225.3	140.8
Ներմուծում *(CIF. մլն ԱՄՆ դոլար)*	278.7	346.0	407.0	102.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	122.8	153.3	181.8	76.8

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.2	102.9	101.0	101.8
Փետրվար	99.3	100.8	99.8	95.8
Մարտ	99.4	99.6	100.0	99.5
Ապրիլ	102.5	99.8	99.6	98.8
Մայիս	101.7	101.6	100.1	100.4
Հունիս	99.5	106.1	100.2	73.3
2002 թ. հունվար-հունիսը 2001 թ. հունվար-հունիսի նկատմամբ	101.7	103.1	106.6	105.0

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2000*	*2001*	*2002*	*2002*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	1.9	4.6	2.2	2.2
Փետրվար	0.1	-0.9	-0.7	1.5
Մարտ	-0.4	0.0	-0.6	0.9
Ապրիլ	-0.8	-0.1	2.5	3.4
Մայիս	-0.3	1.6	1.7	5.2
Հունիս	-0.3	-1.3	-0.5	4.6
Հուլիս	-2.0	-2.7		
Օգոստոս	-1.3	-0.7		
Սեպտեմբեր	0.3	-1.2		
Հոկտեմբեր	0.0	0.1		
Նոյեմբեր	0.9	1.2		
Դեկտեմբեր	2.4	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	0.4	2.9		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	-0.8	3.1		

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ տարեսկզբից կուտակված պահանջներ[2]
	Կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկեր	Առևտրային բանկերի կողմից գնված պետական արժեթղթեր	Վերաֆինանսավորման գծով պարտքեր	Ընդամենը	Կենտրոնական բանկում հաշվեկշռային դրությամբ	Կենտրոնական կառավարության հաշվեկշռային տվյալներով	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ՀՀ սուբյեկտների միջոցներ կենտրոնական բանկում	Ընդամենը	
2001											
Դեկտեմբեր	1444	8838	-92	10190	1739	142	6	0	36	1922	8268
2002											
Հունվար	1164	7577	-51	8690	13895	142	6	0	8	14051	-5360
Փետրվար	958	7381	-37	8301	7562	141	6	0	9	7720	581
Մարտ	754	6741	-26	7469	8151	128	7	0	37	8322	-854
Ապրիլ	678	6451	-17	7112	6853	127	8	0	0.5	6988	124
Մայիս	594	5795	-9	6380	8490	127	17	0	3	8637	-2257
Հունիս	216	5611	-2	5825	10135	126	13	0	0.1	10274	-4450

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ – 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***84908***	***91157***	***84532***	***81764***	***79629***	***80753***	***84002***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-4539***	***-19316***	***-11676***	***-9406***	***-3904***	***-7952***	***-9592***
Կառավարություն	8268	-5361	581	-854	124	-2257	-4449
Կենտրոնական կառավարություն	8304	-5353	590	-817	124	-2254	-4449
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0
Բանկեր	3855	1920	3807	6558	7298	7430	7559
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-50	-1680	-860	-800	-45	0	0
Զուտ այլ ակտիվներ	-16662	-15875	-16064	-15110	-11326	-13125	-12702
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված) [3]	***79939***	***74045***	***74683***	***74836***	***75072***	***75532***	***76280***
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ	***80369***	***71841***	***72856***	***72358***	***75725***	***72801***	***74410***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	66692	58080	60305	60785	60814	61647	61787
Պարտադիր պահուստ. (դրամով)	13489	13528	12295	11251	14674	10913	12368
Այլ հաշիվներ	188	233	256	322	237	241	255
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***6249***	***-6625***	***-2768***	***-2135***	***1124***	***3249***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-14777***	***7640***	***2270***	***5502***	***-4048***	***-1640***
Կառավարություն	-	-13629	5942	-1435	978	-2381	-2192
Կենտրոնական կառավարություն	-	-13657	5943	-1407	941	-2378	-2195
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3
Բանկեր	-	-1935	1887	2751	740	132	129
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-	1630	-820	-60	-755	-45	0
Զուտ այլ ակտիվներ	-	787	-189	954	3784	-1799	423
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված) [3]	***-***	***-5894***	***638***	***153***	***236***	***460***	***748***
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ	***-***	***-8528***	***1015***	***-498***	***3367***	***-2924***	***1609***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-8612	2225	480	29	833	140
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	39	-1233	-1044	3423	-3761	1455
Այլ հաշիվներ	-	45	23	66	-85	4	14
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***7.4***	***-7.3***	***-3.3***	***-2.6***	***1.4***	***4.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-326***	***39.6***	***19.4***	***58.5***	***-103.7***	***-20.6***
Կառավարություն	-	164.8	110.8	-247.0	114.5	-1 920.2	97.1
Կենտրոնական կառավարություն	-	164.5	111.0	-238.5	115.2	-1 917.7	97.4
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0
Բանկեր	-	-50.2	98.3	72.3	11.3	1.8	1.7
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-	3 260	-48.8	-7.0	-94.4	-100.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	4.7	-1.2	5.9	25.0	-15.9	3.2
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ (միջինացված) [3]	***-***	***-7.4***	***0.9***	***0.2***	***0.3***	***0.6***	***1.0***
ՓՈՂԻ ԲԱԶԱՄ	***-***	***-10.6***	***1.4***	***-0.7***	***4.7***	***-3.9***	***2.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-12.9	3.8	0.8	0.05	1.4	0.2
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	0.3	-9.1	-8.5	30.4	-25.6	13.3
Այլ հաշիվներ	-	23.9	9.9	25.8	-26.4	1.7	5.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ. 1 ՅՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար. 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար. 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1,2]

Ցուցանիշներ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02
ՁԱԱ (փոխարկելի արտարժույթով)	-3498	3200	2876	2727	4211	7508	10677
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	55176	54053	54588	60237	57105	58750	67038
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-55274	-47308	-48187	-54227	-50039	-48825	-52994
Արտաքին պարտավորություններ դրամով	-3400	-3546	-3525	-3282	-2854	-2417	-3367
ՁՆԱ	96425	89411	87335	88124	86951	85168	85401
Կառավարություն	1129	3801	4255	3238	3678	4448	4322
Կենտրոնական կառավարություն	1186	3912	4360	3313	3772	4544	4423
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	10744	13285	10285	6265	8438	4966	6590
Պահուստային ակտիվներ	14717	16909	14990	13304	15822	12472	14262
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-3973	-3624	-4705	-7039	-7384	-7507	-7672
Տնտեսություն	96856	81539	83782	86554	86596	88019	88441
Ձեռնարկություններ	60984	56242	57210	58561	59653	60661	61141
Դրամով	18202	17475	17214	17424	17832	18136	17373
Արտարժույթով	42783	38767	39996	41137	41822	42525	43767
Տնտեսության այլ հատվածներ	35871	25297	26572	27993	26942	27358	27301
Դրամով	4195	3923	4480	5136	4764	5303	6028
Արտարժույթով	33076	22772	23491	24206	23531	23419	22636
Զուտ այլ ակտիվներ	-12304	-9213	-10987	-7933	-11761	-12265	-13952
Արտաքին ակտիվներ դրամով	124	125	168	102	106	66	93
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	1433	1246	791	5748	5375	1340	1412
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-477	-148	-30	-4836	-4638	-275	-76
Ստորադաս վարկեր	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ[3]	9178	6427	5738	6040	4991	3777	3356
Այլ ակտիվներ	30253	29930	30898	32527	31424	33336	30172
Միջբանկային պարտավորություններ[4]	-7274	-5017	-4041	-4425	-2447	-2692	-2857
Դրամական շուկայի գործիքներ	-90	-91	-92	-93	-94	-95	-96
Ներդրումներ փայաբաժիններում	369	368	368	368	357	357	358
Ստորադաս պարտավորություններ ռեզիդենտներին	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-38202	-34925	-35359	-36411	-36983	-39335	-37095
Զուտ ներբանկային հաշիվներ	332	327	374	409	319	42	196
Այլ պարտավորություններ	-7985	-7457	-9802	-7364	-10170	-8787	-9415
ԱՎԱՆԴՆԵՐ[6]	92927	92611	90211	90852	91162	92675	96077
Այդ թվում՝ սառեցված ավանդներ	8381	7946	7141	6392	5737	5549	5472
Դրամով ավանդներ[6]	18420	19554	20416	20082	20854	21469	22398
Ցպահանջ ավանդներ[5,6]	12073	12067	12421	12380	13286	13593	14983
Ժամկետային ավանդներ[6]	6347	7487	7995	7702	7568	7876	7415
Այդ թվում՝ սառեցված ավանդներ՝ դրամով	916	841	754	692	663	658	658
Ավանդներ արտարժույթով[6]	74506	73057	69795	70770	70308	71206	73679
Ցպահանջ ավանդներ[6]	26516	32678	30001	32488	32669	32540	35911
Ժամկետային ավանդներ[6]	47400	39830	39283	37801	37163	38196	37426
Այդ թվում՝ սառեցված ավանդներ արտարժ.	7465	7106	6386	5700	5074	4891	4815
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	590	548	510	481	475	470	342

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] Բոլոր դասակարգումներն իրականացված են ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան, յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:

[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:

[4] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:

[5] Ընդգրկված են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***81410***	***94357***	***87408***	***84491***	***83840***	***88261***	***94679***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***76741***	***54324***	***60836***	***65545***	***66268***	***64293***	***61321***
Կառավարություն	9396	-1559	4836	2384	3801	2191	-128
Կենտրոնական կառավարություն	9490	-1440	4950	2496	3896	2290	-26
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102
Տնտեսություն[4]	97028	81560	83801	86573	86613	88036	88457
Ձեռնարկ. և կազմակերպ.	61132	56242	57210	58561	59653	60661	61141
որից՝ կուտակված տոկոսներ	2549	2301	2344	2436	2469	2624	2674
Տնտեսության այլ ճյուղեր	35896	25318	26591	28012	26960	27375	27316
որից՝ կուտակված տոկոսներ	859	681	654	651	529	435	349
Զուտ այլ ակտիվներ	-29683	-25677	-27801	-23412	-24146	-25934	-27008
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [5,8]	***83429***	***75362***	***78143***	***78898***	***79519***	***81046***	***82045***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***157345***	***147894***	***147454***	***149243***	***149359***	***151785***	***155384***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	***148964***	***139947***	***140313***	***142850***	***143622***	***146236***	***149912***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [6,8]	***158151***	***148681***	***148244***	***150036***	***150108***	***152554***	***156000***
Շրջանառությունում կանխիկ դրամ	65037	55839	57778	58862	58709	59638	59668
Ցպահանջ ավանդներ[7,8]	12260	12276	12650	12647	13516	13831	15236
Այդ թվում՝ սառեցված	837	776	706	653	641	640	650
կուտակված տոկոսներ	184	195	209	220	185	184	157
ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդ.	80855	80566	77816	78527	77883	79085	81096
Այդ թվում՝ սառեցված	7544	7171	6435	5740	5096	4909	4822
կուտակված տոկոսներ	622	592	581	573	564	585	459
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ[8]	74507	73080	69821	70826	70315	71209	73681
Ցպահանջ[8]	26518	32701	30028	32544	32676	32543	35912
Ժամկետային[8]	47400	39830	39283	37801	37163	38196	37426
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	7465	7106	6387	5701	5074	4891	4814
Արտարժ. ավանդ.-ի կուտ. տոկոսներ	590	548	510	481	475	470	342
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***12947***	***-6949***	***-2917***	***-651***	***4421***	***6418***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-22417***	***6512***	***4709***	***723***	***-1975***	***-2972***
Կառավարություն	-	-10955	6395	-2452	1417	-1610	-2319
Կենտրոնական կառավարություն	-	-10930	6390	-2454	1400	-1606	-2316
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3
Տեղական կառավարման մարմիններ	-	53	-6	-30	20	1	6
Տնտեսություն	-	-15468	2241	2772	40	1423	421
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-4890	968	1351	1092	1008	480
որից՝ կուտակված տոկոսներ	-	-248	43	92	33	155	50
Տնտեսության այլ ճյուղեր	-	-10578	1273	1421	-1052	415	-59
որից՝ կուտակված տոկոսներ	-	-178	-27	-3	-122	-94	-86
Զուտ այլ ակտիվներ	-	4006	-2124	4389	-734	-1788	-1074
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ	***-***	***-8067***	***2781***	***755***	***621***	***1527***	***999***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***-***	***-9451***	***-440***	***1789***	***116***	***2426***	***3599***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	***-***	***-9017***	***366***	***2537***	***772***	***2614***	***3676***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ	***-***	***-9470***	***-437***	***1792***	***72***	***2446***	***3446***
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	-9198	1939	1084	-153	929	30
Ցպահանջ ավանդներ	-	16	374	-3	869	315	1405
Այդ թվում՝ սառեցված	-	-61	-70	-53	-12	-1	10
կուտակված տոկոսներ	-	11	14	11	-35	-1	-27
ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդ.	-	-289	-2750	711	-644	1202	2011
Այդ թվում՝ սառեցված	-	-373	-736	-695	-644	-187	-87
կուտակված տոկոսներ	-	-30	-11	-8	-9	21	-126
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1427	-3259	1005	-511	894	2472
Ցպահանջ	-	6183	-2673	2516	132	-133	3369
Ժամկետային	-	-7570	-547	-1482	-638	1033	-770
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-359	-719	-686	-627	-183	-77
Արտարժ. ավանդ.-ի կուտ. տոկոսներ	-	-42	-38	-29	-6	-5	-128

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***15.9***	***-7.4***	***-3.3***	***-0.8***	***5.3***	***7.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-29.2***	***12.0***	***7.7***	***1.1***	***-3.0***	***-4.6***
Կենտրոնական կառավարություն	-	115.2	443.8	-49.6	56.1	-41.2	-101.1
Տեղական կառավարման մարմիններ	-	91.4	-5.4	-28.6	26.7	1.1	6.3
Տնտեսություն	-	-15.9	2.7	3.3	0.0	1.6	0.5
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-8.0	1.7	2.4	1.9	1.7	0.7
Տնտեսության այլ ճյուղեր	-	-29.5	5.0	5.3	-3.8	1.5	0.1
Զուտ այլ ակտիվներ	-	13.5	-8.3	15.8	-3.1	-7.4	-4.1
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-9.7***	***3.7***	***1.0***	***0.8***	***1.9***	***1.2***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**-**	***-6.0***	***-0.3***	***1.2***	***0.08***	***1.6***	***2.4***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	**-**	***-14.1***	***3.5***	***1.9***	***-0.3***	***1.6***	***2.5***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-6.0***	***-0.3***	***1.2***	***0.0***	***1.6***	***2.3***
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	14.1	3.5	1.9	-0.3	1.6	0.1
Ցպահանջ ավանդներ	-	0.1	3.0	0.0	6.9	2.3	10.2
Այդ թվում՝ սառեցված	-	6.0	7.2	5.3	-15.9	-0.5	-14.7
Ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդներ	-	-0.4	-3.4	0.9	-0.8	1.5	2.5
Այդ թվում՝ սառեցված	-	-4.8	-1.9	-1.4	-1.6	3.7	-21.5
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1.9	-4.5	1.4	-0.7	1.3	3.5
Ցպահանջ	-	23.3	-8.2	8.4	0.4	-0.4	10.4
Ժամկետային	-	-16.0	-1.4	-3.8	-1.7	2.8	-2.0
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-4.8	-10.1	-10.7	-11.0	-3.6	-1.6

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն՝ փաստացի փոխարժեքով:

[3] Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 SDR = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] 2002 թ. հունվարից ԿԲ «Ներդրումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց կապիտալում» հաշիվը տնտեսության պահանջներից վերադասակարգված է այլ ակտիվներում, որի պատճառով տնտեսության նկատմամբ պահանջների՝ հունվարից ապրիլ ամիսների ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[6] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[7] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[8] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	**2001[3]**	**2002**					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	337.2	324.0	319.9	317.2	322.5	330.3
Համախառն միջազգային պահուստներ	333.2	340.8	327.6	323.6	319.8	325.2	333.6
Ոսկի[1]	12.4	12.6	13.2	13.5	13.8	14.6	14.3
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	8.4	6.1	6.1	4.1	4.0	1.9
Արտարժույթ[2]	310.6	319.8	308.3	304.0	302.0	306.6	317.3

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են 2001 թ. դեկտեմբեր, 2002 թ. հունվար և փետրվար ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2001[3]	2002					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Վարկեր[1]							
Իրավաբանական անձանց							
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	24.3	19.9	19.3	24.1
ԱՄՆ դոլարով	20.3	28.6	20.7	17.3	15.6	21.9	20.5
Ֆիզիկական անձանց							
ՀՀ դրամով	30.2	29.8	29.3	28.0	28.4	28.1	27.5
ԱՄՆ դոլարով	35.5	37.1	34.0	37.1	36.3	36.5	37.3
Ավանդներ[1]							
Իրավաբանական անձանցից							
ՀՀ դրամով	15.0	10.0	12.0	13.0	9.6	11.0	12.0
ԱՄՆ դոլարով	9.7	4.0	14.0	6.7	10.1	9.0	6.9
Ֆիզիկական անձանցից							
ՀՀ դրամով	14.6	11.9	9.8	10.2	11.8	11.8	11.8
ԱՄՆ դոլարով	10.8	9.3	7.1	9.3	8.5	10.9	7.5
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	14.0	13.5	13.5	13.5	13.5	13.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	8.0	6.0	6.0	6.0	6.0	6.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	30.0	28.0	28.0	28.0	28.0	28.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը[2]	16.4	14.3	13.8	13.0	14.1	14.3	15.0
Սղաճ	2.9	2.2	-0.7	-0.6	2.5	1.7	-0.5

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:

[2] Ներկայացված է 9 – 12- ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ*	Տոկոսադրույք	Վարկի ծավալ*	Տոկոսադրույք
2001				
Հունվար	-	-	3269	45
Փետրվար	-	-	390.6	45
Մարտ	-	-	1616	45
Մայիս	320	8	-	-
Օգոստոս	-	-	300	35
Դեկտեմբեր	50	8	792	30
2002				
Հունվար	1780	8	-	-
Փետրվար	4524	7	-	-
Մարտ	2170	6	250	28
Ապրիլ	45	6	269	28
Մայիս	-	-	-	-
Հունիս	-	-	4161	28

** Մարումները հաշված չեն:*

ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ռեպո համաձայն. ծավալը *	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը*	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2001				
Մարտ	429	23.0	-	-
Ապրիլ	1262	22.1	-	-
Հունիս	1169	18.0	-	-
Հուլիս	1775	16.0	-	-
Օգոստոս	416	16.0	-	-
Սեպտեմբեր	1414	15.0	-	-
Հոկտեմբեր	1608	15.0	-	-
2002				
Հունվար	-	-	-	-
Փետրվար	-	-	-	-
Մարտ	-	-	-	-
Ապրիլ	-	-	-	-
Մայիս	-	-	-	-
Հունիս	-	-	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Հ-01	Օ-01	Ս-01	Հ-01	Ն-01	Դ-01	Հ-02	Փ-02	Մ-02	Ա-02	Մ-02	Հ-02
1	-	553.67	-	554.14	563.14	-	-	563.99	568.18	576.96	-	-
2	554.63	553.36	-	554.14	563.14	-	-	-	-	577.26	579.34	-
3	554.21	553.49	554.59	555.58	-	566.51	561.81	-	-	577.56	579.34	582.22
4	555.05	-	553.60	555.58	-	566.51	561.81	563.84	568.18	577.56	-	582.22
5	-	-	554.06	558.44	563.14	566.51	-	563.18	567.71	577.88	-	582.38
6	554.12	553.49	553.95	-	563.14	566.51	-	563.28	568.68	-	579.75	582.38
7	-	552.89	554.23	-	563.67	566.51	562.15	564.21	568.68	-	580.07	581.92
8	-	552.89	-	558.44	563.67	-	562.55	564.09	-	577.88	580.84	-
9	554.59	552.89	-	558.44	563.67	-	563.01	-	-	578.28	-	-
10	554.52	554.00	553.66	558.44	-	566.20	563.70	-	-	578.28	580.84	581.92
11	553.46	-	554.42	559.90	-	565.85	564.15	564.25	569.45	578.18	-	582.03
12	553.40	-	554.77	559.97	563.67	564.94	-	564.05	570.10	577.22	-	582.32
13	553.58	554.00	554.77	-	564.38	564.76	-	564.42	570.55	-	580.27	582.58
14	-	554.00	553.89	-	564.52	564.45	564.60	565.00	571.12	-	580.58	582.83
15	-	554.00	-	561.57	564.68	-	565.06	565.53	571.57	577.22	580.93	-
16	553.44	554.30	-	561.73	564.32	-	565.48	-	-	577.22	580.93	-
17	553.51	554.30	553.81	563.46	-	564.86	565.48	-	-	577.76	580.53	582.54
18	553.51	-	553.92	564.31	-	564.86	565.98	565.53	571.57	578.46	-	582.84
19	554.32	-	553.32	564.80	564.65	564.86	-	565.27	571.98	578.86	-	580.88
20	554.45	554.87	553.93	-	564.73	564.86	-	565.84	572.66	578.86	580.53	580.88
21	-	556.00	-	-	565.17	564.86	565.16	565.84	572.84	-	580.87	578.83
22	-	556.50	553.93	563.11	565.55	-	564.86	566.86	573.58	578.86	580.87	-
23	554.32	556.50	-	563.11	565.25	-	564.44	566.86	-	578.97	581.14	-
24	553.71	556.50	553.93	563.11	565.25	564.51	564.27	-	-	-	581.14	578.83
25	553.90	556.50	554.09	563.23	565.25	563.62	564.18	566.86	573.98	579.09	-	578.65
26	553.90	-	554.09	563.02	565.73	563.37	-	566.86	574.82	579.79	-	578.53
27	554.22	556.50	554.09	563.02	565.81	562.49	-	566.96	575.12	579.79	581.48	578.53
28	554.22	554.65	554.14	563.02	566.32	562.20	563.85	568.18	575.55	-	581.48	577.14
29	-	554.65	554.14	563.02	566.51	561.81	564.46	-	575.96	579.79	581.82	577.14
30	554.27	555.00	554.14	563.02	566.51	561.81	564.34	-	576.96	579.34	582.04	577.14
31	553.85	555.00	-	563.02	-	561.81	564.39	-	576.96	-	582.22	-
Ժամանակա-հատվածի վերջ	553.85	555.00	554.14	563.02	566.51	561.81	564.39	568.18	576.96	579.34	582.22	577.14
Ժամանակա-հատվածի միջին	554.05	554.58	554.07	560.78	564.66	564.55	564.08	565.28	572.10	578.31	580.81	580.67

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2002 թ. հունիսի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	Ծանոթագր.	*30.06.02*	*31.03. 02*
Ակտիվներ			
Ակտիվներ ոսկով և արտարժույթով			
Ոսկի	1	8 285 546	7 816 356
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	2	68 672 204	68 419 278
Արտարժութային ակտիվներ	3	186 437 366	178 848 670
Ակտիվներ ՀՀ դրամով			
Պետական արժեթղթեր	4	5 942 031	7 659 512
Վարկեր և ավանդներ բանկերում	5	5 037 858	4 819 458
Այլ ակտիվներ	6	1 115 989	1 008 327
Հիմնական միջոցներ	7	4 079 662	4 022 898
Ընդամենը ակտիվներ		**279 570 656**	**272 594 499**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Բանկեր		4 116 654	4 267 074
ԱՄՀ	2	84 003 166	81 973 375
Հայաստանի կառավարություն		2 043 677	2 235 459
Այլ	8	212 288	290 981
Պարտավորություններ ՀՀ դրամով			
Թղթադրամներ և մետաղադրամներ		61 787 408	60 784 731
Հայաստանի կառավարության ավանդներ և հաշիվներ	9	10 148 119	10 173 860
Բանկերի ավանդներ և հաշիվներ		12 367 656	12 083 680
Այլ ավանդներ և հաշիվներ		252 907	303 809
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	2	79 965 140	77 803 164
Այլ պարտավորություններ	10	226 110	247 013
Ընդամենը պարտավորություններ		**255 123 125**	**250 163 146**
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		100 000	100 000
Գլխավոր պահուստ		9 064 908	9 064 908
Ոսկու և արտարժույթի վերագնահատման պահուստներ		14 250 217	12 621 349
Շահույթ		1 032 406	645 096
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**279 570 656**	**272 594 499**

Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվեկշռի անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2002 թվականի օգոստոսի 6-ին և ստորագրվել.

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Ծանոթագրություն 1. Ոսկի

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Ոսկով ավանդներ և հաշիվներ	8 278 087	7 807 912
Հաշվեգրված տոկոսներ (ոսկով ավանդների դիմաց տոկոսագումարները հաշվեգրվում և ստացվում են ԱՄՆ դոլարով)	7 459	8 444
	8 285 546	**7 816 356**

Ծանոթագրություն 2. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվներ

ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Ակտիվներ ՀՓԻ-ով	1 096 495	3 501 125
ԱՄՀ-ի անդամակցություն	67 567 560	64 903 240
Հաշվեգրված տոկոսներ	8 149	14 913
	68 672 204	**68 419 278**

ՀՀ դրամով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Արժեթղթերի հաշիվ	75 300 719	76 333 519
ԱՄՀ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների ճշտման հաշիվ	4 464 337	1 269 561
Թիվ 1 հաշիվ	196 796	196 796
Թիվ 2 հաշիվ	3 288	3 288
	79 965 140	**77 803 164**

ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Վարկեր	83 936 169	81 816 883
Հաշվեգրված տոկոսներ	66 997	156 492
	84 003 166	**81 973 375**

Ծանոթագրություն 3. Այլ արտարժութային ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Արտարժույթով ավանդներ և թղթակցային հաշիվներ	91 934 442	87 505 446
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	59 168 967	59 488 515
Արժեթղթեր	31 947 148	28 355 072
Արտարժույթով վարկեր	2 360 503	2 359 766
Հաշվեգրված տոկոսներ	737 451	733 319
Դեբիտորական պարտքեր արտարժույթով	182 224	274 712
Կանխիկ արտարժույթ	105 710	131 022
Այլ արտարժութային ներդրումներ	921	818
	186 437 366	**178 848 670**

Ծանոթագրություն 4. Պետական արժեթղթեր

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Հայաստանի կառավարության արժեթղթեր	5 824 678	7 468 646
Հաշվեգրված տոկոսներ	117 353	190 866
	5 942 031	**7 659 512**

Ծանոթագրություն 5. Վարկեր և ավանդներ բանկերում

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Վարկեր ռեզիդենտ բանկերին	5 000 000	4 800 146
Ավանդներ բանկերում	198 436	198 436
Հաշվեգրված տոկոսներ	94 579	76 033
Վարկերի արժեզրկման կորուստներ (ծանոթ. 14)	(255 157)	(255 157)
	5 037 858	**4 819 458**

Ծանոթագրություն 6. Այլ ակտիվներ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Դեբիտորական պարտքեր	97 166	26 227
Դրամագիտական արժեքներ	192 904	206 346
Ներդրումներ	660 247	660 247
Այլ ակտիվներ	165 672	115 507
	1 115 989	**1 008 327**

Ծանոթագրություն 7. Հիմնական միջոցներ

(հազար ՀՀ դրամ)

	Հող, շենք և շինություններ	Համակարգչային սարքավոր.	Համակարգչային ծրագրեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք կամ գնահատում					
Առ 1 ապրիլի 2002 թ.	3 101 188	1 527 647	220 834	1 736 667	6 586 336
Ավելացում	42 707	4 080	1 093	188 064	235 944
Օտարում	0	(5 681)	(6 897)	(8 080)	(20 658)
Առ 30 հունիսի 2002 թ.	3 143 895	1 526 046	215 030	1 916 651	6 801 622
Մաշվածք					
Առ 1 ապրիլի 2002թ.	399 412	1 207 412	185 908	770 706	2 563 438
Եռամսյակի ընթացքում կուտակված մաշվածք	37 571	47 539	3 962	88 865	177 937
Օտարում	0	(5 552)	(6 898)	(6 965)	(19 415)
Առ 30 հունիսի 2002թ.	436 983	1 249 399	182 972	852 606	2 721 960
Հաշվեկշռային արժեք					
Առ 30 հունիսի 2002 թ.	2 706 912	276 647	32 058	1 064 045	4 079 662
Առ 31 մարտի 2002 թ.	2 701 776	320 235	34 926	965 961	4 022 898

Ծանոթագրություն 8. Այլ պարտավորություններ արտարժույթով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Հավատարմագրային կառավարման համար միջոցներ	201 999	201 936
Կրեդիտորական պարտքեր արտարժույթով	2 858	24 539
Հաշվեգրված տոկոսներ	5 884	8 601
Այլ պարտավորություններ արտարժույթով՝ ՀՀ ռեզիդենտների հանդեպ	1 547	55 905
	212 288	**290 981**

Ծանոթագրություն 9. ՀՀ կառավարության հաշիվներ և ավանդներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Հայաստանի կառավարության հաշիվներ և ավանդներ	10 148 119	8 157 627
ՀՀ կառավարությանը մասհանում շահույթից	0	4 786 234*
ՀՀ կառավարությանը ավանսային մասհանում շահույթից	0	(2 770 000)
	10 148 119	**10 173 860**

Ծանոթագրություն 10. Այլ պարտավորություններ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.02	*31.03. 02*
Կրեդիտորական պարտքեր	17 286	2 168
Հաշվեգրված տոկոսներ	35 954	47 763
Այլ	172 870	197 082
	226 110	**247 013**

** ՀՀ կենտրոնական բանկի 2001 թ. շահույթից ՀՀ կառավարությանը բաշխման ենթակա գումարը կազմել է 4.786.234 հազ. դրամ, որից 2.770.000 հազ. դրամը 31.03.2002 թ. դրությամբ փոխանցվել է ՀՀ կառավարության միասնական հաշվին, իսկ 2.016.233 հազ. դրամը փոխանցվել է երկրորդ եռամսյակի ընթացքում:*

«Փի-ստար» մոդելի միջոցով սղաճի վարքագծի վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում

Աշոտ Սարգսյան
(Դրամավարկային քաղաքականության վարչություն)

P-STAR ՍՂԱՃԻ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

P-STAR սղաճի մոդելը բնութագրում է գների դինամիկան և թույլ է տալիս կանխատեսել կարճաժամկետ գնային փոփոխությունները որպես մի գործընթաց, որի միջոցով գների փաստացի մակարդակը համապատասխանեցվում է գների հավասարակշիռ մակարդակին:

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությում գների կայունության ապահովումն է, և ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունն ուղղված է այդ խնդրի իրագործմանը: Այդուհանդերձ, գները հաճախ բավականին ուշացումով են արձագանքում դրամավարկային քաղաքականության փոփոխություններին, ինչը կարող է վտանգել դրամավարկային քաղաքականության հաջող ընթացքը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կիրառել որևէ ուղենշային գործիք (ինդիկատոր) կամ գործիքների համախումբ, որը կլրացնի գործառնական և վերջնական նպատակների միջև գոյություն ունեցող զգալի շեղումները: P-STAR մոդելի միջոցով ստացված գնային ճեղքը (P*- P) կարող է մեկնաբանվել որպես ուղենշային գործիք, որը թույլ կտա կանխատեսել գների հետագա փոփոխությունները:

P-STAR մոդելի հիմքում ընկած է փողի քանակական տեսության հայտնի հավասարումը: Վերլուծությունը հիմնականում ընթանում է գների ճեղքվածքի (price gap) շուրջ, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$P = MV/Y$$

$$P^* = MV^*/Y^*$$

որտեղ՝ P-ն գինն է, M-ը՝ փողի առաջարկը,

*V**-ը՝ փողի շրջանառության արագության հավասարակշիռ մակարդակը,

*Y**-ը՝ ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակը,

P*-ը՝ հավասարակշիռ գինը:

Վերոհիշյալ երկու հավասարումները հարաբերելով միմյանց՝ կստանանք.

$$GAP = P^*/P = Y/Y^* \times V^*/V$$

կամ գրելով լոգարիթմական տեսքով.

$$GAP = p^* - p = (y - y^*) + (v^* - v)$$

Եզրակացնում ենք, որ գների ճեղքվածքն իրենից ներկայացնում է երկու այլ ճեղքվածքների համակցում.

(y - y)* - արտադրական հզորությունների օգտագործման ճեղքվածք կամ ՀՆԱ ճեղքվածք (GDP gap),

(v - v)* - իրացվելիության ճեղքվածք (velocity gap):

Այսպիսով, գների ճեղքվածքը ցույց է տալիս, որ քանի դեռ ՀՆԱ ճեղքվածքը մեծ է և/կամ փողի շրջանառութան արագությունը ցածր է իր հավասարակշիռ մակարդակից, տնտեսության մեջ առկա են սղաճային ճնշումներ: P-STAR մոդելի կողմնակիցների կարծիքով սղաճի հիմնական պատճառը գների երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի (p*) և գների ընթացիկ մակարդակի միջև տարբերությունն է: Նրանք պնդում են, որ փողի ավելցուկային առաջարկը, որը դեռևս չի արտացոլվել ընթացիկ գներում,

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշման հետ:*

կարող է հանգեցնել փողի շրջանառության արագության կրճատմանը հավասարակշիռ մակարդակից և/կամ բարձրացնել ՀՆԱ-ն իր պոտենցիալ մակարդակից վեր: Այնուհետև, ժամանակի ընթացքում փողի պահանջարկի և տոկոսադրույքների համապատասխան ճշգրտումից հետո, փողի շրջանառության արագությունը վերադառնում է իր հավասարակշիռ մակարդակին: Մյուս կողմից՝ սղաճային սպասումների ձևավորումը, ինչպես նաև անվանական աշխատավարձերի ճշգրտումը հանգեցնում են նրան, որ ընթացիկ ՀՆԱ-ն նույնպես վերադառնա իր պոտենցիալ մակարդակին: Այս ճշգրտումներից հետո գների մակարդակը համընկնում է իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին, և գների ճեղքվածքը զրոյական մեծություն է:

Այն դեպքում, երբ փողի շրջանառության արագությունը և ՀՆԱ-ն գտնվում են իրենց հավասարակշիռ մակարդակի վրա, փողի առաջարկի հետագա աճը հանգեցնում է երկարաժամկետ P*-ի գնի բարձրացմանը: Սրա արդյունքում գնային ճեղքը (P*-P) դրական մեծություն է, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսության մեջ առկա են սղաճային ճնշումներ, և ժամանակի ընթացքում ընթացիկ գինը պետք է հավասարվի հավասարակշիռ գնին: Վերոնշյալից հետևում է, որ երբ իրական ՀՆԱ-ն և փողի շրջանառության արագությունը գտնվում են իրենց հավասարակշիռ մակարդակի վրա, գների փոփոխությունները համընթաց են փողի առաջարկի փոփոխություններին, և սղաճը դրամավարկային ֆենոմեն է (monetary phenomenon):

Թեև երկարաժամկետ հատվածում գների մակարդակը հավասարվում է իր հավասարակշիռ մակարդակին, այնուամենայնիվ P-STAR մոդելի միջոցով հաշվարկված գների ճեղքվածքը կարող է որոշիչ լինել սղաճի կարճաժամկետ դինամիկան բացատրելու համար: Այլ կերպ ասած՝ P-STAR մոդելը կարելի է վերափոխել սղաճի հավասարման՝

$$\pi_t = \alpha (GAP_{t-1}) + \pi_{t-1}$$

$$\pi_t = \alpha (p^*_{t-1} - p_{t-1}) + \pi_{t-1} \quad (1)$$

Այստեղ սղաճի լագավորված արժեքներն ավելացվում են հավասարմանը, որպեսզի ավելի լավ բնութագրեն կարճաժամկետ փոփոխությունները:


(1) հավասարումը կարելի է ներկայացնել նաև հետևյալ տեսքով՝

$$\pi_t = \gamma_1 (y_{t-1} - y^*_{t-1}) + \gamma_2 (v^*_{t-1} - v_{t-1}) + \pi_{t-1} \quad (2)$$

(2) հավասարումը կարող է դիտարկվել որպես մոդել, որտեղ ի մի են բերվում Ֆիլիպսի կորը և սղաճի մոնետարիստական մոդելը: Ֆիլիպսի կորի պարագայում, որտեղ սղաճային սպասումները ադապտիվ են, γ_2 գործակիցը հավասարվում է զրոյի ($\gamma_2=0$): Մյուս կողմից՝ մոնետարիստական մոտեցման դեպքում հավասարման մեջ առկա կլինի միայն փողի շրջանառության արագության ճեղքը (velocity gap), և հետևաբար γ_1 գործակիցը հավասար կլինի զրոյի ($\gamma_1=0$): Այսինքն՝ (2) հավասարման մեջ ներառված են սղաճի ձևավորման երկու մրցակցող տեսակետներ: Առաջինը Ֆիլիպսի տեսակետն է, համաձայն որի՝ սղաճը ապրանքային շուկայի անհավասարակշռության արդյունք է, երկրորդը մոնետարիստական տեսակետն է, համաձայն որի՝ սղաճը փողի շուկայի անհավասարակշռության արդյունք է:


Այժմ քննարկենք, թե մոդելը ինչպես է արտացոլում պետական և արտաքին հատվածներում կատարվող փոփոխությունների ազդեցությունը սղաճի վրա:

Պետական հատված




Արտաքին հատված

1. Լողացող փոխարժեքի ռեժիմ



2. Ֆիքսված փոխարժեքի ռեժիմ



Սակայն կարևոր է նշել, որ P-STAR մոդելի հիմքում ընկած է փողի քանակական տեսության հավասարումը, որի գլխավոր նախապայմաններից մեկը փողի շրջանառության արագության կայուն լինելու մասին ենթադրությունն է: Այսինքն, P-STAR մոդելում փողի շրջանառության արագությունը ստացիոնար պատահական մեծություն է (դիսպերսիան, միջինը ժամանակի տարբեր պահերին հաստատուն են): Այս դեպքում կարելի է հաշվել փողի շրջանառության արագության ճեղքը (velocity gap), քանի որ որպես փողի շրջանառության արագության հավասարակշիռ մեծություն՝ վերցվում է միջինը ($V_{միջ}$) և հաշվարկվում փաստացի արժեքների տարբերությունը դրանից: Այն դեպքում, երբ փողի շրջանառության արագությունը կամ դրա փոփոխությունը հաստատուն չէ (ոչ ստացիոնար պատահական մեծություն), դժվարություններ են առաջանում փողի շրջանառության արագության ճեղքի հաշվարկման պարագայում: Այս դեպքում խնդիրը հանգում է փողի երկարաժամկետ պահանջարկի ֆունկցիայի կառուցմանը և գնահատմանը: Վերջինիս արդյունքում հաշվարկված մնացորդները (ε) մեկնաբանվում են որպես փողի ճեղքվածք (money gap) և որպես փողի շուկայի անհավասարակշռությունը բնութագրող մեծություն՝ (2) ռեգրեսիոն հավասարման մեջ փոխարինում են փողի շրջանառության արագության ճեղքին (velocity gap):

P-STAR ՄՈԴԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՂԱՆԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Մեր կողմից փորձ է արվել P-STAR մոդելը կիրառել Հայաստանի Հանրապետությունում՝ գների կարճաժամկետ դինամիկան բնութագրելու համար: Վերլուծությունների համար օգտագործվել են 1996-2001 թթ. ՀՆԱ-ի, փողի շրջապտույտի արագության և բնականոն սղաճի միջին եռամսյակային տվյալները: Ինչպես վերը նշվեց, P-STAR մոդելի հիմքում ընկած է փողի քանակական տեսության հավասարումը, որի գլխավոր նախապայմաններից մեկը փողի շրջանառության արագության կայուն լինելու մասին ենթադրությունն է: Սակայն, ի տարբերություն այլ երկրների, ՀՀ-ում փողի շրջանառության արագությունը կայուն չէ (ոչ ստացիոնար մեծություն), որի պատճառով P-STAR մոդելի միջոցով գների դինամիկայի վերլուծության աշխատանքներն ընթացել են երկու ուղղությամբ.

1. փողի շրջանառության արագության հավասարակշիռ մակարդակը (V*) հաշվարկվել է Հոդրիկ-Փրեսքոթի ֆիլտրի (Hodrick-Prescott filter) միջոցով, և արդյունքում ստացվել է շրջանառության ճեղքը՝ (V*-V),
2. գնային ճեղքի (P*-P) հաշվարկման խնդիրը հանգել է փողի երկարաժամկետ պահանջարկի ֆունկցիայի գնահատման խնդրին: Այլ կերպ ասած՝ գործողությունները հանգել են փողի և այլ տնտեսական փոփոխականների միջև կոինտեգրացիայի բացահայտմանը:

I տարբերակ. Նախ մեր կողմից հաշվարկվել են ՀՆԱ-ի և փողի շրջանառության արագության ներուժային մակարդակները, որի համար կիրառվել է էկոնոմետրիկական տեսության մեջ հայտնի Հոդրիկ-Փրեսքոթի ֆիլտրը: Այս մեթոդը լայնորեն կիրառվում է տնտեսագետների կողմից՝ ժամանակային շարքերի երկարաժամկետ զարգացման օրինաչափությունները բացահայտելու համար: Ստացված արդյունքների հիման վրա հաշվարկվել են ՀՆԱ-ի և փողի շրջապտույտի արագության ճեղքվածքները և, որպես դրանց հանրագումար՝ գների ճեղքվածքը (price gap):

Այնուհետև գնային ճեղքվածքը կիրառվել է գների դինամիկան բնութագրող ռեգրեսիոն հավասարման մեջ ոչ միայն ամբողջական մեծության տեսքով, այլ նաև՝ ըստ բաղադրատարրերի:

Ստորև ներկայացված են վերոնշյալ ռեգրեսիոն վերլուծությունների արդյունքները.

Աղյուսակ 1

Կախյալ փոփոխական INF
Գնահատման մեթոդ՝ Փոքրագույն քառակուսիների եղանակ
Օրը՝ 01/17/02 Ժամը՝ 16:28
Նմուշի երկարությունը՝ 1996:2 2001:4
Ներառված են 23 դիտարկումներ

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	t - վիճակագիր	Հավանականություն
$Y_{GAP}(-1)$	11.96063	3.175157	3.766941	0.0014
$V_{GAP}(-1)$	6.770318	3.658334	1.850656	0.0807
INF(-1)	0.228984	0.087601	2.613957	0.0176
DUM	9.601777	1.028832	9.332694	0.0000
C	0.271519	0.233238	1.164129	0.2596

Դետերմինացիայի գործակից	0.863489	Կախյալ փոփոխականի միջինը	0.871175
Ճշգրտված դետ. գործակից	0.833154	Կախյալ փոփ. ստանդարտ միջինը	2.430555
Ռեգրեսիոն հավասարման ստանդարտ շեղում	0.992805	Ակայկեի չափանիշը	3.013095
Մնացորդների քառակուսիների գումար	17.74190	Շվարցի չափանիշը	3.259941
Լոգարիթմի հավանականությունը	-29.65059	F-վիճակագրի ցուցանիշ	28.46445
Դարբին-Վաթսոնի վիճակագիր	1.771395	F-վիճակագրի ցուցանիշի հավանականությունը	0.000000


Աղյուսակ 2

Կախյալ փոփոխական INF
Գնահատման մեթոդ՝ Փոքրագույն քառակուսիների եղանակ
Օրը՝ 01/17/02 Ժամը՝ 16:28
Նմուշի երկարությունը՝ 1996:2 2001:4
Ներառված են 23 դիտարկումներ

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	t - վիճակագիր	Հավանականություն
$P_{GAP}(-1)$	9.947510	2.817524	3.530585	0.0022
INF(-1)	0.198589	0.086817	2.287451	0.0338
DUM	9.391221	1.036708	9.058693	0.0000
C	0.330079	0.236633	1.394899	0.1791

Դետերմինացիայի գործակից	0.849912	Կախյալ փոփոխականի միջինը	0.871175
Ճշգրտված դետերմ. գործակից	0.826214	Կախյալ փոփ. ստանդարտ միջինը	2.430555
Ռեգրեսիոն հավասարման ստանդարտ շեղում	1.013240	Ակայկեի չափանիշը	3.020954
Մնացորդների քառակուսիների գումար	19.50645	Շվարցի չափանիշը	3.218431
Լոգարիթմի հավանականությունը	-30.74097	F-վիճակագրի ցուցանիշ	35.86425
Դարբին-Վաթսոնի վիճակագիր	1.841358	F-վիճակագրի ցուցանիշի հավանականությունը	0.000000

Գրաֆիկ 1. Փաստացի և կանխատեսված սղաճի հետագծերը 1996 – 2001 թթ.



Ռեգրեսիոն հավասարման ամբողջական տեսքը իրենից ներկայացնում է հետևյալ երկու հավասարումները.


$$1.\ INF = 11.961*Y_{GAP}(-1) + 6.770*V_{GAP}(-1) + 0.229*INF(-1) + 9.602*DUM + 0.272 \quad (3)$$

$$2.\ INF = 9.948*P_{GAP}(-1) + 0.199*INF(-1) + 9.391*DUM + 0.330 \quad (4)$$

որտեղ՝ *INF* - միջին եռամսյակային բնականոն սղաճն է,
Y_{GAP} - ՀՆԱ ճեղքվածքը (GDP gap),
V_{GAP} - փողի շրջանառության արագության ճեղքը (velocity gap),
P_{GAP} - գների ճեղքվածքը (price gap),
DUM - ֆիկտիվ փոփոխական:

Առաջին հավասարման մեջ ՀՆԱ ճեղքվածքի և փողի շրջապտույտի արագության ճեղքվածքի գնահատված գործակիցները (համապատասխանաբար 11.961 և 6.770) վկայում են այն մասին, որ ՀՀ-ում սղաճն առավելապես հանդես է գալիս ոչ թե որպես փողի շուկայի, այլ ապրանքային շուկայի կարճաժամկետ անհավասարակշռության արդյունք:

Գրաֆիկ 2. Բնականոն սղաճի և գնային ճեղքի վարքագիծը 1996 – 2001 թթ.



Այն ժամանակահատվածներում, որտեղ գնային ճեղքը նվազում է, հաջորդ ժամանակահատվածներում այն հանգեցնում է սղաճի կրճատմանը:

II տարբերակ. Ինչպես վերը նշվեց, փողի շրջանառության արագությունը ՀՀ-ում ոչ ստացիոնար պատահական մեծություն է: Ուստի գնային ճեղքի (P*- P) հաշվարկման խնդիրը հանգում է փողի երկարաժամկետ պահանջարկի ֆունկցիայի բացահայտման և գնահատման խնդրին: Որպես փողի երկարաժամկետ պահանջարկը բնութագրող ֆունկցիա՝ մեր կողմից ընտրվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$M2 = \varphi_0 + \varphi_1(GDP) + \varphi_2(DEF) + \varepsilon \quad (5)^*$$

որտեղ՝ *M2* - դրամային զանգվածն է,
GDP - իրական ՀՆԱ-ն,
DEF - ՀՆԱ դեֆլյատորը:

Նշենք, որ ռեգրեսիոն հավասարման մեջ ներառված բոլոր փոփոխականները առաջին կարգի ոչ ստացիոնար պատահական մեծություններ են՝ I(1), այսինքն՝ դրանց առաջին տարբերությունների արդյունքում ստացված ΔM2, ΔGDP և ΔDEF ժամանակային շարքերը ստացիոնար են՝ I(0): Ստացիոնարությունը ստուգվել է Դիկեյ-Ֆուլերի տեստի միջոցով. ստորև ներկայացված են տեստի արդյունքները ΔM2, ΔGDP և ΔDEF շարքերի համար.

* *Վերցված են բոլոր փոփոխականների լոգարիթմական մակարդակները:*

ΔM2

Դիկեյ-Ֆուլերի տեստի վիճակագիր	-7.366139	1% Կրիտիկական արժեք*	-3.7856
		5% կրիտիկական արժեք	-3.0114
		10% կրիտիկական արժեք	-2.6457

ΔGDP

Դիկեյ-Ֆուլերի տեստի վիճակագիր	-8.668919	1% Կրիտիկական արժեք*	-3.7856
		5% կրիտիկական արժեք	-3.0114
		10% կրիտիկական արժեք	-2.6457

ΔDEF

Դիկեյ-Ֆուլերի տեստի վիճակագիր	-4.408783	1% Կրիտիկական արժեք*	-3.7856
		5% կրիտիկական արժեք	-3.0114
		10% կրիտիկական արժեք	-2.6457

Համոզվելով, որ բոլոր փոփոխականները միևնույն կարգի ոչ ստացիոնար մեծություններ են, ստուգվել է դրանց միջև կոինտեգրացիայի առկայությունը, այսինքն՝ ստուգվել է (5) ռեգրեսիոն հավասարման գնահատման արդյունքում ստացված ε-սխալի ստացիոնարությունը: Ընդ որում, փոքրագույն քառակուսիների եղանակը (ՓՔԵ) մնացորդները (սխալը) ընտրում է այնպես, որ դրանք ունենան հնարավորինս նվազագույն դիսպերսիա: Ուստի այս եղանակով գնահատման արդյունքում ստացված մնացորդի շարքը շատ մոտ է ստացիոնար ժամանակային շարքին: Հետևաբար, այս դեպքում խորհուրդ չի տրվում ε-սխալի ստացիոնարությունը ստուգել սովորական Դիկեյ-Ֆուլերի տեստի միջոցով, այլ առաջարկվում է կիրառել Դևիդսոնի և Մակ-Քինոնի (Davidson and MacKinnon,1993) կողմից մշակված t-վիճակագրի ճշգրտված կրիտիկական արժեքները:

Ստորև ներկայացված են (5) ռեգրեսիոն հավասարման գնահատման, ինչպես նաև ε-սխալի ստացիոնարությունը ստուգող տեստի արդյունքները.

$$M2 = \varphi_0 + \varphi_1(GDP) + \varphi_2(DEF) + \varepsilon$$

Աղյուսակ 3

Կախյալ փոփոխական LM2
Գնահատման մեթոդ՝ Փոքրագույն քառակուսիների եղանակ
Օրը՝ 01/22/02 Ժամը՝ 09:22
Նմուշի երկարությունը՝ 1996:1 2001:4
Ներառված են 24 դիտարկումներ

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	t - վիճակագիր	Հավանականություն
LRGDP	1.470908	0.123177	11.94140	0.0000
LDEF	0.978758	0.142260	6.880053	0.0000
C	-11.60321	1.342737	-8.641463	0.0000

Դետերմինացիայի գործակից	0.935727	Կախյալ փոփոխականի միջինը	10.81667
Ճշգրտված դետ. գործակից	0.929605	Կախյալ փոփ. ստանդարտ միջինը	0.254809
Ռեգրեսիոն հավասարման ստանդարտ շեղում	0.067606	Ակայկեի չափանիշը	-2.433776
Մնացորդների քառակուսիների գումար	0.095982	Շվարցի չափանիշը	-2.286520
Լոգարիթմի հավանականությունը	32.20532	F-վիճակագրի ցուցանիշ	152.8648
Դարբին-Վաթսոնի վիճակագիր	1.239955	F-վիճակագրի ցուցանիշի հավանականությունը	0.000000

ՓՈՂԻ ՃԵՂՔՎԱԾՔ (ε)

Դիկեյ-Ֆուլեր

Դիկեյ-Ֆուլերի տեստի վիճակագիր	-3.905267	1% Կրիտիկական արժեք*	-3.7076
		5% կրիտիկական արժեք	-2.9798
		10% կրիտիկական արժեք	-2.6290

Դևիդսոն և Մակ-Քինոն

-3.905267	1% Կրիտիկական արժեք*	-4.29
	5% կրիտիկական արժեք	-3.74
	10% կրիտիկական արժեք	-3.45

Կոինտեգրացիոն կապի բացահայտումից հետո կարելի է ասել, որ (5) ռեգրեսիոն հավասարումը կարող է հանդես գալ որպես փողի երկարաժամկետ պահանջարկը բնութագրող հավասարում: Ուստի (5) հավասարման գնահատման արդյունքում ստացված ε-սխալը կարող է մեկնաբանվել որպես փողի ճեղքվածք (փողի ընթացիկ և պահանջվող երկարաժամկետ քանակությունների տարբերություն) և փողի շրջանառության արագության ճեղքվածքի փոխարեն կիրառվել P-STAR մոդելում՝ որպես փողի շուկայի անհավասարակշռությունը բնութագրող մեծություն.

$$P^*-P=(Y-Y^*)+\varepsilon_{money\ gap}$$

Ստորև ներկայացված են գների դինամիկան բնութագրող ռեգրեսիոն հավասարման արդյունքները, որտեղ փողի շրջանառության արագության ճեղքվածքը փոխարինված է փողի երկարաժամկետ պահանջարկի ֆունկցիայի միջոցով ստացված ε մեծությամբ.

Աղյուսակ 4

Կախյալ փոփոխական INF
Գնահատման մեթոդ՝ Փոքրագույն քառակուսիների եղանակ
Օրը՝ 01/21/02 Ժամը՝ 17:07
Նմուշի երկարությունը՝ 1996:2 2001:4
Ներառված են 23 դիտարկումներ

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	t - վիճակագիր	Հավանականություն
$M_{GAP}(-1)$	6.775324	3.525620	1.921740	0.0706
$Y_{GAP}(-1)$	12.41562	3.223383	3.851736	0.0012
INF(-1)	0.240697	0.085028	2.830803	0.0111
DUM	9.900512	1.016929	9.735698	0.0000
C	0.231693	0.228158	1.015494	0.3233

Դետերմինացիայի գործակից	0.865177	Կախյալ փոփոխականի միջինը	0.871175
Ճշգրտված դետ. գործակից	0.835216	Կախյալ փոփ. ստանդարտ միջինը	2.430555
Ռեգրեսիոն հավասարման ստանդարտ շեղում	0.986650	Ակայկեի չափանիշը	3.000656
Մնացորդների քառակուսիների գումար	17.52259	Շվարցի չափանիշը	3.247503
Լոգարիթմի հավանականությունը	-29.50755	F-վիճակագրի ցուցանիշ	28.87703
Դարբին-Վաթսոնի վիճակագիր	1.577789	F-վիճակագրի ցուցանիշի հավանականությունը	0.000000

Եթե գրենք ռեգրեսիոն հավասարման ամբողջական տեսքը, ապա կունենանք հետևյալը.

$$INF = 6.775*M_{GAP}(-1) + 12.416*Y_{GAP}(-1) + 0.241*INF(-1) + 9.901*DUM + 0.232 \qquad (6)$$

(6) հավասարման գնահատման արդյունքում ստացված փողի ճեղքվածքի առջևի գործակիցը (6.775) համեմատելով առաջին տարբերակում գնահատված փողի շրջանառության արագության ճեղքվածքի ազդեցությունը բնութագրող գործակցի (6.770) հետ՝ կտեսնենք, որ դրանք շատ մոտ են իրար, որը մեկ անգամ ևս վկայում է, որ փոփոխականների փոխարինումը ճիշտ է կատարված: Այսինքն, երկու տարբերակներով կատարված ռեգրեսիոն վերլուծությունները համարժեք են: Այդ մասին են վկայում նաև երկու տարբերակներով կատարված կանխատեսումների արդյունքները:

ԲՆԱԿԱՆՈՆ ՍՂԱՑԻ 2002 Թ. ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. $INF = 11.961*Y_{GAP}(-1) + 6.770*V_{GAP}(-1) + 0.229*INF(-1) + 9.602*DUM + 0.272$

2. $INF = 9.948*P_{GAP}(-1) + 0.199*INF(-1) + 9.391*DUM + 0.330$

3. $INF = 6.775*M_{GAP}(-1) + 12.416*Y_{GAP}(-1) + 0.241*INF(-1) + 9.901*DUM + 0.232$

	մոդել N	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Տարեկան
2002 թ.	1	1.127	0.406	0.312	0.837	2.2
	2	1.196	0.691	0.448	0.912	2.6
	3	1.471	- 0.018	0.107	0.648	2.1
2001 թ.	փաստացի	1.45	0.12	-0.41	0.76	1.13
2000 թ.	փաստացի	-0.17	-0.79	-1.19	0.55	0.34
1999 թ.	փաստացի	-0.46	-1.57	1.21	1.84	-1.64
1998 թ.	փաստացի	3.13	-1.32	-1.02	-0.29	9.56
1997 թ.	փաստացի	2.11	1.46	10	3.45	11.01
1996 թ.	փաստացի	4.75	-0.44	-0.18	1.81	

Նշենք, որ կանխատեսումների համար հիմք են հանդիսացել 2002 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով նախանշված ՀՆԱ-ի և դրամային զանգվածի՝ համապատասխանաբար 6% և 17% աճի ցուցանիշները (իսկ համապատասխան ճեղքվածքները հաշվարկված են Հոդրիկ-Փրեսքոթի ֆիլտրի օգնությամբ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ-ում կիրառելու նպատակով կառուցված P-STAR սղաճի մոդելը գործիք է տնտեսության մեջ առկա սղաճային ճնշումները բացահայտելու համար:
- Մոդելի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ սղաճը ՀՀ-ում առավելապես ապրանքային շուկայի անհավասարակշռության արդյունք է:
- Մոդելը, որպես սղաճային ճնշումները բնութագրող ուղենշային գործիք, կարող է կիրառվել սղաճի ցուցանիշի ծրագրավորման (inflation targeting) նպատակով:
- Մոդելը կիրառվել է 2002 թ. միջին սղաճի ծրագրային ցուցանիշի արժանահավատության ստուգման նպատակով:

Բանկերի ներգրաված միջոցները և վարկային ներդրումները՝ ըստ հանրապետության մարզերի[1]

Արմենուհի Մկրտչյան
(Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություն)

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ[2]

01.01.2002 թ. դրությամբ առևտրային բանկերի կողմից ՀՀ տարածքում տրամադրված վարկերի ծավալը կազմել է 76 մլրդ դրամ, այն դեպքում, երբ 01.10.2000 թ. դրությամբ՝ 68 մլրդ դրամ: Ընդ որում, վարկերի ծավալները կրճատվել են խոշոր վարկառու մարզերում՝ Արարատի, Կոտայքի մարզերում և Երևանում, մինչդեռ ավելի քան երկու անգամ աճել են Լոռու մարզին հատկացված վարկերի ծավալները, որի արդյունքում փոքրացել են Երևանի և ավելացել Լոռու մարզի մասնաբաժիններն ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքում:


Այն մարզերը, որոնց վարկային ծավալները փոփոխվել են 01.10.2000 թ. համեմատ, ներկայացված են աղյուսակում.

Վարկային ներդրումների ծավալներն ըստ մարզերի (մլրդ դրամ)


	Երևան	Արարատ	Կոտայք	Արագածոտն	Շիրակ	Լոռի	ԼՂՀ	Ընդամենը ԲՀ-ով
01.10.00	45	6	4	1	2	5	2	68
01.01.02	44	5	3.4	2	2	10	3	76
Աճ	-1	-1	-0.6	1	0	5	1	8

Վարկերի կառուցվածքն ըստ մարզերի (մլրդ դրամ)

01.10.2000



01.01.2002



1. Երևան, 2. Արարատ, 3. Կոտայք, 4. Արմավիր, 5. Արագածոտն, 6. Շիրակ, 7. Լոռի, 8. Գեղարքունիք, 9. Տավուշ, 10. Վայոց ձոր, 11. Սյունիք, 12. ԼՂՀ

01.01.2002 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող բանկերի վարկային ներդրումների մարզային կառուցվածքը փոփոխվել է: Երևանի մասնաբաժինը 66%-ից նվազել է 58 %-ի (Երևանում վարկային ներդրումների նման բաշխվածությունը, թերևս, պայմանավորված է այստեղ ՀՀ արտադրության մոտ 50%-ի կենտրոնացվածությամբ[3]):

---

[1] *Համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 22.01.2002 թ. թիվ 25 որոշման՝ ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացրել ըստ ՀՀ մարզերի իրենց կողմից տրամադրված վարկերի և ներգրավված միջոցների վերաբերյալ տվյալներ՝ 01.01.2002 թ. դրությամբ: Վերլուծության մեջ դրանք համեմատվել են 01.10.2000 թ. դրությամբ ստացված տվյալների հետ: Տվյալները ամփոփվել են այն 21 բանկերի համար, որոնք գործել են և՛ 01.10.2000 թ., և՛ 01.01.2002 թ. դրությամբ և չեն գտնվել հատուկ վերահսկողական դաշտում: Հաշվետվություններում ներառված բանկերի ցանկը ներկայացված է հավելված 2-ում:*

[2] *Ընդգրկվում են բանկերի կողմից ՀՀ տարածքում տեղաբաշխված վարկերը: Վարկերի մեջ չեն ներառվում լիզինգային և ֆակտորինգային գործառնությունները: Վարկերի ճյուղային դասակարգումը կատարված է ըստ վարկառուի ճյուղային պատկանելության: Վարկերի աշխարհագրական դասակարգումը կատարված է՝ ելնելով վարկերի նպատակային օգտագործումից՝ բիզնես-ծրագրերի հիման վրա:*

[3] *Աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը» տեղեկատվական-վերլուծական ամսական հաշվետվություն, հունվար-սեպտեմբեր, 2001 թ.:*

Կրկնակի աճել է Լոռու մարզին տրվող վարկերի տեսակարար կշիռը (7 %-ից հասել է 13%-ի) (տե՛ս աղյուսակներ 1.1-1.3):

Վարկերի ճյուղային բաշխվածությունը որոշ փոփոխություններ է կրել, մասնավորապես, 2 տոկոսային կետով նվազել է արդյունաբերությանը տրված վարկերի տեսակարար կշիռը (01.10.2000 թ.՝ 43%), որի կառուցվածքում իր հերթին կրկնակի ավելացել է քիմիական արդյունաբերությանը և զգալի նվազել էներգետիկային (գրեթե կրկնակի կրճատվել են Երևանում, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում) տրված վարկերի ծավալները: 5 տոկոսային կետով ավելացել է առևտրի մասնաբաժինը:

Յուրաքանչյուր նշանակալի մասնաբաժին ունեցող ճյուղին ուղղված վարկերի բաշխվածությունն ըստ մարզերի հիմնականում բևեռացված բնույթ ունի. այսպես, արդյունաբերության բնագավառում հիմնական կենտրոնացվածությունը Երևանում է՝ 44% (01.10.2000 թ.՝ 56%), որին զգալի տարբերությամբ հաջորդում են Արարատի՝ 10% (01.10.2000 թ.՝ 14%), Լոռու՝ 26% (01.10.2000 թ.՝ 13%) և Կոտայքի՝ 7% (01.10.2000 թ.՝ 7%) մարզերը, մինչդեռ մյուս մարզերում տեսակարար կշիռների բաշխվածությունը գրեթե նույնն է՝ 1-3%: Արդյունաբերության լեռնահանքային ճյուղին հատկացված վարկային միջոցների 87%-ը կենտրոնացած է Սյունիքի մարզում, իսկ քիմիական արդյունաբերությանը տրամադրված վարկերի 80%-ը (01.10.2000թ.՝ 75%)՝ Լոռու մարզում:

Տնտեսության մյուս ճյուղերից միայն սննդի արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը տրված վարկային ներդրումներն են ցրված մարզերի միջև:

Շինարարությանն ուղղված վարկերը 01.10.2000 թ. դրությամբ ցրված են եղել մարզերի միջև, մինչդեռ 01.01.2002 թ. կենտրոնացվել են Երևանում (64%), ընդ որում, շինարարության ծավալները 2001 թ. ընթացքում Երևանում նույնպես էապես ընդլայնվել են: Զգալիորեն վարկավորվում են այս ոլորտում ԼՂՀ-ի սուբյեկտները: Կտրուկ աճել են Լոռու և Արմավիրի մարզերում, մինչդեռ ավելի քան կրկնակի կրճատվել են Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, ինչպես նաև Շիրակի մարզերում շինարարության վարկավորման ծավալները: Շիրակի մարզում, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, շարունակվում է շինարարության ծավալների չափավոր ընդլայնումը՝ մեծամասամբ ի հաշիվ բնակշինարարության, սակայն գլխավորապես՝ միջազգային կազմակերպությունների ուղղակի ֆինանսավորման հաշվին:

01.01.2002 թ. դրությամբ տրամադրված է եղել թվով 57973 վարկ, որից 55661-ը կազմել են մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի վարկերը: Միավոր վարկի միջին ծավալը 1.3 մլն դրամ է: Միջին բանկային մակարդակը գերազանցում է Երևանը, իսկ ամենացածր մակարդակ ունի Գեղարքունիքի մարզը:

Վարկերի ժամկետային կառուցվածքը

Վարկային ներդրումների ժամկետային կառուցվածքի (տե՛ս աղյուսակներ 1.4-1.7, 4.1-4.2) պատկերը հետևյալն է. ընդհանուր վարկային ներդրումներում կարճաժամկետ (մինչև 1 տարի) վարկերը կազմում են 44% (33 մլրդ դրամ), որը 01.10.2000 թ. համեմատ 4 տոկոսային կետով ցածր է: Կարճաժամկետ վարկերի մեջ իր հերթին 68%-ը (01.10.2000 թ.՝ 71%) բաժին է ընկնում Երևանին, իսկ մյուս մարզերի մասնաբաժինները 0-6%-ի սահմաններում են:

Երկարաժամկետ (մեկ տարուց ավելի տևողությամբ) վարկերի 51%-ը ներդրված է Երևանում, 21%-ը՝ Լոռու մարզում, 9%-ը՝ Արարատի մարզում, մինչդեռ մյուս մարզերի մասնաբաժինները 0-5%-ի սահմաններում են:

Փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի գերակշիռ մասը երկարաժամկետ (մեկ տարուց ավելի տևողությամբ) բնույթ ունի բոլոր մարզերում:

Վարկերի արժութային կառուցվածքը


Ընդհանուր վարկերի միայն 17%-ն է (01.10.2000 թ.՝ 14%) տրամադրված դրամով (տե՛ս նաև աղյուսակներ 1.7–1.10, 4.1-4.2): Վարկային ներդրումներում համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևանում, Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Լոռու մարզերում վարկերի կառուցվածքը ըստ արժույթի հետևյալն է.

	Երևան	Լոռի	Արարատ	Արմավիր	Կոտայք
Ընդհանուր վարկեր (մլրդ դրամ)	44	10	5	3	3
Դրամով վարկերի տեսակարար կշիռը (%)	18%	4%	37%	16%	27%


Ընդհանուր՝ 57973 վարկերից 55392-ը տրամադրված են արտարժույթով և 53490-ը՝ մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի սահմաններում: Արդյունքում, արտարժույթով տրամադրված միավոր վարկի ծավալը 1.1 մլն դրամ է, որը շատ փոքր է դրամով տրված միավոր վարկի ծավալից՝ 6 մլն դրամ:

Միջին և փոքր բիզնեսի[4] վարկավորում

Փոքր և միջին բիզնեսին տրված վարկերը կազմել են 20 մլրդ դրամ (01.10.2000 թ. համեմատ ավելացել են 44%-ով): Դրանք կազմել են ընդհանուր վարկային ներդրումների 26%-ը, որը 01.10.2000 թ. համեմատ ավելի է 6 տոկոսային կետով (տե՛ս աղյուսակներ 1.2-1.3, 4.1-4.2):



Փոքր և միջին բիզնեսին ուղղված վարկերի 6 մլրդ հավելաճի 4 մլրդ դրամը հատկացվել է Երևանին: Զգալի աճ է նկատվել նաև Արմավիրի մարզում և ԼՂՀ-ում: Արդյունքում՝ Երևանի մասնաբաժինը փոքր և միջին բիզնեսին տրված վարկերի կառուցվածքում մեծացել է. 66%-ից (01.10.2000 թ.) 71%:




Ընդհանուր վարկային կառուցվածքում փոքր և միջին բիզնեսին տրված վարկերը շարունակում են գերակշռել Վայոց ձորի մարզում (61%) և ԼՂՀ-ում (50%):

[4] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնք ունեն մինչև 100 աշխատող:

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը կազմում են 15 մլրդ դրամ. 01.10.2000 թ. համեմատ ավելացել են 13%-ով (01.10.2000 թ.՝ 12 մլրդ դրամ):



Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերը հիմնականում բաշխվել են Երևանում, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Արմավիրի մարզերում: 01.10.2000 թ. 7 մարզում տեղաբաշխված վարկերի կառուցվածքում միջազգային ծրագրերով տրված վարկերը նշանակալի բաժին (23-56%) ունեին: Զգալի ավելացել են Երևանին, Արագածոտնի մարզին և զգալի նվազել Շիրակի մարզին տրամադրված վարկերի ծավալները: Արդյունքում՝ կրկին 7 մարզում վարկային ներդրումների մեջ միջազգային ծրագրերով վարկերի տեսակարար կշիռը 20%-ից բարձր է, այդ թվում նաև՝ Արարատի և Արագածոտնի մարզերում՝ 50%-ից ավելի:

Ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի չափերը առանձին մարզերում ներկայացված են «Վարկեր և ավանդներ» գրաֆիկում (էջ 66):

Վարկերի վերադարձելիություն

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության (մարզի ժամկետանց վարկեր/ մարզի ընդհանուր վարկեր)՝ պատկերը մարզերում հետևյալն է. ընդհանուր վարկերի մեջ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը 6 % է, որի 80%-ը (01.10.2000 թ.՝ 87%) բաժին է ընկնում միայն Երևանին: Ընդհանուր բանկային համակարգի մակարդակից բարձր են միայն Երևանի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզերի և ԼՂՀ ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 1.2-1.11):

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[5]

01.01.2002 թ. դրությամբ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից[6] ՀՀ տարածքում ներգրավված միջոցները կազմել են 98 մլրդ դրամ, որը 01.10.2000 թ. նույն ցուցանիշը գերազանցել է 41%-ով:


Ներգրավված միջոցների 49%-ը իրավաբանական անձանց միջոցներն են (01.10.2000 թ.՝ 48%): 9 մարզում գերակշռել են ֆիզիկական անձանց ավանդները (01.10.2000 թ.՝ 6 մարզ էր) (տե՛ս աղյուսակ 2.2):

Ներգրավված միջոցները հիմնականում կենտրոնացվել են Երևանում. ներգրավված միջոցների 89%-ը (01.10.2000՝ 81%), մոտ 2-ական %՝ Արմավիրի, Շիրակի մարզերում և ԼՂՀ-ում (տե՛ս աղյուսակներ 2.1-2.3, 3.1):

---

[5] Դիտարկվում են բանկերի կողմից ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ տարածքում ներգրավված բոլոր միջոցները: Ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ տարածքից դուրս ներգրավված միջոցները ընդգրկված չեն:


[6] Իրավաբանական անձանց կազմում չեն ընդգրկվում ֆինանսաբանկային ինստիտուտները:



Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները

Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների ծավալներն աճել են մարզերի մեծ մասում, չնայած մի քանի մարզերում դրանց ծավալը դեռևս աննշան է:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ բանկերի պարտավորությունների ծավալը 01.01.2002թ. դրությամբ կազմել է 48 մլրդ դրամ՝ 01.10.2000 թ. համեմատ աճելով 45%-ով (33 մլրդ դրամ): Աճն ապահովվել է հիմնականում Երևանի հաշվին, 01.10.2000 թ.՝ 36 մլրդ դրամից հասել է 47 մլրդ դրամի: Միայն ԼՂՀ-ում է նկատվել ֆիզիկական անձանց միջոցների ծավալների նվազում:



Բացի Երևանից, մյուս մարզերում ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների մասնաբաժինները չեն գերազանցում 3%-ը (տե՛ս աղյուսակներ 2.2-2.3):


Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդային հաշիվների թիվը մոտ 307 հազար է, իսկ ֆիզիկական անձի միավոր բանկային հաշվի մնացորդի միջին ծավալը՝ 156 հազար դրամ (ներառված չեն «Հայխնայբանկի» միացյալ հաշիվները): Մեկ բանկային հաշվի մնացորդի ծավալով՝ ամենամեծը Երևանի ցուցանիշն է (268 հազար դրամ), ամենափոքրը՝ Վայոց ձորի մարզինը՝ 23 հազ. դրամ, մյուս մարզերինը՝ 38-65 հազար դրամ (աղյուսակ 2.0, 3.1):

Ֆիզիկական անձի արտարժութային միավոր բանկային հաշվի մնացորդի միջին ծավալը 555 հազար դրամ է, իսկ դրամով հաշվինը՝ 25 հազար դրամ:

Իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները

Ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների ծավալները 01.10.2000 թ. համեմատ աճել են 38%-ով և կազմել 50 մլրդ դրամ: Աճը հիմնականում ապահովվել է Երևանի և Շիրակի մարզի


հաշվին, քանի որ մյուս բոլոր մարզերում նկատվել է իրավաբանական անձանց միջոցների ծավալների կրճատում: Երևանում դրանք աճել են 55%-ով և կազմել 44 մլրդ դրամ, իսկ Շիրակի մարզում՝ 3%՝ կազմելով 525 մլն դրամ:



Մեկ իրավաբանական անձի բանկային հաշվի[7] մնացորդի միջին ծավալը 743 հազ. դրամ է: Այս ցուցանիշով բանկային համակարգի միջին մակարդակը գերազանցում են Արմավիրի մարզը, Երևանը, ԼՂՀ-ն, մյուս մարզերի չափերը 16-162 հազ. դրամի սահմաններում են:

Ներգրավված միջոցների ժամկետային կառուցվածքը

Ներգրավված միջոցների ժամկետայնության կառուցվածքում փոփոխություններն աննշան են:



Ռեզիդենտներից ներգրավված միջոցների 58%-ը ժամկետային է (01.10.2000 թ.՝ 55%) (տե՛ս աղյուսակներ 2.4-2.7, 4.3-4.4): Ե՛վ ժամկետային, և՛ ցպահանջ միջոցների գերակշիռ մասը ներգրավված է Երևանում:

Ընդհանուր ցպահանջ միջոցների գերակշիռ մասը՝ 56% (նախկինում՝ 67%), կազմում են իրավաբանական անձանց միջոցները: 01.10.2000 թ. դրությամբ իրավաբանական անձանց ցպահանջ միջոցները գերակշիռ մաս էին կազմում 6 մարզերում, 01.01.2002 թ. դրությամբ՝ 11:

Ժամկետային միջոցների 48%-ը (01.10.2000 թ.՝ նույնպես 48%), պատկանում է իրավաբանական անձանց, ընդ որում, 9 մարզում և ԼՂՀ-ում ֆիզիկական անձանց ժամկետային միջոցները գերազանցում են իրավաբանական անձանց ժամկետային միջոցները: Երևանում, Արմավիրի մարզում՝ հակառակը:


[7] Բանկային հաշիվները ներառում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անունով բացված ժամկետային և ցպահանջ ավանդները, հաշվարկային, չեկային, անձնական և այլ բոլոր հաշիվները:

Կտրուկ փոփոխվել է պատկերը Վայոց ձորի մարզում, որտեղ 01.10.2000 թ. դրությամբ ժամկետային միջոցների 63%-ը ներգրավված էր իրավաբանական անձանցից, մինչդեռ 01.01.2002 թ. դրությամբ՝ միայն 8%-ը:

Մի քանի մարզերում ցպահանջ միջոցների ծավալներն աննշան են, ինչը վկայում է, որ բանկերը գրեթե չեն սպասարկում տնտեսավարող սուբյեկտների և տնային տնտեսությունների ընթացիկ գործունեությունը (տե՛ս աղյուսակ 2.5):

Ներգրավված միջոցների արժութային կառուցվածքը

Ռեզիդենտներից դրամով ներգրավված միջոցները հիմնականում կենտրոնացվել են Երևանում. 01.01.2002 թ. դրությամբ՝ 83%-ը (01.10.2000 թ.՝ 73%) Երևանում է (տե՛ս աղյուսակներ 2.8-2.11):



Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների աճը հիմնականում ապահովվել է արտարժույթով միջոցների հաշվին. դրամով ներգրավված միջոցների ծավալները 4 մլրդ-ից հասել են 5.9 մլրդ դրամի, իսկ արտարժույթով միջոցները՝ 29 մլրդ-ից 42 մլրդ դրամի:


Դրամով ներգրավված միջոցների մեծ մասը՝ 74% (01.10.2000 թ՝ 78%), ներգրավված է իրավաբանական անձանցից: Եթե 01.10.2000 թ. դրությամբ բոլոր մարզերում, բացի Արմավիրից, այս պատկերը կրկնվել է, ապա 01.01.2002 թ. դրությամբ մարզերում այդ հարաբերակցությունը լրիվ փոխվել է:

Իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների ծավալներն ավելացել են հիմնականում արտարժույթով միջոցների հաշվին. արտարժույթով միջոցների ծավալը 22 մլրդ-ից հասել է 33 մլրդ դրամի, իսկ դրամային մասը՝ 18 մլրդ-ից 23 մլրդ դրամի:

Արտարժույթով ներգրավված միջոցների 44%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից, սակայն մարզերում պատկերը փոխվել է. 10 մարզում ֆիզիկական անձանցից ներգրավված արտարժութային միջոցները զգալիորեն գերազանցել են իրավաբանական անձանցից ներգրավված արտարժութային միջոցները, մինչդեռ Արմավիրի մարզում և ԼՂՀ-ում՝ հակառակը:


ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Բանկային համակարգում ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները գերազանցում են վարկային ներդրումները, ընդ որում, գերազանցող մասը կազմում է ներգրավված ավանդների 22%-ը, այն դեպքում, երբ 01.10.2000 թ. դրությամբ այն կազմել է 2%: Երևանում ներգրավված միջոցները կրկնակի գերազանցում են վարկային ներդրումները, սակայն մարզերի գերակշիռ մասում պատկերը հակառակն է՝ վարկերը գերազանցում են ներգրավված ավանդները մի քանի անգամ: Այս առումով, «դոնոր» են միայն Երևանը, Շիրակի մարզը և աննշան չափով՝ ԼՂՀ-ն (չնայած ինչպես արդեն նշվել է, համախառն վարկերի գերակշիռ մասը նույնպես տրամադրվում է Երևանում): Խոշոր «ընդունող» մարզեր են Լոռու, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի մարզերը, որոնք, ըստ վարկային ներդրումներում մասնաբաժինների, զբաղեցնում են, համապատասխանաբար՝ 2 - 4 տեղերը:



Եթե համեմատենք ներգրավված միջոցներն ու վարկային ներդրումները՝ բացառելով միջազգային ծրագրերով վարկերը, ապա «դոնոր» մարզերի թիվը հասնում է 4-ի, որոնցից խոշորներն են Երևանը և Արմավիրի մարզը, իսկ ամենախոշոր «ընդունող» մարզերն են Լոռու և Արարատի մարզերը:


01.10.2000 թ. համեմատ իրենց «դիրքերն» են փոխել Վայոց ձորի մարզը՝ «դոնորից» վերածվելով «ընդունողի» և Շիրակի մարզը, որն «ընդունողից» դարձել է «դոնոր»:



Մեկ մասնաճյուղին[8] բաժին ընկնող (աղյուսակ 3.1) ներգրավված և վարկային միջոցների ծավալները բանկային համակարգի համար կազմում են, համապատասխանաբար՝ 407 և 316 (01.10.2000թ.՝ 372 և 366) մլն դրամ: Ներգրավված միջոցների տեսանկյունից, ընդհանուր համակարգի ցուցանիշը գերազանցում է միայն Երևանը, իսկ վարկային ներդրումների՝ Երևանը, Արարատի, Լոռու մարզերը: Այս տեսանկյունից ամենացածր մակարդակը Վայոց ձորի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերում է: Մարզերի միջև մասնաճյուղերի բաշխվածությունը տրված է հավելված 1-ում:

Մեկ շնչին[9] բաժին ընկնող ֆիզիկական անձանց միջոցների չափն ընդհանուր բանկային համակարգի համար կազմում է 12614 դրամ (01.10.2000 թ.՝ 8726 դրամ): Այս ցուցանիշը զգալիորեն գերազանցում է Երևանը, այնուհետև՝ ԼՂՀ-ն, Շիրակի և Սյունիքի մարզերը, մինչդեռ Կոտայքի մարզը, նախորդ ժամանակաշրջանի համեմատ, բավականին զիջել է դիրքերը: Ֆիզիկական անձանց ակտիվությամբ շարունակում է պասիվ դիրք գրավել Գեղարքունիքի մարզը (աղյուսակ 3.1):

[8] *Գլխամասային գրասենյակները նույնպես դիտվել են որպես մասնաճյուղ:*
[9] *Ըստ մարզերի՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները հիմնված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած պաշտոնական տվյալների վրա՝ 01.10.2001թ.:*



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

01.01.2002 թ. դրությամբ 21 առևտրային բանկերի կողմից իրական հատվածին տրամադրված վարկավորման ծավալները 01.10.2000 թ. համեմատ աճել են: Վարկային ներդրումները զգալի աճել են հատկապես Լոռու մարզում. հատկացվել են հիմնականում քիմիական արդյունաբերությանը: Մյուս մարզերը շարունակում են շատ քիչ օգտվել բանկային վարկերից:

2000 թ. վերջի համեմատ վարկային ներդրումներն ավելի մեծ ծավալներով են տեղաբաշխվել արդյունաբերության քիմիական, մետալուրգիական, մեքենաշինության, շինանյութերի ենթաճյուղերում և առևտրի ոլորտում, միևնույն ժամանակ էականորեն կրճատվել են էներգետիկային տրված վարկերը:

Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, ինչպես նաև արդյունաբերության ենթաճյուղերում, մարզերի միջև վարկերի բաշխվածությունը շարունակում է կենտրոնացված մնալ առանձին մարզերում և մեծամասամբ՝ Երևանում: Մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են բաշխված վարկերը՝ ուղղված սննդի արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը:

Ըստ տնտեսության ճյուղերի միջև վարկային ներդրումների բաշխվածության՝ մարզերը բաժանվում են 2 խմբի՝ խիստ կենտրոնացված (Լոռու, Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզեր՝ արդյունաբերության, Արմավիրի, Արագածոտնի մարզեր՝ գյուղատնտեսության ոլորտում) և համեմատաբար հավասարաչափ բաշխված:

Վայոց ձորի մարզում և ԼՂՀ-ում վարկային ծավալների մեծամասնությունն ուղղված է միջին և փոքր բիզնեսի, մյուսներում՝ խոշոր բիզնեսի վարկավորմանը:

Մարզերի մեծամասնությունում միջազգային ծրագրերով վարկերը շարունակում են նշանակալի տեղ զբաղեցնել մարզի ընդհանուր վարկային ներդրումներում (մոտ 20-50%), իսկ երեք մարզում (Արարատի, Արագածոտնի մարզեր) դրանք գերակշռում են:

Հանրապետության գրեթե բոլոր մարզերում զգալի աճել են տնային տնտեսություններից ներգրավված և նվազել՝ տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված ավանդների ծավալները: Երևանում և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց ավանդների ծավալներն էապես աճել են: Ներգրավված ավանդների կեսից ավելին ժամկետային են:

Մի քանի մարզերում ցպահանջ ավանդների ծավալներն աննշան են, ինչը վկայում է, որ բանկերը գրեթե չեն սպասարկում տնտեսավարող սուբյեկտների և տնային տնտեսությունների ընթացիկ գործունեությունը:

Մարզերի գերակշռող մասում վարկային միջոցները գերազանցում են ներգրավված միջոցները, Երևանում և ընդհանուր համակարգում՝ հակառակը: Ֆինանսական միջոցների ներգրավման տեսանկյունից, ամենաակտիվ շրջաններն են Երևանը և ԼՂՀ-ն, ինչպես նաև Շիրակի մարզը, որոնք «դոնոր» են մյուս մարզերի համար:


Մեկ շնչին բաժին ընկնող ֆիզիկական անձանց ավանդների գծով նույնպես առավել ակտիվ են Երևանն ու ԼՂՀ-ը, որոնց զգալի տարբերությամբ հաջորդում են Շիրակի և Սյունիքի մարզերը:

ՀՀ տարածքում տեղաբաշխված վարկային ներդրումների ծավալները

(հազար դրամ)

	01.10.2000	01.01.2002	աճ	աճ (%)
1. Ըստ ճյուղերի տրված վարկեր				
1.1 արդյունաբերություն, այդ թվում՝	29236	31561	2326	8
լեռնահանքային	18	195	177	1009
էներգետիկա	14328	8546	-5782	-40
սննդի	6624	6694	69	1
թեթև	1393	1525	132	10
քիմիական	4711	10275	5564	118
շինանյութերի	198	356	158	80
թանկարժեք իրեր	199	348	149	75
մետալուրգիա	432	1164	732	169
մեքենաշին. և էլեկտրատեխնիկ.	656	1559	904	138
այլ	677	900	222	33
1.2 գյուղատնտեսություն	5577	6913	1335	24
1.3 շինարարություն	1728	2467	739	43
1.4 տրանսպորտ և կապ	1196	1888	692	58
1.5 առևտուր	7220	12066	4846	67
1.6 ֆինանսական հատված	5987	5038	-949	-16
1.7 ծառայություններ	0	590	590	-
1.8 սպառողական վարկեր	9025	9856	832	9
1.9 այլ ճյուղեր	8435	5824	-2611	-31
2. Ընդամենը վարկային ներդրումներ, այդ թվում	**68404**	**76204**	**7800**	**11**
2.1. ժամկետանց	6569	4834	-1736	-26
2.2. Միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	11779	15059	3279	28
2.3. Փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	13962	20069	6106	44

ՀՀ տարածքում գործող 21 բանկերի գլխամասային գրասենյակները և դրանց մասնաճյուղերն ըստ մարզերի



Հավելված 2

Վերլուծության մեջ ներառված բանկերի ցանկը

	01.10.2000 գործող	01.01.2002 գործող	Վերլուծության մեջ ընդգրկված
1	ԱԿՈՒՆՔ	ԱԿՈՒՆՔ	x
2	ԱԴԱՆԱ	ԱԴԱՆԱ	ԱԴԱՆԱ
3	ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ	ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ	ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ
4	ԱՆԵԼԻՔ	ԱՆԵԼԻՔ	ԱՆԵԼԻՔ
5	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ
6	ԳԼԱՁՈՐ	ԳԼԱՁՈՐ	ԳԼԱՁՈՐ
7	ԱԳՐՈԲԱՆԿ	ԱԳՐՈԲԱՆԿ	ԱԳՐՈԲԱՆԿ
8	ՄԻԱՎՈՐՎԱԾ	ՄԻԱՎՈՐՎԱԾ	x
9	ՀԱՅԿԱՊ	ՀԱՅԿԱՊ	x
10	ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ	ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ	ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ
11	ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ	ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ	ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿ
12	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ
13	ՊՐՈՄԵԹԵՅ	ՊՐՈՄԵԹԵՅ	ՊՐՈՄԵԹԵՅ
14	ՄԻՋ.ԻՆՎ.ԲԱՆԿ	ՄԻՋ.ԻՆՎ.ԲԱՆԿ	ՄԻՋ.ԻՆՎ.ԲԱՆԿ
15	ԶԱՐԳ.ՀԱՅԿ.ԲԱՆԿ	ԶԱՐԳ.ՀԱՅԿ.ԲԱՆԿ	ԶԱՐԳ.ՀԱՅԿ.ԲԱՆԿ
16	ԼԵՆԴ	ԼԵՆԴ	x
17	ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ	ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ	x
18	ԿՈՆՎԵՐՍ	ԿՈՆՎԵՐՍ	ԿՈՆՎԵՐՍ
19	ՌԻԱ	ՌԻԱ	x
20	ԻՆԵԿՈ	ԻՆԵԿՈ	ԻՆԵԿՈ
21	ՄԵԼԼԱԹ	ՄԵԼԼԱԹ	ՄԵԼԼԱԹ
22	ԿՐԵԴԻՏ-ՍԵՐՎԻՍ	ԿՐԵԴԻՏ-ՍԵՐՎԻՍ	x
23	ՄԵՆԱՏԵՊ-ԵՐԵՎԱՆ	«ԻԹԲ» ՄԻՋ.ԱՌ.ԲԱՆԿ	«ԻԹԲ» ՄԻՋ.ԱՌ.ԲԱՆԿ
24	HSBC-ՀԱՅԱՍՏԱՆ	HSBC-ՀԱՅԱՍՏԱՆ	HSBC-ՀԱՅԱՍՏԱՆ
25	ԳՅՈՒՂՓՈԽԲԱՆԿ	ԳՅՈՒՂՓՈԽԲԱՆԿ	ԳՅՈՒՂՓՈԽԲԱՆԿ
26	ԱՐՑԱԽԲԱՆԿ	ԱՐՑԱԽԲԱՆԿ	ԱՐՑԱԽԲԱՆԿ
27	ՇԻՐԱԿԻՆՎԵՍՏԲԱՆԿ	x	x
28	ՏՐԱՍՏ	ՏՐԱՍՏ	x
29	ԷԿՈՆՈՄԻՆՎԵՍՏԲԱՆԿ	x	x
30	ՄԻՋ.ԱՌ.ԲԱՆԿ	ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԲ	ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԲ
31	ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ	ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ	ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ
32	x	ՅՈՒՆԻԲԱՆԿ	x

Հայաստանի վճարային հաշվեկշիռը 2001 թվականին[1]

Կարինե Միքայելյան

(Դրամավարկային քաղաքականության վարչություն)

2001 թվականին, հիմնականում ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալների աճի արդյունքում, վերջին տարիներին առաջին անգամ՝ գրանցվել է համախառն ներքին արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի միանիշ ցուցանիշ (ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը՝ 9.5%): Ընդ որում, թեև տարվա ընթացքում նվազել են ընթացիկ տրանսֆերտները (պաշտոնական տրանսֆերտների նվազման հետևանքով), սակայն մյուս հոդվածներով գրանցված լավացումը՝ մասնավորապես առևտրի և ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի զգալի նվազումը, զուտ եկամուտների աճը ոչ միայն չեզոքացրեցին տրանսֆերտների ազդեցությունը, այլև նպաստեցին ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատմանը: Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում էականորեն նվազել են ուղղակի օտարերկրյա ներդրումները, իսկ ֆինանսական հաշվի մյուս հոդվածներով կտրուկ փոփոխություններ չեն գրանցվել:

Ընթացիկ հաշվի և կապիտալ ու ֆինանսական հաշվի (առանց պաշտոնական պահուստների) տարբերությունը՝ վճարային հաշվեկշռի ընդհանուր հաշվեկշիռը, 2001 թվականին դրական էր, ինչը նպաստել է ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվների աճին 12.4 մլն ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 1. 2000 – 2001 թթ. վճարային հաշվեկշռի հիմնական տարրերը (մլն ԱՄՆ դոլար)

	1.00	2.00	3.00	4.00	2000	1.01	2.01	3.01	4.01	2001
Ընթացիկ հաշիվ	**-90**	**-65**	**-48**	**-75**	**-278**	**-46**	**-50**	**-40**	**-65**	**-200**
Ապրանքներ	-113	-118	-99	-133	-464	-78	-102	-116	-124	-420
Արտահանում	61	87	74	88	310	79	87	86	101	353
Ներմուծում	-174	-204	-173	-221	-773	-157	-189	-202	-225	-773
Ծառայություններ	-14	-14	-10	-18	-56	-8	-3	5	-12	-18
Արտահանում	30	34	34	39	137	37	46	59	45	187
Ներմուծում	-44	-48	-44	-58	-193	-45	-49	-54	-57	-204
Եկամուտներ	1	14	20	18	53	10	19	18	17	64
Եկամուտ աշխատուժից	17	18	23	19	77	13	20	21	19	73
Եկամուտ ներդրումներից	-15	-4	-3	-2	-24	-2	-1	-3	-2	-9
Տրանսֆերտներ	36	52	41	59	188	29	36	54	54	174
Պետական	19	32	17	35	103	12	14	26	20	72
Մասնավոր	17	20	24	24	86	17	23	28	34	102
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	**72**	**76**	**54**	**93**	**295**	**35**	**42**	**47**	**78**	**201**
Կապիտալի հաշիվ	7	5	5	11	28	3	7	16	4	30
Ֆինանսական հաշիվ	65	71	49	81	267	32	35	31	73	171
Ուղղակի ներդրումներ	45	36	20	3	104	38	9	11	12	70
Պորտֆելային ներդրումներ	0	-1	-1	-17	-19	1	-2	-1	-4	-6
Այլ ներդրումներ	20	36	29	96	182	-7	28	21	66	107
Ակտիվներ	-30	-3	-14	37	-9	-24	21	-14	-1	-18
Կառավարություն	-25	2	6	27	11	-14	23	1	4	13
Բանկեր	-8	4	-21	10	-14	-3	-3	-7	-7	-20
Այլ հատվածներ	3	-10	1	0	-7	-7	1	-7	2	-11
Պարտավորություններ	50	39	43	59	191	17	7	35	67	125
Կառավարություն	23	9	15	16	63	12	4	18	28	62
Բանկեր	9	-2	1	1	9	-3	-14	2	11	-4
Այլ հատվածներ	18	32	27	42	119	8	17	15	27	67
ԿԲ-ի ԶԱԱ-ի փոփոխություն	**8**	**2**	**-14**	**-29**	**-34**	**16**	**-1**	**-9**	**-18**	**-12**
Սխալներ և բացթողումներ	**9**	**-12**	**8**	**12**	**17**	**-4**	**9**	**2**	**5**	**12**

[1] *Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի տվյալների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է:*


ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ընթացիկ հաշվի պակասուրդը 2001 թվականին կազմել է 200.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 28%-ով, իսկ տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 9.5%: Ուսումնասիրելով նախկին ԽՍՀՄ հանրապետությունների[2] համանման ցուցանիշի դինամիկան, կարելի է նկատել, որ նշված երկրների մեծ մասում վերջին մի քանի տարիներին արձանագրվել է ընթացիկ հաշվի պակասուրդի նվազման միտում, ինչը վկայում է արտահանման և ներմուծման փոխարինիչների արտադրության ավելացման մասին: Վերջինիս ինչպես Հայաստանում, այնպես էլ այս երկրներում նպաստել են նաև վերջին տարիներին իրականացված ուղղակի ներդրումները (տե՛ս աղյուսակ 12):

Աղյուսակ 2. Ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում (%)

	1996	1997	1998	1999	2000	2001
Աղրբեջան	-29.3	-23.1	-30.7	-13.2	-3.2	-0.9
Էստոնիա	-9.1	-12.2	-9.2	-5.7	-6.3	-6.5
Լատվիա	-5.4	-6.1	-10.7	-9.9	-7.0	-10.1
Լիտվա	-9.2	-10.2	-12.1	-11.2	-6.0	-4.8
Հայաստան	-18.2	-18.7	-21.3	-16.6	-14.5	-9.5
Ղազախստան	-3.7	-3.8	-5.8	-1.0	2.2	-7.9
Ղրղզստան	-23.6	-7.8	-22.3	-15.0	-5.8	-1.2
Մոլդովա	-11.5	-14.2	-19.7	-5.6	-9.0	-8.0
Ռուսաստան	2.8	0.5	0.2	13.4	18.5	11.3
Վրաստան	-9.8	-14.2	-14.1	-6.8	-8.6	-6.6
Ուկրաինա	-2.7	-2.7	-3.1	5.4	4.7	3.7
Միջին	-10.9	-10.2	-13.5	-6.0	-3.2	-4.0

Գրաֆիկ 1. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2001 թվականին կազմել է 1126.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով ընդամենը 4%-ով: Ապրանքների արտահանումը (կրեդիտ) աճել է 13.9%-ով, իսկ ներմուծումը (դեբետ) գրեթե մնացել է անփոփոխ: Առևտրի հաշվեկշիռը կազմել է 420.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.3%-ով:

[2] Նշված երկրների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ԱՄՀ-ի IFS պարբերական բյուլետենից և կենտրոնական բանկերի INTERNET-ի տնային էջերից:

Աղյուսակ 3. Արտաքին առևտուրը՝ նախորդ տարվա համեմատ

Ցուցանիշներ	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում փոփոխություններ, պայմանավորված՝	
		ֆիզիկական ծավալների փոփոխ.	գների փոփոխ.[3]
Ապրանքների արտահանում (FOB)	+ 13.9	+ 14.9	- 1.0
Ապրանքների ներմուծում (CIF)	- 0.01	+ 2.6	- 2.6
Արտաքին ապրանքաշրջանառություն[4]	+ 13.9	+ 17.5	- 3.6
Առևտրային հաշվեկշիռ[4]	10.7	+ 12.3	- 1.6

Արտահանման գները նվազել են 1.0%-ով, ինչը հիմնականում պայմանավորվել է «Թանկարժեք մետաղներ, քարեր և դրանցից պատրաստված իրեր» (տեսակարար կշիռը՝ մոտ 36%) ապրանքախմբի գնի 3.3 տոկոսով, «Ոչ թանկարժեք քարեր մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (տեսակարար կշիռը՝ 12.7%) ապրանքախմբի գների 4.1 տոկոսով նվազմամբ: Արտահանման կառուցվածքում միայն «Գյուղատնտեսական ապրանքներ» (տեսակարար կշիռը՝ 14.9%) ապրանքախմբի գներն են 2000-2001 թվականներին ունեցել կայուն աճի միտում: Ընդ որում, աճել են նաև ապրանքախմբի արտահանման ծավալները, ինչը, թերևս, վկայում է գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, անգամ գնի աճի պայմաններում, արտասահմանյան պահանջարկի ավելացման մասին:

Աղյուսակ 4. Արտահանման գնի և արժեքի փոփոխություն (%)

Ապրանքախմբեր	Արտահանման գնի փոփոխություն		Արտահանման արժեքի փոփոխություն	
	2000	2001	2000	2001
Ընդամենը	**0.8**	**-1.0**	**25.3**	**13.9**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն	-1.3	3.4	-0.4	71.1
Մանածագործական իրեր				
Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ				
Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր				
Թանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	0.3	-3.3	21.6	1.2
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ	0.2	-1.3	4.2	6.4
Հանքահումքային մթերքներ				
Քիմիական արտադրության ապրանքներ				
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր				
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից				
Ոչ թանկարժեք մետաղներ, քարեր և դրանցից պատրաստված իրեր	-1.4	-4.1	77.1	-1.7
Գյուղատնտեսական մթերքներ	6.0	3.6	68.3	71.2
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք				
Բուսական ծագման արտադրանք				
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր				
Պատրաստի սննդի արտադրանք				
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ	-0.4	-1.2	59.3	13.2
Մեքենաներ և սարքավորումներ				
Տրանսպորտային միջոցներ				
Սարքեր և ապարատներ				
Այլ ապրանքներ	-2.5	6.0	43.9	18.3
Փայտ և փայտյա իրեր				
Թուղթ և թղթյա իրեր				
Կահույք և խաղալիքներ				
Արվեստի ստեղծագործություններ				

[3] Արտահանման և ներմուծման գների հաշվարկը կատարվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:
[4] Հաշվարկված է՝ առանց հաշվի առնելու արտահանման և ներմուծման կշիռների տարբերությունը:

Ներմուծվող ապրանքատեսակների գները նվազել են 2.6 տոկոսով: Բացառություն են կազմել «Թանկարժեք քարեր մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (տեսակարար կշիռը՝ 12.2%) և «Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն» (տեսակարար կշիռը՝ 5.4%) ապրանքախմբերը: Արտահանման և ներմուծման գների նման դինամիկայի պայմաններում լավացել են ՀՀ արտաքին առևտրի պայմանները:[5]

Աղյուսակ 5. Ներմուծման գնի և արժեքի փոփոխություն (%)

Ապրանքախմբեր	Ներմուծման գնի փոփոխություն		Ներմուծման արժեքի փոփոխություն	
	2000	2001	2000	2001
Ընդամենը	***0.3***	***-2.6***	***7.2***	***0.0***
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն	1.5	1.5	12.6	21.2
Մանածագործական իրեր				
Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ				
Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից իրեր				
Թանկարժեք քարեր և մետաղներ	1.1	1.0	30.6	-5.7
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ	3.2	-2.9	4.4	-1.6
Հանքահումքային մթերքներ				
Քիմիական արտադրության ապրանքներ				
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից իրեր				
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից				
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	0.9	-2.1	2.3	48.1
Գյուղատնտեսական մթերքներ	-0.9	-5.2	3.7	-3.5
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք				
Բուսական ծագման արտադրանք				
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր				
Պատրաստի սննդի արտադրանք				
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ	-0.2	-3.6	12.4	-7.2
Մեքենաներ և սարքավորումներ				
Տրանսպորտային միջոցներ				
Սարքեր և ապարատներ				
Այլ ապրանքներ	-3.2	-6.1	13.7	6.1
Փայտ և փայտյա իրեր				
Թուղթ և թղթյա իրեր				
Կահույք և խաղալիքներ				
Արվեստի ստեղծագործություններ				

2001 թվականին նվազել է տնտեսության բացվածության[6] ցուցանիշը՝ կազմելով 70.1%, ընդ որում՝ նվազումը պայմանավորված է եղել անվանական արտահայտությամբ ՀՆԱ աճի համեմատ ապրանքաշրջանառության աճի ցածր տեմպերով: Ուսումնասիրությունները բացահայտում են, որ 2001 թվականին նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մի մասում բացվածության ցուցանիշը նվազել է նույն պատճառով: Բանն այն է, որ այդ երկրներում անվանական ՀՆԱ-ն աճել է ավելի արագ, քան ապրանքաշրջանառության աճն է, հետևաբար նվազել է դրանց հարաբերակցությունը:


[5] Արտաքին առևտրի պայմանները = արտահանման գների ինդեքս / ներմուծման գների ինդեքս:
[6] Բացվածության ցուցանիշը = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար x 100 / ՀՆԱ):

Աղյուսակ 6. Բացվածության ցուցանիշ (%)

Երկրներ	1996	1997	1998	1999	2000	2001
Ադրբեջան	80.8	82.1	77.2	70.2	78.5	78.7
Էստոնիա	145.5	168.0	170.0	158.7	195.3	187.6
Լատվիա	109.7	110.1	116.2	98.7	100.7	103.2
Լիտվա	116.5	119.6	106.2	89.8	96.7	106.3
Հայաստան	78.4	77.4	70.1	68.4	72.6	70.1
Ղազախստան	72.2	75.4	69.2	77.9	101.7	97.4
Ղրղզստան	88.5	84.4	93.6	100.6	89.8	73.6
Մոլդովա	128.5	129.1	119.2	119.2	125.4	124.5
Ռուսաստան	45.5	45.5	58.2	74.5	70.9	61.0
Վրաստան	41.6	54.3	67.7	55.9	60.6	65.5
Ուկրաինա	93.9	84.2	87.0	104.9	119.9	110.6
Միջին	91.0	93.6	94.1	92.6	101.1	98.0

Բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունների դիտարկումից նկատելի է, որ նախ՝ նշված գրեթե բոլոր երկրներում ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը գերազանցում է արտահանում/ՀՆԱ ցուցանիշը: Երկրորդ, երկրի բացվածությունը, այլ հավասար պայմաններում, որոշակի փոխկապվածության մեջ է երկրի զարգացման աստիճանից: Երրորդ՝ արտահանման և ներմուծման փոխկապվածությունը ցույց է տալիս, որ տնտեսապես առավել բաց երկրներում արտահանման աճը, հանգեցնելով եկամտի աճի, հետագայում նպաստում է ներմուծման նկատմամբ հակվածության աճի և կարող է պատճառ դառնալ ներմուծման ծավալների հետագա ավելացման: Արտահանում/ՀՆԱ հարաբերակցության մեկ միավորով աճը նախկին ԽՍՀՄ հանրապետություններում հանգեցրել է ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության մոտ 0.8 միավոր աճի:

Գրաֆիկ 2. Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները (միջին՝ 1995-2001թթ. համար) նախկին ԽՍՀՄ հանրապետություններում (%)




Արտահանում


Արտահանումը (կրեդիտ) 2001 թվականին կազմել է 353.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.9 %-ով (FOB գներով արտահանումը կազմել է 341.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա

համեմատ աճելով 13.8%-ով): Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի՝ արտահանումն աճել է 22.2%-ով՝ նախորդ տարվա 27.8% աճի փոխարեն:

Գրաֆիկ 3. «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Գրաֆիկ 4. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)



2001 թվականի ընթացքում նվազել է արտահանվող ապրանքների ապրանքային կոնցենտրացիայի[7] ցուցանիշը (տե՛ս աղյուսակ 7)՝ կազմելով 43.8%: Նվազման պատճառը արտահանման մեջ որոշ ապրանքախմբերի ծավալների աճն էր: Սակայն, չնայած ապրանքային կոնցենտրացիայի նվազմանը,

[7] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևով.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X}, \quad \text{որտեղ}$$


K-ն կոնցենտրացիայի գործակիցն է,
x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը,
X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

արտահանումը դեռևս մնում է խոցելի արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների ազդեցության նկատմամբ, քանի որ արտահանման մեջ 4 ապրանքախմբեր բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում՝ 74%: Դրանք են՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերը, որոնց տեսակարար կշիռն արտահանման մեջ համապատասխանաբար կազմել է 35.9%, 12.7%, 14.0% և 11.0%: Դրական երևույթ կարելի է համարել այն, որ տարվա ընթացքում շուրջ 20.7 մլն ԱՄՆ դոլարով աճել են «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալները, ինչի արդյունքում կտրուկ աճել է վերջինիս տեսակարար կշիռը արտահանման ծավալում: Նշված ապրանքախմբում հատկապես աճել են կոնյակի արտահանման ծավալները:

Աղյուսակ 7. Արտահանման ապրանքային և աշխարհագրական կոնցենտրացիա (%)

	1997	1998	1999	2000	2001	1997-2001թթ. միջին
Ապրանքային կոնցենտրացիա	39.9	39.6	49.0	47.2	43.8	43.9
Աշխարհագրական կոնցենտրացիա	40.1	35.7	43.5	35.3	32.5	37.5

Գրաֆիկ 5. Արտահանման կառուցվածքն ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)



2001 թվականին ԱՊՀ անդամ երկրներից ավելացել են Ռուսաստան (հիմնականում արտահանվում են՝ ոգելից խմիչքներ, արհեստական կաուչուկ) և Ուկրաինա (հիմնականում արտահանվում են՝ արհեստական կաուչուկ, սարքեր սարքավորումներ և այլն) արտահանվող ապրանքների ծավալները՝ համապատասխանաբար 15.9 և 7.7 մլն ԱՄՆ դոլարով: Նվազել է Եվրոմիության անդամ երկրներ արտահանման ծավալների մակարդակը: Ընդ որում, հատկապես նվազել են Բելգիա (հիմնականում արտահանվում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ) արտահանման ծավալները՝ 28.6 մլն ԱՄՆ դոլարով, փոխարենը 10 մլն ԱՄՆ դոլարով ավելացել է Մեծ Բրիտանիա (հիմնականում արտահանվում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ) կատարվող արտահանումը: 16.1 մլն ԱՄՆ դոլարով ավելացել են արտահանումները Իսրայել (հիմնականում արտահանվում են թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ) և 14.4 մլն ԱՄՆ դոլարով՝ ԱՄՆ (հիմնականում արտահանվում են՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ): Այստեղից կարելի է եզրահանգել, որ 2001 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման երկրների ցրվածությունը մեծացել է. եթե վերջինս նախկինում արտահանվում էր միայն Բելգիա, ապա այժմ՝ նաև հիմնականում Իսրայել, Մեծ Բրիտանիա և ԱՄՆ: Հայաստանից արտահանվող մյուս ապրանքախմբերից, ասենք՝ պատրաստի սննդամթերքի մեծ մասը արտահանվում է հիմնականում ԱՊՀ անդամ երկրներ, որի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում կոնյակի արտահանումը: Մյուս արտահանվող ապրանքախմբերն ավելի ցրված

վարքագիծ ունեն: Գործընկեր երկրների քանակի մեծացման հետևանքով նվազել է նաև արտահանման աշխարհագրական կոնցենտրացիայի ցուցանիշը[8], կազմելով 32.5%՝ նախորդ տարվա 35.3%-ի փոխարեն (տե՛ս աղյուսակ 7):

Ներմուծում

2001 թվականին ներմուծումը (դեբետ) կազմել է 773.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 773.4 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն (CIF գներով ներմուծումը՝ 877.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.9%-ով): Ներմուծման կառուցվածքում հիմնականում ավելացել են «Սարքեր ու ապարատներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Հանքահումքային մթերքներ» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալները, համապատասխանաբար՝ 14.6 մլն, 11.7 մլն, 10.2 մլն և 7.4 մլն ԱՄՆ դոլարով: Մյուս ապրանքախմբերի ներմուծման ծավալները նվազել են: Չնայած «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ներկրման ավելացմանը՝ վերջինիս աճի տեմպը կտրուկ նվազել է, իսկ տարվա ընթացքում գրանցված աճը հիմնականում հետևանք էր 2001 թվականին Քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարությունների առիթով ներմուծվող սննդամթերքի նկատմամբ պահանջարկի աճի: Ընդ որում, սննդամթերքի ծավալների ներմուծումը շատ ավելի քիչ էր կանխատեսվածից, ինչը վկայում է ներքին շուկայից, ներմուծման փոխարինիչների ավելացման արդյունքում, ներմուծվող որոշ սննդամթերքների աստիճանական դուրսմղման մասին: Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածության մակարդակն ավելի բարձր է: Ընդ որում, ներմուծման կառուցվածքում 10 տոկոսից բարձր տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբերը ամբողջ ներմուծման ծավալում կազմում են ընդամենը 43.7 տոկոս: Ներմուծման ցրվածության մասին է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր կոնցենտրացիայի ցուցանիշը, ինչը նախորդ տավա համեմատ նվազել է (տե՛ս աղյուսակ 8)՝ կազմելով 32%:

Աղյուսակ 8. Ներմուծման ապրանքային և աշխարհագրական կոնցենտրացիա (%)

	1997	1998	1999	2000	2001	1997-2001 թթ. միջին
Ապրանքային կոնցենտրացիա	33.6	33.0	32.3	33.1	32.0	32.8
Աշխարհագրական կոնցենտրացիա	33.4	31.8	31.7	29.5	30.5	31.4


Տարիների ընթացքում աճում է նաև ներմուծման աշխարհագրական ցանկը, ինչը հանգեցնում է ըստ երկրների ներմուծման ցրվածության աճի: Վերջինս դրական երևույթ է, քանի որ նպաստում է կոնցենտրացիայի ցուցանիշի նվազմանը, այսինքն՝ ապրանքախմբերի ներմուծումն ավելի քիչ կախվածության մեջ է այս կամ այն երկրում տեղի ունեցող ոչ բարենպաստ տնտեսական միջավայրի ազդեցությունից: Ներմուծման աշխարհագրական կոնցենտրացիայի ցուցանիշը, սակայն, աճել է նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 30.5% (նախորդ տարի՝ 29.5%) (տե՛ս աղյուսակ 8): Նշված աճի պատճառը հիմնականում Ռուսաստանից ներմուծվող ապրանքների տեսակարար կշռի աճն էր՝ պայմանավորված Ռուսաստանից զգալի քանակությամբ անմշակ ադամանդի ներմուծմամբ: Այդ է վկայում նաև 2001 թվականի ընթացքում ԱՊՀ անդամ երկրներից ներմուծման ծավալների աճը հատկապես Ռուսաստանից՝ 33.2 մլն ԱՄՆ դոլար (ներմուծվում են հիմնականում՝ բնական և հեղուկ գազ, անմշակ ադամանդ): Ավելացել է ներմուծումը նաև Ուկրաինայից (հիմնականում՝ ձավարեղեն, արևածաղկի սերմ և այլն)՝ 9.8 մլն ԱՄՆ դոլարով: Եվրոմիության անդամ երկրներից, հիմնականում (31.8 մլն ԱՄՆ դոլարով) ավելացել են Մեծ Բրիտանիայից ներկրվող ապրանքների ծավալները (ներմուծվում են հիմնականում՝ նավթ և նավթամթերք, շաքար):

[8] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևով.*


$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X}, \quad \text{որտեղ}$$

K-ն կոնցենտրացիայի գործակիցն է,
X_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

Գրաֆիկ 6. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)



Գրաֆիկ 7. Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)



Ուսումնասիրելով ապրանքային խմբերի ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման (BEC) դասակարգչի, որպես դրական երևույթ կարելի է նշել ապրանքների արտահանման կառուցվածքում «Սպառողական ապրանքների» և «Մթերքների ու խմիչքների» արտահանման ծավալների շուրջ 33.2 մլն ԱՄՆ դոլարով աճը (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Արտահանումն ու ներմուծումը՝ ըստ լայն տնտեսական դասակարգչի (առանց քաղաքացիների նախածեռնած առևտրի ծավալների)

	Ծավալը (մլն ԱՄՆ դոլար)				Տեսակարար կշիռը (%)			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2000	2001	2000	2001	2000	2001	2000	2001
Մթերք և խմիչք	26.2	46.1	175.2	157.0	8.9	13.7	20.9	18.7
Արդյունաբերական պաշարներ	189.8	198.9	254.3	267.2	64.5	59.2	30.3	31.9
Վառելիք և վառելանյութ	20.6	17.2	172.6	181.8	7.0	5.1	20.5	21.7
Կապիտալ ապրանքներ	28.4	28.5	97.7	86.1	9.7	8.5	11.6	10.3
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	1.4	4.1	21.6	18.8	0.5	1.2	2.6	2.2
Սպառողական ապրանքներ	27.7	41.0	118.7	126.5	9.4	12.2	14.1	15.1
Այլ ապրանքներ	0.0	0.0	0.1	0.1	0.0	0.0	0.01	0.01

Նվազել է ՀՆԱ-ից ներմուծման միջին հակվածության[9] ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված էր անվանական ՀՆԱ-ի (ԱՄՆ դոլարով) աճի տեմպի նկատմամբ ներմուծված ապրանքների ու ծառայությունների դանդաղ աճի տեմպով:


Աղյուսակ 10. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Երկրներ	1996	1997	1998	1999	2000	2001
Ադրբեջան	55.9	53.0	54.5	42.1	38.4	37.3
Էստոնիա	78.5	89.7	90.2	81.7	100.1	95.9
Լատվիա	58.9	59.3	64.9	54.6	54.7	57.4
Լիտվա	63.2	65.1	59.1	50.1	51.6	55.8
Հայաստան	55.4	57.3	51.6	48.5	49.8	45.2
Ղազախստան	37.6	39.0	37.1	38.4	47.1	50.2
Ղրղզստան	57.3	46.2	57.0	57.6	48.0	36.9
Մոլդովա	73.7	74.3	72.4	66.6	75.4	74.5
Ռուսաստան	20.7	21.4	26.8	28.6	24.9	24.1
Վրաստան	25.9	38.8	47.7	37.2	38.8	40.1
Ուկրաինա	48.2	43.6	45.0	49.5	57.4	54.5
Միջին	52.2	53.3	54.8	52.0	50.8	50.8

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Տարվա ընթացքում զգալի քանակական փոփոխություններ են գրանցվել նաև ծառայությունների ցուցանիշներում: Ինչպես և ակնկալվում էր, կտրուկ ավելացել է ծառայությունների արտահանումը, ինչի արդյունքում 2-րդ և 3-րդ եռամսյակներում առաջին անգամ նույնիսկ գերազանցել են ներմուծումը: Ծառայությունների արտահանումը կազմել է 186.5 մլն ԱՄՆ դոլար՝ 49.6 մլն ԱՄՆ դոլարով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Նման գերազանցումը հիմնականում պայմանավորված էր 2001 թվականին Հայաստանում Քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարությունների առիթով զբոսաշրջիկների զգալի ներհոսքով, որի արդյունքում արտահանվող ծառայություններն աճեցին 27.1 մլն ԱՄՆ դոլարով: Երկրորդ գործոնը՝ ապրանքների արտահանման աճով պայմանավորված՝ տրանսպորտային ծառայությունների աճն էր մոտ 7.2 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, տրանսպորտային ծառայությունների տեսակարար կշիռը արտահանվող ապրանքների ծավալում գրեթե մնացել է անփոփոխ՝ կազմելով 20.6%:


Գրաֆիկ 8. Արտահանվող ծառայությունների դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



[9] *Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը ցույց է տալիս, թե ՀՆԱ որ մասն է ուղղվում ապրանքների և ծառայությունների ներմուծմանը:*

Ներմուծվող ծառայություններն աճել են 11.6 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ կապի ծառայությունների աճը կազմել է 5.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ տրանսպորտային ծառայություններինը՝ 4.6 մլն ԱՄՆ դոլար: Ներմուծվող ծառայությունները կազմել են ապրանքների ներմուծման մոտ 26 տոկոսը, նախորդ տարվա մոտ 25 տոկոսի փոխարեն:

Գրաֆիկ 9. Ներմուծվող ծառայությունների դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)




Ինչպես և նախորդ տարիներին, ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները 2001 թվականին ունեցել են դրական մնացորդ՝ հանդիսանալով «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

«Եկամուտներ» (զուտ) հոդվածի ցուցանիշը կազմել է 63.5 մլն դոլար, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 10.6 մլն ԱՄՆ դոլարով: Նման վարքագիծը պայմանավորված էր, արտասահմանում ՀՀ ռեզիդենտների՝ ժամանակավոր կամ սեզոնային աշխատանքի դիմաց ստացված վաստակների համեմատաբար կայուն ցուցանիշի պայմաններում, ներդրումներից ստացված եկամուտների կտրուկ նվազմամբ: Տարվա ընթացքում ներդրումներից ստացված եկամուտը (զուտ) նվազել է 15.1 մլն ԱՄՆ դոլարով: Պատճառը օտարերկրյա ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում վերաներդրված շահույթի և ներդրումներից եկամտի կտրուկ նվազումն էր, ինչի վրա իր ազդեցությունն են ունեցել տնտեսությունում շահութաբերության անկման դրսևորումները:

Գրաֆիկ 10. Եկամուտների հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ


Ընթացիկ տրանսֆերտները կազմել են 174 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 14.1 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, ընթացիկ տրանսֆերտների նման անկումը գրանցվել է մասնավոր տրանսֆերտների 16.5 մլն ԱՄՆ դոլարով աճի պայմաններում: Պետական հատվածին տրված տրանսֆերտների շուրջ 30.6 մլն ԱՄՆ դոլարով նվազումը հիմնականում պայմանավորված էր մարդասիրական օգնության ճանապարհով ստացվող ապրանքների զգալի նվազմամբ: 2001 թվականին մարդասիրական օգնությունը կազմել է 45.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 75.6 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Այն ստացվել է աշխարհի 37 երկրներից, հիմնականում՝ ԱՄՆ-ից (ընդհանուր օգնության 59%-ը), Իտալիայից (12.4%-ը), Սիրիայից (7.8%-ը), Ճապոնիայից (5.8%-ը) և այլ երկրներից (15%):

Ընթացիկ տրանսֆերտները ֆինանսավորել են առևտրի և ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի շուրջ 39.7%-ը՝ նախորդ տարվա 36.2%-ի փոխարեն:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի նվազմանը զուգընթաց, կրճատվել է նաև կապիտալ ու ֆինանսական հաշիվը: Ընդ որում՝ մի կողմից աճել են արտաքին աշխարհի նկատմամբ ֆինանսական ակտիվները, իսկ մյուս կողմից՝ նվազել ներգրավված պարտավորությունները: Արդյունքում՝ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշիվը (զուտ, առանց ԿԲ զուտ արտաքին ակտիվների փոփոխության) կազմել է 201.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 295.4 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

Գրաֆիկ 11. Կապիտալի և ֆինանսական հաշվի տարրերի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալ հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 30.1 մլն ԱՄՆ դոլար: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1.8 մլն ԱՄՆ դոլարով: Կապիտալ տրանսֆերտների 11.3 մլն ԱՄՆ դոլարը Լինսի հիմնադրամի կողմից Հայաստանին տրված անհատույց ֆինանսական միջոցներն են, որոնց նպատակը մայրուղիների շինարարության ու բարեկարգման աշխատանքների իրականացումն է ինչպես Երևանում, այնպես էլ աղետի գոտում ու այլ շրջաններում: Նշված միջոցների հոսքը սկսվել է 2001 թվականի մայիսից և շարունակվելու է մինչև 2003 թվականի հոկտեմբեր ամիսը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Ֆինանսական հաշվի հիմնական հոդվածներից՝ ուղղակի ներդրումները տարվա ընթացքում զգալիորեն նվազել են, իսկ պետական հատվածի կողմից ներգրավված վարկային միջոցները՝ ավելացել:


Աղյուսակ 11. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (մլն ԱՄՆ դոլար)

	1998		1999		2000		2001	
	ծավալ	տես. կշիռ (%)	ծավալ	տես. կշիռ (%)	ծավալ	տես. կշիռ (%)	ծավալ	տես. կշիռ (%)
Ուղղակի ներդրումներ (զուտ)	220.8	56.7	122.0	43.3	104.2	44.7	69.9	44.0
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	-15.9	-4.1	1.6	0.6	-18.9	-8.1	-5.7	-3.6
Այլ ներդրումներ (զուտ)	236.8	60.8	178.8	63.4	166.9	71.6	114.4	72.0
Պահուստային ակտիվների փոփոխություն	-52.5	-13.5	-20.6	-7.3	-19.2	-8.2	-19.7	-12.4
Ընդամենը	389.2	100.0	281.9	100.0	233.0	100.0	158.9	100.0

Ուղղակի ներդրումներ

2001 թվականին ուղղակի ներդրումները, նախորդ տարվա համեմատ, նվազել են 34.3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 69.9 մլն ԱՄՆ դոլար: Նվազել են ինչպես վերաներդրումից ստացված շահույթը, այնպես էլ բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները: Այսպես, վերաներդրված շահույթը կազմել է ընդամենը 3.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 22 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Նշվածը հիմնականում պատճառ էր այն բանի, որ թեև աճել է տարիների ընթացքում կատարված ուղղակի ներդրումների ծավալը, սակայն տնտեսությունում շահութաբերության անկման պատճառով նվազել է ձեռնարկությունների շահույթը և, հետևաբար, վերաներդրված շահույթը: Բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները նվազել են 7.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 60.8 մլն ԱՄՆ դոլար: Նվազել են սեփականաշնորհվող ձեռնարկություններում կատարվող ուղղակի ներդրումները, ինչը հիմնականում նման ձեռնարկությունների թվի կրճատման արդյունք է: Ուղղակի ներդրումների նվազման հանգամանքը կարելի է բացատրել նաև երկու կարևորագույն գործոնով: Նախ, արդեն 2001 թվականի առաջին կիսամյակում Հայռուսգազարդ ձեռնարկության կողմից դեռևս 1998 թվականից իրականացվող ներդրումների ավարտով և Արմենթելի կողմից ներդրումներ իրականացնելու պայմանագրային պարտավորությունների թերակատարմամբ: Բանկային համակարգում տարվա ընթացքում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 7.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Բանկերի կողմից օտարերկրյա կապիտալի ներգրավումը պայմանավորված է նաև 2005 թվականի հուլիսի 1-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի նորմատիվի խստացմամբ (մինչև 5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ): Տարվա ընթացքում իրական հատվածում կատարված ուղղակի ներդրումների շուրջ 62%-ը կատարվել է Ռուսաստանի, Հունաստանի և ԱՄՆ-ի կողմից, հիմնականում՝ կապի, էլեկտրաէներգետիկայի, գազի և ջրամատակարարման, սննդի, հյութերի արտադրության և առևտրի բնագավառներում: Որպես դրական երևույթ կարելի է գնահատել մասնավոր հատվածի ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումների աճը:

Գրաֆիկ 12. Ուղղակի ներդրումների դինամիկա (մլն ԱՄՆ դոլար)




Հայաստանում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում համախառն ներքին արդյունք/ուղղակի ներդրումներ հարաբերակցության ցուցանիշի դինամիկան ցույց է տալիս, որ երկրների մեծ մասում, այդ թվում նաև Հայաստանում, նշված հարաբերակցությունը աստիճանական անկում է ապրում: Ընդ որում, նկատելի է, որ ուղղակի ներդրումները բացարձակ ծավալով ևս նվազում են: Ուղղակի ներդրումների նշված վարքագիծն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

Աղյուսակ 12. Ուղղակի ներդրումներ / ՀՆԱ (%)

Երկրներ	1996	1997	1998	1999	2000	2001
Ադրբեջան	19.7	28.1	23.0	11.2	2.4	4.0
Էստոնիա	2.5	2.8	11.0	4.3	6.4	6.5
Լատվիա	7.4	9.1	5.0	5.0	5.6	2.6
Լիտվա	1.9	3.4	8.6	4.5	3.3	1.5
Հայաստան	1.1	3.2	11.7	6.6	5.4	3.3
Ղազախստան	5.7	6.2	5.4	9.0	6.7	12.5
Ղրղզստան	2.6	4.7	5.3	3.1	-0.5	-0.1
Մոլդովա	1.4	4.1	4.4	3.4	11.1	6.3
Ռուսաստան	0.4	0.4	0.5	0.6	-0.2	0.0
Ուկրաինա	1.2	1.2	1.8	1.6	1.9	2.0
Միջին	4.4	6.3	7.7	4.9	4.2	3.9

Գրաֆիկ 13. Բնակչության 1 շնչին բաժին ընկնող օտարերկրյա ուղղակի ներդրումները 1995-2001 թթ. (կուտակային, ԱՄՆ դոլար)




Օբյեկտիվ պատճառներից կարելի է նշել այդ երկրների մեծ մասում վերջին տարիներին միանգամից իրականացված մեծածավալ ուղղակի ներդրումներից հետո, դրանց աճի տեմպերի նվազումը: Ընդ որում, ուղղակի ներդրումների մեծածավալ ներհոսքը կապված էր նաև այս երկրներում իրականացվող սեփականաշնորհման գործընթացի հետ: Բանն այն է, որ սեփականաշնորհվեցին խոշոր պետական ձեռնարկություններ, որոնց քանակը սահմանափակ էր, և նշված գործընթացում իրականացվող ուղղակի ներդրումները աստիճանաբար նվազեցին:

Բնակչության 1 շնչին բաժին ընկնող ուղղակի ներդրումների մակարդակը բարձր է աշխարհագրական առումով բարենպաստ և բնական ռեսուրսներով հարուստ երկրներում: Հայաստանում ներդրողների համար հատկապես հետաքրքրություն են ներկայացնում բարձրորակ և էժան աշխատուժն ու մի քանի սահմանափակ ոլորտներ, որտեղ հիմնականում ցածր են տրանսպորտային ծախսերը:

Պորտֆելային ներդրումներ

Պորտֆելային ներդրումները տարիների ընթացքում դրսևորել են անկանոն վարքագիծ և աչքի չեն ընկել մեծ ծավալներով: Վերջինիս պատճառներից մեկը կարելի է համարել այն, որ օտարերկրյա ներդրողներն ավելի հակված են կամ նոր ձեռնարկություններ հիմնել, կամ էլ՝ առկա ձեռնարկություններում գերակշիռ տեսակարար կշիռ ունենալ: Դա պայմանավորված է նաև Հայաստանում կապիտալի շուկայի թերզարգացածությամբ: Նման պայմաններում պորտֆելային ներդրումները հիմնականում ձևավորվում են ոչ ռեզիդենտների կողմից Կառավարության թողարկած պետական գանձապետական պարտատոմսերի ձեռքբերումից և մի քանի բանկերի կողմից իրենց պորտֆելի բազմազանեցման նպատակով ոչ ռեզիդենտներից արժեթղթերի գնման գործառնություններից: 2001 թվականին ոչ ռեզիդենտները ձեռք են բերել ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական գանձապետական պարտատոմսերի ընդհանուր ծավալի մոտ 11 տոկոսը, ընդ որում՝ վերջինիս դինամիկան տարվա ընթացքում ունեցել է նվազման միտում: Բանկերի ակտիվներում ոչ ռեզիդենտներից ներգրաված պորտֆելային ներդրումների աճը կազմել է 5.2 մլն ԱՄՆ դոլար: 2001թ. ֆինանսական հաշվի «Պորտֆելային ներդրումներ» հոդվածի ցուցանիշը կազմել է -5.7 մլն ԱՄՆ դոլար:

Գրաֆիկ 14. Ոչ ռեզիդենտների կողմից տնօրինվող ՀՀ ՊՊ ծավալները (մլն դրամ) և եկամտաբերությունը (%)



Այլ ներդրումներ

Վճարային հաշվեկշռի մեթոդաբանության համաձայն՝ «Այլ ներդրումներին» են դասվում այն ֆինանսական հոսքերը, որոնք ֆինանսական հաշվի ուղղակի և պորտֆելային ներդրումներում ներառված չեն: Դրանք դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ֆինանսական գործիքների՝ առևտրային վարկեր, բանկային վարկեր և փոխառություններ, կանխիկ արտարժույթ և ավանդներ, այլ ակտիվներ ու պարտավորություններ:

Թեև «Այլ ներդրումներ» հոդվածի ցուցանիշը տարվա ընթացքում նվազել է ավելի քան 52.5 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 114.4 մլն ԱՄՆ դոլար, սակայն այն շարունակել է մնալ ընթացիկ հաշվի բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը: 2001 թվականին այս հոդվածում ՀՀ ռեզիդենտների ակտիվները արտաքին աշխարհի նկատմամբ աճել են 8.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ նվազել 43.7 մլն ԱՄՆ դոլարով (նշված ցուցանիշները նախորդ տարվա ընթացքում աճել էին համապատասխանաբար 12.5 և 0.5 տոկոսով): Նշված դինամիկան, ըստ հատվածների, դրսևորել է հետևյալ վարքագիծը:

Պետական հատված

Արտաքին պետական վարկերի ստացման հետևանքով պետական հատվածի պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 87.6 մլն ԱՄՆ դոլարով (նախորդ տարի՝ 69.0 մլն ԱՄՆ դոլարով): Վար-

կերի 63.2%-ը ստացվել են Համաշխարհային բանկից, 3.6%-ը՝ Եվրոպական բանկից, 21%-ը՝ երկկողմանի վարկատուներից և 12.2%-ը՝ այլ վարկատուներից: Տարվա ընթացքում մարվել է 23.3 մլն ԱՄՆ դոլարի վարկ (նախորդ տարի՝ 24.8 մլն ԱՄՆ դոլարի): Արդյունքում՝ պետական հատվածի պարտավորությունները (զուտ) աճել են 44.3 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 64.2 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

Առևտրային բանկեր

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվներն[10] աճել են 28.6 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, ակտիվներն աճել են 24.9 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ նվազել 3.7 մլն ԱՄՆ դոլարով: Շուրջ 20.1 մլն դոլարով աճել են ռեզիդենտների ցպահանջ ավանդները առևտրային բանկերում, ինչը զուգակցվել է արտասահմանյան բանկերի նկատմամբ առևտրային բանկերի պահանջների աճով: Տարվա ընթացքում զգալիորեն նվազել են արտասահմանյան բանկերի նկատմամբ առևտրային բանկերի պարտավորությունները (13.1 մլն ԱՄՆ դոլարով):

Այլ մասնավոր հատված

